«М А Т Е Н А Д А Р А Н»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

# МОВСЕС КАЛАНКАТУАЦИ

# ИСТОРИЯ СТРАНЫ АЛУАНК

Критический текст и предисловие
В. Д. АРАКЕЛЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Քննական բնագիրը և ներածությունը՝
ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1983

ՄԴԴ 63. 3 (2 Հ) 1
Մ 916

Տպագրվում է Մաշտոցի անվան մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրությամբ Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆԻ

**Մ 916** Մովսէս Կաղանկատուացի.
*Պատմութիւն Աղուանից աշխարհի/Քնն. բնագիրը և ներած. Վարագ Առաքելյանի, խմբ. Ս. Ա. Ավագյանի.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983—412 էջ.:*

*Նշանավոր պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը հայ պատմագրության ամենաարժեքավոր կոթողներից է, որը արժանահավատ ու կարևորագույն տեղեկություններ է պարունակում VII—X դարերի Հայաստանի, մասնավորապես նրա արևելյան նահանգների ու հարևան երկրների քաղաքական անցուդարձերի, սոցիալ-տնտեսական վիճակի և մշակույթի վերաբերյալ։*

*Ցայժմ Կաղանկատվացու պատմության բնագիրը գիտությանը հայտնի է եղել առանձին ձեռագրերի հիման վրա կատարված, մասամբ թերի հրատարակություններով։ Սույն բնագիրը, պատրաստված լինելով հնագույն և կարևոր ձեռագրերի բաղդատությամբ, հանդիսանում է պատմագրական այդ ուշագրավ հուշարձանի գիտական-քննական առավել ճշգրտված ու ամբողջական հրատարակությունը։*

0504020000
Մ ——————— 93—81
703 (02)—83

ԳՄԴ 63 . 3 (2 Հ) 1
9 (C 43) 1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983

# ԱՌԱՋԱԲԱՆ

## ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻՆ ԵՎ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ» ԵՐԿԸ

*Մովսես Կաղանկատվացու անունով մեզ հասած «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրքը իբրև մի ամբողջություն ձևավորվել ու վերջնական տեսքի է բերվել X դարի առաջին կեսերին, սակայն սկսել է գրվել VII դարից և հայ մատենագրությանը ծանոթ է VIII դարից։ Մաքենացիների վանքի վանահայր Սողոմոնը, որ գործել է VIII դարում, գիտեր այս գրքի մասին, այն հայտնի էր նաև IX դարում ապրած Մաշտոց կաթողիկոսին[1]։ X դարի առաջին քառորդում Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիրը օգտվել է Կաղանկատվացու գրքից, բայց նախորդների նման նա էլ ոչինչ չի հաղորդում իր աղբյուրի մասին։ Այս պատմական երկի մասին մեզ հայտնի առաջին ուղղակի վկայությունը պատկանում է Անանիա Մոկացի կաթողիկոսին (943—966), որն իր թղթերում հիշատակում է Կաղանկատվացու գիրքը[2], բայց թե սա և թե ժամանակակից պատմիչ Ուխտանեսը, որ օգտագործել է «Պատմութիւնը», հեղինակին չեն հիշատակում։ Մինչև իսկ XII դարի ժամանակագիր Սամվել Անեցին, որ ի շարս իր ձեռքի տակ եղած մատենագրական այլ աղբյուրների, թվարկում է նաև հիշյալ երկը, դարձյալ հեղինակի անունը չի նշում։ Այդպես նաև XIII դարավերջի հեղինակ Ստեփաննոս Օրբելյանը, լայնորեն օգտվելով Կաղանկատվացու երկից, դարձյալ ոչ մի խոսքով չի ակնարկում նրա հեղինակի մասին։*

*Առաջին մատենագիրը, որ հետաքրքրվում է «Աղուանից պատմութեան» հեղինակի հարցով, Մխիթար Գոշն է։ Նա լրացրել է Աղվանից կաթողիկոսների ցանկը՝ սկսած X դարի երկրորդ կեսից և հասցրել մինչև իր ժամանակը։ Գոշը «Պատմութեան» հեղինակ է համարում Մովսես Դասխուրանցուն, որ հիշատակվում է նաև Գոշի աշակերտ Վանական Վարդապետի կողմից։*

*Վերջին երեք պատմիչները XIII դարի հեղինակներ են և ժամանակով, միջավայրով ու գիտական հետաքրքրություններով սերտ կապի մեջ են եղել։ Նրանց հետ մերձավոր շփման մեջ է գտնվել նաև XIII դարի մատենագիր Վանական Վարդապետի աշակերտ Կիրակոս Գանձակեցին՝ հայ գրականությունը լավագույնս ուսումնասիրած մի մարդ, որն անտեսելով իր երկու ուսուցիչների ցուցումը «Աղուանից պատմութեան» հեղինակ Մովսես Դասխուրանցու մասին՝ այն անվերապահորեն վերագրում է մի այլ հեղինակի՝ Մովսես*

---

1 *Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1963, էջ 13։*

2 *«Արարատ», 1896, ապրիլ, էջ 233—235։*

Կաղանկատվացուն՝ այդ առթիվ չտալով ոչ մի բացատրություն։ Դժվար է ենթադրել, թե նա անտեղյակ էր Գոշի ու Վանականի վերագրմանը, ուստի անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ որևէ նշում չի անում իր կատարած անվանափոխության մասին։

Հավանական է մտածել, որ Գանձակեցին[3] Դասխուրանցին դարձրել է Կաղանկատվացի՝ հիմք ընդունելով «Աղուանից պատմութեան» երկրորդ գրքի 11-րդ գլխի այն հատվածը, որտեղ ինքը՝ պատմիչը, խոսելով Ուտի նահանգի Կաղանկատուք գյուղի տեղադրության մասին, ասում է. «...Որ է յանդիման գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ ի նմին յՈւտի գաւառի, յորմէ եւ ես»:

Այս ենթադրությունը, որ պատկանում է Ն. Ակինյանին, ճիշտ է[4]։

Մյուս կողմից Ակինյանը կարծում է նաև, որ հեղինակի Մովսէս անունը կարող էր վերցված լինել «Աղուանից աշխարհի պատմութեան» վերջում հիշատակված Տէր Մովսէս կաթողիկոսի անունից։ Այսպիսի ենթադրությունը այնքան էլ հավանական չէ։ Ավելի ստույգ կլիներ մակաբերել, որ Մխիթար Գոշը ճանաչել է «Աղուանից պատմութեան» շարունակությունը հորինող Մովսէս Դասխուրանցի անունով մեկին, իսկ հետագայում հիմնվելով երկրորդ գրքի 11-րդ գլխի վրա, նոր մականուն է տրվել հեղինակին՝ Կաղանկատուացի, անփոփոխ թողնվելով արդեն ավանդություն դարձած Մովսէս անունը։

Հայ մատենագրության հետագա հուշարձաններում իբրև «Աղուանից աշխարհի պատմութեան» հեղինակ է հիշատակվում միայն Մովսես Կաղանկատվացին (Գրիգոր Անավարզեցի, Վարդան Բաղիշեցի, Եսայի կաթողիկոս, Ղազար Ջահկեցի, Խաչատուր Ջուղայեցի և այլք)։

Հեղինակի անվան մասին խոսելիս՝ չենք կարող կրկին չանդրադառնալ երկրորդ գրքի 11-րդ գլխին, որի հիման վրա ստեղծվել է հեղինակի մականունը՝ Կաղանկատվացի:

Ակինյանը հիշյալ գլուխը առանց բավարար փաստարկների վերագրում է Վիրո կաթողիկոսին, ըստ այդմ ենթադրելով, որ այն հեղինակել է Վիրո (և ոչ Մովսէս) Կաղանկատվացին։ Ակինյանը նույնիսկ զարմանում է, որ Ք. Պատկանյանը, Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը այդ գլուխը անվերապահորեն վերագրում են Մովսեսին, մինչդեռ նրա համոզմամբ այն գրել է Վիրոն[5]։

Բնագրական մեր դիտարկումները գալիս են ժխտելու Ակինյանի այդ կարծիքը։ «Աղուանից պատմութեան» երկրորդ գրքի 15-րդ գլխում մի հատված կա, ուր խտացած գույներով նկարագրվում են Աղվանքում տիրող սովը, սովամահությունն ու համաճարակը։ Շարադրանքի մեջ իմիջիայլոց նշվում է. «Ես՝ Վիրոյ Աղուանից և Լփնաց և Չորայ կաթողիկոս թողում ասել զայլ ամենայն պէսպէս զազրելիս...»[6]։ Այս տողերը ակնհայտորեն ցույց են տալիս որ տվյալ հատվածի հեղինակը կամ լրացնողը Աղվանքի կաթողիկոս Վիրոն է։

Եվ արդարև, այդ գլուխը աչքի է ընկնում աստվածաշնչային բազմաթիվ

---

3 Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն հայոց*, Երևան, 1961, էջ 7։

4 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 29։

5 Նույն տեղում, էջ 23։

6 Տե՛ս Մ. Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, երկրորդ գիրք, գլուխ ԺԵ, աստ, էջ 164—166 (Մ. Կաղանկատվացու «Պատմութեան» սույն հրատարակությունից կատարված մեջբերումները այսուհետև ցույց են տրվում շարադրանքում մեջ բերված քաղվածքի վերջում աստ նշումով)։

*քաղվածքներով՝ համեմատություններով ու հաստատումներով։ Երեք էջից բաղկացած այդ հատվածում գտնում ենք աստվածաշնչային հետևյալ մեջբերումներն ու զուգադրումները. «Այլ օրինակ մերոցն փորձութեանց ոչ կարեմք գտանել, բայց միայն զաւերն Երուսաղէմի ի Վեսպիանոսէ և ի Տիտոսէ։ Եւ կատարէր բանն մարգարէական, եթէ «զթաղումն իշոյ թաղեսցի, և հաց սգոյ մի՛ բեկցի ի տան ձերում»։ Զի յայսմ ևս յայտնի լիցի բանն մարգարէական, եթէ՝ «ածից ի վերայ ամենայն հասակաց քարձ, և ի վերայ ամենայն գլխոց կնտութիւն, և արարից նմա իբրև սուգ սիրելւոյ»։ Ի լրացումն այս ամենի, ամբողջ նկարագրությունը համեմված է աղոթքի ու բարեխոսության մրրմունջներով և ավարտվում է հոգևոր հայրերին բնորոշ վերջաբանով. «Եւ գըթասցեալ են նոցա զխնդրուածս նոցա, առաքեսց զլիութիւն յանձինս նոցա, յագեցոյց զքաղցեալս և լի արար զկարօտեալս բարութեամբ, զի վայելեալք զայնս յաւելցեն ի փառաբանութիւն Աստուծոյ» (սոտ, էջ 164—166)։*

*Իսկ ոճը հանդիսավոր է, վերամբարձ, լրացուցիչ նախադասություններով շղթայավորված, դասական գրաբարի արտահայտություններով ճոխացված, հոմանիշներով հարուստ, համաձայնությամբ անթերի։ Այն շատ կարդացած. դասական հայերենին քաջածանոթ բարձր գրագիտության տեր մարդու մշակված ոճի տպավորություն է թողնում. «Պարտ և արժան է մեզ այսուհետև յիշել վասն ժամանակի նեղութեան սովոյն, զի եկն եհաս եռացոյց ի ներքոյ ոտից մերոց զմուկն ծախող և եկեր զամենայն բոյսս և սպառեաց զամենայն պտուղ անդաստանաց մերոց։ Ապա ի մի վայր գումարեալք սոսկալի զօրավարքն երեքին՝ սովն, և սուրն, և մահն՝ գործակիցք նոցա զոյգ ընթացեալք ի միմեանս խուճապէին, և յանխնայ վիրաւորէին և դիաթաւալ տարածանէին։ Եւ ոչ արժանի լեալ հաղորդութեան՝ յետին թոշակի քաւութեանն, զի արգելոյր սուրն, և խեղդէր սովն, և հեղձուցանէր մահն։ Ո՜հ դառնութեան ժամանակիս այսորիկ...» (սոտ, էջ 164)։*

*Դրան հակառակ, երկրորդ գրքի 11-րդ գլխի շարադրանքը ակներևաբար հիշեցնում է Փավստոս Բուզանդի պարզունակ, երկխոսություններով հարուստ, դիմումներով, կարճ հարց ու պատասխաններով լի, միջարկված արտահայտություններով զունազարդված ոճը։ Ամբողջ ութ էջի մեջ ոչ մի կրոնական բառ ու արտահայտություն, եթե չհաշվենք միակ աստվածաշնչական համեմատությունը՝ «Եւ ի գիշերի յայնմիկ անցին ամենեքեան, որպէս երբեմն եբրայեցիքն ընդ ծովն Կարմիր» (սոտ, էջ 137)։*

*Ահա մի օրինակ ևս նույն գլխի նախաբանից. «Սատրիկ ամբոխիւ ելին խազիրք՝ ասպատակել յաշխարհս մեր հրամանաւ Հերակլի։ Եւ պատգամաւորք առ նոսա խօսրովու՝ Պարսից արքայի. «Եթե դուք ո՞յր հրամանաւ եկիք յաշխարհս իմ, որ թափառական և փախստական շրջէր յերեսաց իմոց ի կըղզիս ծովուն արևմտից։ Ապա եթէ կարօտեցար դու ի նմանէ ոսկւոյ կամ արծաթոյ կամ ականց պատուականաց կամ ոսկեման մարգարտայեռ հանդերձից, բեհեզից և ծիրանեաց կարող էի ես առաքել կրկին քան զնա հաճել զմիտս քո։ Վասն որոյ ասեմ քեզ. մի կրկնել առ իս վասն դորին ունայն խնդրոյ, ապա եթէ ոչ, եղիցի կամք քո» (սոտ, էջ 133)։*

*Ուշադրության արժանի են այս հատվածի ժողովրդական խոսքի կապակցումն ու պարզունակությունը. չկա ամբողջական մշակվածություն, կտրատված է ու հատվածական, միջարկված է ժողովրդական լեզվամտածողությանը հատուկ ուղղակի խոսքերով։ Մինչդեռ Վիրոյին վերագրվող հատվածը ամ-*

քաղցական, կապակցված ու հմտորեն մշակված խոսք է՝ տրամաբանական կուռ հետևողությամբ, որ վարժ մտքի արդյունք է։

Այս ամենը ասում են, որ պետք է անընդունելի համարել Ակինյանի այն կարծիքը, թե երկրորդ գրքի 11-րդ գլուխը գրված է Վիրո կաթողիկոսի կողմից։ Այս գլուխը իսկապես գրել է պատմիչը, որին Կիրակոս Գանձակեցին կոչել է Մովսէս Կաղանկատուացի, և որը սկսած XIII դարից այս անուն-մականունով ճանաչվել է իբրև «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի հեղինակ։

Գիրք կազմողը աշխարհիկ ոճով է գրել. դա ապացուցվում է նրանում մեջբերված կրոնավորների նամակների և բնագրի պատմողական հատվածների միջև եղած ոճական տարբերություններով։ Նամակները աչքի են ընկնում իրենց խրատական կանոնիկ ոճով, համեմված են աստվածաշնչային արտահայտություններով, կրոնական սպառնալիքներով, անեծքներով ու աղոթքներով։ Օրինակ, առաջին գրքի 11-րդ ընդարձակ գլուխը՝ «Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ լի երկնաւոր շնորհօքն Աստուծոյ», ամբողջովին հագեցված է աստվածաշնչական քաղվածքներով, Քրիստոսի ու խաչի գովքով, աստվածային հրաշքների փառաբանությամբ, սուրբ երրորդության պաշտամունքի քարոզներով և այլն։ Իսկ այն, ինչ պատմվում է իբրև եղելություն, շարադրված է պարզ լեզվով՝ առանց կրոնական ու աստվածաշնչական խոսքերի պաճուճման։ «Քոյին իսկ աշխարհի հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցիքն չէն մնացին, վկայարանք ի խաղաղութեան, քահանայք ի քահանայութեան, պատարագք ի սեղանս, մարգարէք ի ընթերցուածս, առաքեալք ի մխիթարութիւնս, սաղմոսերգուք ի յօրհնութիւնս, կուսանք ի կուսութեան, կրօնաւորք ի սրբութեան և ամենայն ոք յիւրաքանչիւր կարգի»։ Եթե ցանկանանք աշխարհիկ խոսքի որևէ օրինակ բերել, դժվար թե կարողանանք ընտրել։

Մինչդեռ «Պատմութեան» այն հատվածները, ուր պատմիչը նկարագրում է պատմական իրադարձությունները, մեծ մասամբ զերծ են այդպիսի կրոնական համեմատություններից ու աստվածաշնչային դարձվածաբանությունից։ Հաջորդ՝ 12-րդ գլուխը սկսվում է այսպես. «Լինի զօրաժողով Տրդատէս մեծ թագաւորին Հայոց. և իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականաց սաստիկ պատերազմաւ։ Եւ զթագաւորն Բասլաց մարտակից իւր լեալ, որ ձգեալ զճոպան արւոյն Տրդատայ ոչ զօրեալ ընկճել զնա, ինքն լինի միջակտուր ի նմանէն»։

Ինչպես կարելի է նկատել, թե՛ նախորդ հատվածը, թե՛ այս վերջինը գեղեցիկ ու անսխալ հայերենով են գրված, և երկու դեպքում էլ զգացվում են բնական հայերենի անբռնազբոսիկությունը, հստակությունը, անկաշկանդությունը, մանավանդ գրաբարին հատուկ շարադասությունը, որը տվյալ հարցի պարզաբանման առնչությամբ շատ է կարևոր ու բնութագրական. միայն առաջինը կանոնիկ, կրոնական ոճով է գրված, երկրորդը՝ աշխարհիկ։

Գրաբարի «աշխարհականացումը» առավել ցայտուն է դառնում երկրորդ գրքում։ Առաջին և երկրորդ գրքերը, անկասկած, գրված են VII դարում, բայց չի բացառված, որ «Պատմութեան» X դարի լրացնողն ու խմբագրողը ճավելումներ և այլ փոփոխություններ կատարած լինի նաև նախորդ երկու գրքերի մեջ: Լեզվական ուսումնասիրությունը ըստ դարերի դժվարանում է, որովհետև տարբեր հեղինակների ու ժամանակների շարադրանքները խառնվել են միմյանց և հետազոտողին զրկել լեզուն ու ոճը ըստ դարերի քննելու հնարավորությունից։

«Պատմութիւն Աղուանից աշխարհի» հեղինակի ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ ևս տարբեր ու հակասական շատ կարծիքներ են հայտնվել։

Դեոևս Ս. Սոմալյանը, որի ձեռքի տակ միայն Կաղանկատվացու պատմությունից հատուկտորներ են եղել, 1829 թ. հայտնում է այն կարծիքը, թե Կաղանկատվացին VII դարի հեղինակ է[7]։ Սոմալյանից սույն տեղեկությունը բառացի քաղում է Ֆրիդրիխ Նոյմանը[8]։

1836 թ. հրատարակված «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»-ի առաջին հատորի տեղեկատու բաժնում ասված է. «Մովսեսի Կաղկանտացւոյ, կամ լաւ ես՝ Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից հայկազանց մինչև ի Ժ դար»[9]։ Ուրեմն հիշյալ աղբյուրը Կաղանկատվացու գիրքը համարում է գրված մինչև X դարը, բայց թե որ դարից է սկսվել, Բառգիրքը մատնացույց չի անում։

1836 թ. Ե. Բորեն էջմիածնում ծանոթանում է 1289 թ. գրված Կաղանկատվացու երկի ձեռագրին, որի հիմամբ 1846 թ. հրապարակած իր հոդվածում մեր պատմիչին համարում է VIII դարի հեղինակ, իսկ երրորդ գրքի 24-րդ գլխի վերջում զետեղված կաթողիկոսների շարքը՝ հետագա հավելում[10]։

1851 թ. նոր արտագրված ձեռագրի մի օրինակ ուներ ակադեմիկոս Մ. Բրոսեն և այն կարծիքին էր, թե Կաղանկատվացին X դարի հեղինակ է։ Իսկ էրնեստ Կունիկը ըստ այդ օրինակի ռուսների՝ Աղվանք մուտք գործելու տարին համարեց 944 թվականը[11]։

Մ. Կաղանկատվացու «Պատմութեան» ամբողջական բնագրի հրատարակությունը առաջաբանով ու ընդարձակ ծանոթագրություններով առաջին անգամ իրականացրել է Կ. Շահնազարյանը 1860 թ.։ Առաջաբանում աշխատասիրողը հայտնում է, որ հետազոտելով հիշյալ աղբյուրը, նրանում հավաստի ապացույցներ է գտել այն համոզման օգտին, որ Կաղանկատվացին ապրել է VII դարի սկզբում՝ Վիրո կաթողիկոսի օրոք, որի հետ էլ գնացել է խազիրների արքայորդի Շաթին ողջունելու։ Իբրև իր պնդումի ապացույց Շահնազարյանը բերում է առաջին գրքի 18-րդ գլխից այն հատվածը, որտեղ պատմելով մատնահատության աղանդի մասին, պատմիչը ասում է, թե **ինքը անձամբ տեսել է աղանդավորներին**: Իսկ Շաթին ողջունելու առիթով հիշում է, թե այնտեղ իրենք տեսել են պալատական ընդունարանի բազմոցները։ Նույն ձևով հեղինակը հավաստիացնում է, թե տեսել է նաև Ջվանշիրին նվիրված փիղը և արքայական թութակը։ Եվ քանի որ **Ջվանշիրը ապրել է VII դարի կեսերին, նրա ժամանակակից Կաղանկատվացին ևս պետք է ստեղծագործեր այդ ժամանակներում**[12]։

Շահնազարյանը ենթադրաբար նրան կրոնավոր է համարում՝ նկատի ունենալով հայ գրականությանը նրա փայլուն ծանոթությունը, եկեղեցական գրքերի և Աստվածաշնչի մեջ նրա ունեցած հմտությունը։ Բայց, մեր կարծիքով, այդ հմտությունը առավել աչքի է զարնում գրքում տեղ գտած թղթերում և զանազան քաղվածքներում, որոնք ակներևաբար հեղինակի ձեռքի գործը չեն։

---

[7] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, № 1։

[8] Տե՛ս Neumann, Karl Friedrich, Versuch einer Geschichte der armenischen Literatur, Leipzig, 1836, էջ 103—104։

[9] ՆՀԲ, Ա, էջ 13։

[10] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 19։

[11] *Kounik Ernst*, Sur la première expédition Caspienne des Russes-Normands en 944 d'après la chronique inédite de l'arménien Moise Caghancatvatzi, Bulletin hist. philolog. de l'Académie des Sciences, de St. Pétersbourg, t. IV, 12—13, էջ 202—204։

[12] Մ. Կաղանկատուացի, *Պատմիչ Աղուանից*, Փարիզ, 1860, էջ 82—83։

1861 թ. Ք. Պատկանյանը հրատարակում է Կաղանկատվացու գրքի ռուսերեն թարգմանությունը, որի առաջաբանում այն համոզումն է հայտնում, թե Կաղանկատվացին եղել է վանական և ապրել է X դարի վերջում։ Նա առարկում է Շահնազարյանի, Բրոսսեի, Սոմալյանի, Էմինի և այլոց այն պնդման դեմ, թե պատմագիրը ապրել է VII դարում։ Պատկանյանի կարծիքով, բնագրից բերված այն փաստերը, ուր պատմիչը ասում է «ես տեսա, ես եղա» և այլն, չեն կարող հուսալի կռվան ծառայել նկարագրվող դեպքերին նրա ականատեսության, որովհետև այդպիսի փաստեր կան գրքի այլ էջերում ևս, որոնք բերելով՝ կարելի էր հաստատել, թե Կաղանկատվացին նույնիսկ V դարի հեղինակ է։ Պատկանյանը Կաղանկատվացուց բերելով մի քաղվածք, որտեղ ասված է, թե «Զայս նշանագործութիւն Հոհան Հոնաց եպիսկոպոս, որ ի Մասքթաց աշխարհէն էր և յոյժ ճշմարտախօս, իւր իսկ ականատես եղեալ պատմեաց մեզ», նշում է, որ մատնահատների աղանդը վերացրել է Բարեպաշտ Վաչագանը, որը գործել է V դարում, երբ եղել է նաև Յունան եպիսկոպոսը։ Ուրեմն, ավելացնում է Պատկանյանը, տվյալ վկայությունը հիմք ընդունելով և առաջնորդվելով հիշյալ հետազոտողների սկզբունքով, Կաղանկատվացու ապրած ժամանակը կարելի է հետ տանել նույնիսկ մինչև V դար[13]։

Պատկանյանի այս փաստարկը առարկելի է այն պատճառով, որ վկայակոչված հատվածի՝ ինճճ իսկ ականատես եղեալ պատմեաց մեզ նախադասության մեջ մեզ դերանունը բնագրում չկա և ավելացվել է թարգմանչի կողմից, իսկ պատմեաց ձևն էլ չի նշանակում միայն անձամբ ասաց, այլ ավելի հաճախ գրեց, հաղորդեց, պատմեց, նկարագրեց, որ տվյալ դեպքում կարող էր վերաբերել նաև V դարում ապրած հոնաց Հունան եպիսկոպոսին։

Պատկանյանը միաժամանակ «Աղուանից պատմութեան» հեղինակի՝ VII դարում ստեղծագործած լինելու լավագույն ապացույցը համարում է այն, որ հատկապես առաջին գրքում այդ դարի դեպքերը նկարագրվում են ժամանակակցի հավաստիությամբ, ավելի մանրամասն ու ոգեշունչ, մինչդեռ հաջորդ գրքերում հետագա դարերի իրադարձությունների շարադրանքը դառնում է զգալի չափով կցկտուր, համառոտված ու առանց նկատելի ոգեշնչման։ Մյուս կողմից, Պատկանյանի կարծիքով, երկրորդ գրքի վերջում նկատվում են առաջին գրքին հակասող փաստեր, որոնք լավագույն ապացույց են դրանց հորինման տարբեր ժամանակների ու հեղինակների կամ հետնադարյան ընդմիջարկությունների։ Ի վերջո, Պատկանյանը նշում է, որ ինքը համաձայն կլիներ Շահնազարյանի և այլոց պնդումներին Կաղանկատվացու՝ VII դարի հեղինակ լինելու մասին, եթե որևէ հայ պատմիչ հաղորդեր, թե «Աղուանից պատմութիւնը» սկզբնապես բաղկացած է եղել երկու գրքից, քանի որ երրորդը անվիճելիորեն X դարի գործ է։ Այսպիսով, ըստ Պատկանյանի, «Պատմութեան» վերջնական խմբագրումը կատարվել է X դարում[14]։

Ալիշանը 1865 թ. Կիրակոս Գանձակեցու երկի ծանոթագրության մեջ հավանական է գտնում, որ Կաղանկատվացին ապրել է VII դարում, բայց «Աղուանից պատմութիւնը» շարակարգվել է նրանից հետո, հետագա դարերում[15]։

Ըստ Հր. Աճառյանի, Մովսես Կաղանկատվացին ապրել է X դարում։ Դրա

---

13 История Агван Моисея Каганкатваци, СПб., 1861, էջ VII—VIII։

14 Նույն տեղում։

15 Կիրակոս Գանձակեցւոյ համառօտ պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 4, ծան. 1։

ապացույցն այն է, որ իր պատմությունը նա հասցրել է մինչև X դարը։ Ոչ մի պատճառ չունենք կարծելու, թե երրորդ գիրքը նույն Մովսեսինը չէ, քանի որ այդ գրքի վերտառությունը այդպիսի բան չի հաղորդում։ Եթե տիեզերական պատմություն գրող Ասողիկը չի հիշատակում Կաղանկատվացուն, ապա պետք է մտածել, որ նա կամ Ասողիկին ժամանակակից պատմիչ է, կամ գրել է նրանից հետո։ Աճառյանը մոռանում է, որ Անանիա Մոկացի կաթողիկոսը Ասողիկից շատ առաջ հիշատակում է «Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը։

Աճառյանը վերջիվերջո գալիս է այն եզրակացության, որ Կաղանկատվացու պատմությունը գրվել է 920 թվականին[16]։

1897 թ. Հ. Մանանդյանը Աղվանքի պատմության մասին մի ուսումնասիրություն է գրում[17], որտեղ Մովսես Կաղանկատվացուն համարում է X դարի պատմիչ։ Այս կարծիքը նա աշխատում է հաստատել հետևյալ փաստով. Մովսես Կաղանկատվացին ինքը գրքում հիշատակվող ոչ մի իրողության ականատես չի եղել, թեև հաճախ այդ մասին նշում է. ականատեսության փաստերը հիմնականում գտնվում են նրա օգտագործած աղբյուրներում, որոնք պատմիչը մեջ է բերում անփոփոխ։

Վկայակոչելով Բնդոյի և Վստամի ապստամբության աղբյուրների մասին (երկրորդ գիրք, 17-րդ գլուխ) պատմիչի խոսքերը՝ «Ի ստոյգ և ի բուն պատմագրաց այսպէս ծանեաք», Մանանդյանը նշում է, որ «տարօրինակ են ժամանակակից պատմիչի բերանում այդպիսի խոսքերը», ու եզրակացնում, որ այդ տեղեկությունները քաղված են ոչ թե «ի ստոյգ և ի բուն պատմագրաց», այլ ժամանակակից աղբյուրներից։ Մյուս փաստը, որ բերում է Մանանդյանը, այն է, թե «Պատմութեան» մեջ Միհրանից մինչև Ջվանշիրը մի քանի տասնյակ տարիների միջոց է նշվում, այնինչ ըստ հենց նույն «Պատմութեան» այդ ընթացքում իշխել է վեց սերունդ, որ միանգամայն անհավանական է։

Կաղանկատվացին հիշատակում է հայոց Եղիա կաթողիկոսին, որ VIII դարում էր ապրում, իսկ ինքը ինչպե՞ս կարող է VII դարի պատմիչ լինել։

Որ «Աղուանից պատմութիւնը» մի հեղինակի գործ է և հորինվել է X դարում, ըստ Մանանդյանի լավագույնս ապացուցում է երրորդ գրքի 23-րդ գլխի «Ջանուանս արքայիցն վերագոյն գրեցաք ի քաջէն Վաչագանայ մինչև ցբարեպաշտն Վաչագան՝ տասն թագաւորք» հատվածը, որը հաստատում է «Պատմութեան» երեք գրքերի միջև գոյություն ունեցող անխզելի կապը, քանի որ հիշյալ հատվածը իրոք վերաբերում է առաջին գրքի 15-րդ և երկրորդի 17-րդ գլուխներին։

Նույն 1897 թ. «Բազմավէպ»-ի դեկտեմբերի համարում «Հեղինակ Աղուանից պատմութեան» վերնագրով անստորագիր մի հոդված է լույս տեսել, որ վերագրվում է Ղ. Ալիշանին։ Հոդվածագիրը որոշակիորեն պատմությունը համարում է X դարավերջի գործ։ Ինչ վերաբերում է VII դարի նյութերին, որտեղ հեղինակը իրեն իբրև ականատես է հիշատակում և խոսում է առաջին դեմքով, ապա դրանք ոչ թե կազմողի խոսքերն են, այլ աղբյուրների, ասվում է հոդվածում։ Ըստ հոդվածի, գիրքը գրվել է 980 ու 1000 թվականների միջոցին և ունի երկու հեղինակ՝ Մովսեսը, որ իր մականունը չի հիշատակում, և Կաղանկատվացին, որ իր անունը չի տալիս[18]։

---

16 «Բազմավէպ», 1897, օգոստոս, էջ 370—374։

17 Beiträge zur albanischen Geschichte, Untersuchungen über Mose s den Utie (Kalankatuaci) Leipzig, 1897.

18 «Բազմավէպ», 1897, դեկտեմբեր, էջ 575։

Համարյա նույն մտքերը Ալիշանը արտահայտում է մի այլ տեղում, միայն լրացնում է, որ Կաղանկատույքը և Դասխուրանը չեն կարող միևնույնը լինել, և ըստ այսմ, երկու Մովսեսներ կան։ Մխիթար Գոշը և Վանական Վարդապետը միայն Դասխուրանցի են հիշատակում, որովհետև Կաղանկատվացին VII դարի դեպքերն է գրել, իսկ Դասխուրանցին՝ ամբողջը, այսինքն՝ իրենից առաջ ապրած գրողի գրվածքը խառնել է իրենին[19]։

Ըստ Մակար Բարխուտարյանի Կաղանկատվացին VII դարի հեղինակ է, բայց, ինչպես երևում է Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերից, Աղվանքի ինքնակոչ Գագիկ կաթողիկոսը, Իշխանակ թագավորը և Հակոբ եպիսկոպոսը Աղվանքի բնակչությանը հակել էին քաղկեդոնականության և պնդում էին, թե Աղվանքում ավելի վաղ է ընդունվել քրիստոնեությունը։ Եվ երբ հոգևորականների ու իշխանների ժողովը պահանջում է Աղվանից պատմության գիրքը, նրանք թաքցնում են ու չեն տալիս։ Եվ թաքցնելն է եղել պատճառը, ասում է Մ. Բարխուտարյանը, որ մեր վաղ շրջանի պատմիչները տեղեկություններ չեն ունեցել Աղվանից պատմության մասին։ Եվ երբ գիրքը երևան է գալիս, Մխիթար Անեցին այն դնում է Սեբեոսից անմիջապես հետո։ Կաղանկատվացին, ըստ Բարխուտարյանի, իր գիրքը սկսել է գրել 625-ին և վերջացրել է 684—685-ին։ Գրքի առաջին երկու մասերը պատկանում են Կաղանկատվացուն, իսկ երրորդ մասը գրել է Մովսես Դասխուրանցին։ «Պատմութեան» երկու մասերի միջև զգալի տարբերություններ կան։ Տարբեր են նկարագրությունները, բառաբարդումները, դարձվածքները և այլ առանձնահատկություններ։ Մինչդեռ վառվռուն, հստակ, երկարապատում և գեղեցիկ գրաբար է Կաղանկատվացու գործը, երրորդ մասը աղքատ է, օտարազգի բառերով խառն և ճապաղ։ Կաղանկատվացին թվականներ չի գործածում, իսկ Դասխուրանցին ամենուրեք տարեթվեր է նշանակում[20]։

Դեռևս 60-ական թվականների կեսերին Գ. Զարպհանալյանը այն կարծիքն է հայտնել, թե Կաղանկատվացին VII դարի հեղինակ է և իր պատմությունը ավարտել է 685—686 թվականներին։ Երեք գրքերից երկուսը մեծ մասամբ իրենն են, իսկ երրորդը ուրիշի հորինվածքն է, որ Մովսես անունը ունենալով, նույնացվել է Կաղանկատվացու հետ։

Գ. Զարպհանալյանը գտնում է, որ ոչ միայն թագավորներն էին երկրի ընդհանուր պատմություն գրել տալիս, այլև առանձին առավել ազդեցիկ նախարարները, որոնք հաճախ պատվիրում էին գրել իրենց նահանգների մասնավոր պատմությունները։ Ինչպես ունենք Սյունյաց, Արծրունյաց, Մամիկոնեից, Բագրատունյաց պատմությունները, այդպես էլ հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին գրել է Ուտիքի և Արցախի պատմությունը, ուր գերազանցապես ապրում էին հայեր, իսկ եթե այդ վայրերում եղել էին աղվաններ ու այլ ցեղախմբեր, ապա դրանք վաղուց հայացել էին։ Կաղանկատվացին հայ մատենագիր է, իր պատմությունն էլ գրել է հայերեն[21]։

Ա. Զամինյանը գրում է, թե Կաղանկատվացին մի ժամանակ համարվում էր VII դարի հեղինակ, իսկ այժմ ընդունված է, որ նա ապրել է IX դարի վեր-

---

19 Ղ. Ալիշան, *Հայապատում*, հ. Ա, Վենետիկ, 1901, էջ 74—75։

20 Մ. Բարխուտարեան, *Պատմութիւն Աղուանից*, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 30—37։

21 Տե՛ս Գ. Զարպհանալեան, *Հայկական հին դպրութեան պատմութիւն*, Վենետիկ, 1886, էջ 422, 433։

ջում և X դարի առաջին քառորդում։ Զամինյանը կարծում է, թե Կաղանկատույքը ու Դասխուրանը նույն գյուղի տարբեր անուններն են[22]։

Հացունին գտնում է, որ Կաղանկատվացու երկի առաջին հեղինակը գրել է առաջին գիրքը և երկրորդ գրքից 28 գլուխ։ 29-րդ գլուխն արդեն այլ հեղինակի գործ է։ Դրա համար իբրև ապացույց բերում է 28-րդ գլխի վերջին տողերը. «...զի քեզ բարի լիցի և որդւոց քոց ազգէ յազգ մինչև ցյաւիտեան» (աստ, էջ 201)։ Այս ցյաւիտեան-ով նա կարծում է, թե հեղինակը վերջացրել է սկզբնական գիրքը, որ գրվել է 628-ին և 670-ին կամ 665-ին։ Հաջորդ՝ 29-րդ գլուխը սկսվում է այսպես. «Զճշմարտախօս դրուագս բանից սակաւ ինչ նուազ գտի և զմիայնանալոյն Իսրայելի սկիզբն անյայտ իմն էր»։ Հացունու կարծիքով, սրանք արդեն երկրորդ հեղինակի խոսքերն են, որոնցով նա լրացնում է նախորդին։ Բայց անտեսում է շարունակությունը, ուր ասվում է. «Եւ միայնանալոյն Իսրայելի սկիզբն անյայտ իմն էր, այլ զայս և եթ, որ ինչ խորհրդոյս էին իրք, բովանդակեցաք», որ ակներևորեն հերքում է Հացունու այս տեսակետը։

Նրա եզրակացությունն այս է. Կաղանկատվացին ապրել է VII դարում և գրել է երկու նվագով։ Ցանկացել է գրել Աղվանքի պատմությունը, որտեղ անհրաժեշտ էին բոլոր ավանդածները։ Նյութերը ձևով և լեզվով շարադրված են կապակցված, եթե կան թվականության անհամապատասխանություններ և անճշտություններ, պետք է վերագրել մոռացությանն[23]։

Ն. Ադոնցը իր հոդվածում հանդես է գալիս Հացունու դեմ և կետ առ կետ հերքում նրա փաստարկները։ Նա սկսում է այն մասից, ուր Հացունին գիրքը համարում է 628 թ. գրված։ Ադոնցը պնդում է, որ պետք է գրված լինի 652 թվից հետո, որովհետև երկրորդ գրքի 13-րդ գլուխը վերջանում է արաբների՝ Պարսկաստանին տիրելու ակնարկով։

Ադոնցը Կաղանկատվացու գրքից մի շարք փաստեր է բերում ու հաստատում, որ երկրորդ գրքի 19-ից 33-րդ գլուխները առաջին գրքի 27—30-րդ գլուխների հետ գրված են միևնույն ոգով ու շնչով և ակնհայտորեն պատկանում են միևնույն հեղինակին։

Ադոնցը նշում է, որ պատմիչը գանգատվում է, թե քիչ բան է գտել Իսրայելի մասին, իսկ հայտնի է, որ Իսրայելը կենդանի էր 707 թ. և մասնակցել է այդ թվականի եկեղեցական ժողովին։ Ուստի մեր պատմագիրը չի կարող ժամանակակից լինել Իսրայելին, այլ պետք է շատ և շատ սերունդներ հետո եղած լինի։ Ադոնցի այս եզրակացությունը այնքան էլ հիմնավոր չէ. պատմագիրը կարող էր ապրած լինել հենց Իսրայելի օրոք, բայց նրա անցյալ կյանքի մասին տեղեկություններ չունենալ, որովհետև ինքը հենվել է գրավոր աղբյուրների վրա, իսկ Իսրայելի կյանքի սկզբնական շրջանի վերաբերյալ այդպիսի աղբյուրներ չի ունեցել։

Շարունակության մեջ Ադոնցը բազմաթիվ փաստեր է բերում՝ հերքելու Հացունու այն տեսակետը, ըստ որի Կաղանկատվացին իր գիրքը գրել է 628 թ.։ Ընհանուր առմամբ այդ փաստերը համոզիչ առարկում են հիշյալ թվականի դեմ, բայց չեն հավաստում, թե գրողը VII դարից հետո է գրել։ Խազիրների արշավանքը տեղի է ունեցել 526 թ., իսկ պատմիչը այն կատարված է համարել

---

22 Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջևան, 1914, էջ 149—151։
23 «Բազմավէպ», 1938, հոկտեմբեր—դեկտեմբեր, էջ 268—276։

628-ին։ Այդպիսի շփոթություն, ըստ Ադոնցի, չէր կարող թույլ տալ VII դարի հեղինակը։ Ադոնցը մոռանում է, որ այն ժամանակ լրագրեր չկային, անընդհատ հոդվածներ չէին գրվում, տարեթվերը չէին նշվում, ըստ այդմ, բնական էին ժամանակագրական անճշտություններն ու դեպքերի շփոթումները։

Պատմիչը ասում է, թե խազիրները գնացել են Բյուզանդիայի մայրաքաղաքը և դաշինք կնքել, սակայն պատմությանը հայտնի է, որ Հերակլն է եկել Թիֆլիս, և հենց այստեղ է դաշինք հաստատվել։ Եթե պատմիչը VII դարում ապրեր, նման սխալ չէր գործի, եզրակացնում է Ադոնցը։ Այդպիսի սխալն էլ շատ տրամաբանական էր այն ժամանակներում, երբ ժամանակագիր հեղինակը առանց գրավոր աղբյուրների, սոսկ հիշողությամբ էր շարադրում պատմությունը։

Ըստ Ադոնցի, հայ թվականությունը կիրառվել է 684 թվականից հետո, իսկ երկրորդ գրքի 9-րդ գլխում հիշված է հայ թվականությունը։ Այս բոլորը ապացուցում են, որ պատմագիրը ժամանակակից չէ VII դարի նկարագրված անցքերին և նրանց մասին պատմում է ըստ գրավոր կամ բանավոր աղբյուրների։

Մեջ բերելով երկրորդ գրքի 9-րդ գլխից այն հատվածը, որտեղ պատմագիրը, խոսելով Աղվանքի վրա պայթած պատերազմների մասին, ի միջի այլոց նշում է. «Սակայն և այժմ առ անգամ մի թողեալ զահ և զերկիւղ, որ դեռ զմեզս ունի՝ ի նոյն կարգն դարձցուք», Ադոնցը բնագրի «զմեզս» բառաձևը առանց բավարար հիմքի ուղղում է «զմիտս» և ենթադրում, թե պատմիչը ոչ թե զգացել է պատերազմի արհավիրքների ծանրությունը, այլ անցյալ դեպքերը պատմելիս պարզապես հուզվել է։ Այդպիսի բացատրությունն ու համեմատությունը բնավ համոզիչ չեն։ Շատ հնարավոր է, որ պատմիչը չի գրել անմիջապես արհավիրքների օրերին, բայց որ նա տեսել և զգացել է երկրի գլխին պայթած աղետը, ակներև է ամբողջ շարադրանքից[24]։

Ակադեմիկոս Մ. Աբեղյանը առանց փաստարկումների ու մանրամասն քննությունների Կաղանկատվացուն դնում է X դարի պատմիչների շարքը[25]։

Ըստ Լեոյի, գրքի առաջին և երկրորդ մասերը Աղվանքի պատմությունն են հին ժամանակներից մինչև VII դարի վերջը, իսկ երրորդ մասը պատմության շարունակությունն է մինչև X դարը[26]։

Կաղանկատվացու մասին ընդարձակ ուսումնասիրություն է հրատարակել Ն. Ակինյանը[27]։ Պատմության ժամանակի մասին խոսելով՝ Ակինյանը այն միտքն է հայտնում, թե Ա—Գ հատվածները ենթադրում են մեկ խմբագիր, որ աշխատել է իր ձեռքի տակ գտնված հում ատաղձները դասավորել, պակասները լրացնել և ամբողջացնել իբրև մեկ երկասիրություն։ Հետևելով Հ. Մանանդյանին, Ակինյանը ևս գտնում է, որ «Պատմութեան» բոլոր երեք գրքերի վրա մեկ ձեռք է աշխատել։ Իբրև ապացույց վկայակոչված է երրորդ գրքի 23-րդ գլխի՝ վերևում մեջ բերված հատվածը՝ «զանուանս արքայիցն վերագոյն գրեցաք ի քաջէն Վաչագանայ մինչև ցԲարեպաշտ Վաչագան՝ տասն թագաւորք», որ ստույգ համապատասխանում է առաջին գրքի 15-րդ և երկրորդի 17-րդ գլուխներում տեղավորված արքայացուցակին։ Երրորդ գրքի

24 Տե՛ս «Անահիտ», 1939, ապրիլ—մայիս, էջ 69—77, հունիս—սեպտեմբեր, էջ 22—31, հոկտեմբեր—նոյեմբեր, էջ 4—9, 1940, էջ 20—29 (շարունակությունը լույս չի տեսել)։

25 Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան 1944*, էջ 456—457։

26 Լեո, *Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947*, էջ 350—352։

27 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 1—32, 161—175, 321—349, 552—596։

*23-րդ գլուխը ավարտվում է քաղաքական պատմությամբ, այն է՝ Հովհ. Սենեքերիմ թագավորի օծվելով, որ տեղի ունեցավ 1004—1005 թթ.։ Հաջորդ գլուխը նվիրված է Աղվանից աշխարհի կաթողիկոսների հաջորդականությանը. վերջին կաթողիկոսը Մովսեսն է (1002—1008), որ հովվել է Հովհ. Սենեքերիմի կենդանության օրոք։*

*Այս փաստը նկատի ունենալով, Ակինյանը գտնում է, որ գիրքը իբրև ամբողջականություն կազմվել է X դարի երկրորդ կեսին և չնայած այն 950 թ. ծանոթ է եղել Անանիա Մոկացի կաթողիկոսին, սակայն ոչ այն ծավալով, ինչ ծավալով որ հասել է մեզ*[28]*։*

*Մեզ հետաքրքրող խնդրին վերաբերող ուսումնասիրությունների մեջ առանձնակի տեղ է գրավում Ա. Մնացականյանի «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» հիմնալից աշխատությունը, որտեղ հանգամանորեն խոսվում է Կաղանկատվացու երկի ստեղծման հանգամանքների, բովանդակության, լեզվի, գրության ժամանակաշրջանի և այլ հարցերի մասին։ Ըստ Մնացականյանի, Մովսես Կաղանկատվացին VII դարի մատենագիր է, իսկ Մովսես Դասխուրանցին՝ X դարի։ Այս երկու հեղինակներն էլ հայեր են, իրենց միջավայրը հայկական է և գրել են հայերեն։*

*Ուրեմն, «Աղուանից աշխարհի պատմութիւնը» պատկանում է երկու հեղինակի, բայց թե նրանցից որն է որ մասի հեղինակը, հստակ պարզված չէ։ Մի բան ակներև է, որ յուրաքանչյուր հեղինակի գրածը բաժանվում է երկու ենթախմբի՝ սեփական ձեռքով գրված հատվածների և քաղագրությունների*[29]*։*

*Արդարև, Մովսես Կաղանկատվացին կամ մի այլ անունով հեղինակ ապրել է VII դարում և գրել է Աղվանից աշխարհի պատմությունը։ Որքան էլ Ակինյանը կամ նրանից առաջ ուրիշները հիմնվեն երրորդ գրքի 23-րդ գլխի վրա և պնդեն, թե ամբողջ պատմությունը մի հեղինակի գործ է, որն ամբողջացվել է X դարի երկրորդ կեսին կամ ավելի որոշակի՝ 1003 թվականից հետո, սակայն անժխտելի փաստ է, որ առաջին և երկրորդ գրքերի հիմնական նյութերը շարադրված են ականատես հեղինակի կողմից, որը չէր կարող հնարել չտեսած և չլսած բաներ։*

*«Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը, ինչպես արդեն ասվել է, կազմըված է երեք գրքից։ Առաջին գրքի սկզբում շարադրված իրողությունները վերաբերում են սկզբնական շրջանի՝ հատկապես IV և V դարերի դեպքերին, որոնց նկարագրությունը մեծ մասամբ քաղված է Բուզանդից, Խորենացուց, Ագաթանգեղոսից, Եղիշեից, Գիրք թղթոցներից, դավանաբանական ու վարքագրական թղթերից և այլ գրավոր աղբյուրներից։ «Պատմութեան» այս բանաքաղային հատվածները կարող էր շարադրել նաև ավելի ուշ շրջանի մի մատենագիր։ Իսկ ինչ վերաբերում է այնպիսի իրադարձությունների նկարագրությանը, որոնց ժամանակը հայտնի է, և որոնց մասին ականատես հեղինակն է պատմում, ամեն անգամ հավաստիացնելով, թե ինքը աչքով տեսել է, ոչ մի հիմք չունենք հավաստի չհամարելու դրանք։*

*Երկրորդ գրքի 14-րդ գլուխը վերաբերում է Շաթի՝ Աղվանք կատարած արշավանքին։ Հեղինակը այնպես մանրամասն է նկարագրում արշավանքը, բանակատեղը («ըստ հիւսիսոյ կողմանէ մերձ ի մեծ քաղաքն Պարտաւ»),*

---

28 *Նույն տեղում, էջ 30—32։*

29 Ա. Մնացականյան, *Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 153—154։*

վրաններր և այլն, որ ոչ մի կասկած չի թողնում, թե ինքը այդ ժամանակ ականատես է եղել հիշյալ դեպքերին։ Ահա թե հեղինակը ինչպես է նկարագրում Շաթի և նրա պալատականների ճաշկերույթը. «Անդ տեսաք զբազմոցս նոցա՝ ի գուճ ի վերայ ծնգաց ըստ նմանութեան փաղանգաց ծանրաբեռն ուղտուց։ Իւրաքանչիւր կոնք մի լցեալ մսով յանսուրբ անասնոց, ըստ նմին եւ սկտեղք, յորում թանային յուտելն իւրեանց յաղաչուր։ Եւ զբաժակս և զըմպելիս արծաթեղէն քանդակունս յոսկի համակեալս, զորս բերեալ էր յաւարէն Տփղեաց. ըստ նմին և զըմպոցս եղջիւրեղէնս և զշորոմաձևս փայտեղէնս մեծամեծս, որով զարգանակսն լափէին և նովին պարարտական սառոյց, անլուայ աղտեղեալքն՝ յաբխոռն յանզգայս ի միոյ միոյ բաժակէ երկու երկու կամ երեք երեք ի նոցանէն զանապակ գինին կամ զկաթն ուղտուց և ձիոց անյագ յորովայնս իւրեանց իբրև ի տիկս ուռուցիկս չափէին։ Ո՛չ օրինաւոր մատուակք էին առաջի նոցա, և ո՛չ սպասաւորք ի թիկանց կողմանէ։ Եւ ոչ անգամ որդւոյ թագաւորին, բայց զինուորաց, որք զդուռն նորա պահէին, շուրջանակի ասպարափակ, նիզակախիտ զգուշութեամբ» (նույն, էջ 160)։

Այդ արշավանքը տեղի է ունեցել 628 թվականին։

Պատմիչը այնպես է նկարագրում, որ պարզ երևում է, թե դա պատմություն է և ոչ թուղթ կամ մի այլ բնույթի գրություն՝ կտրված ինչ-որ ամբողջությունից։ Ընդհակառակը, դա մի հատվածն է այն ամբողջության, որը վերաբերում է Աղվանքի կաթողիկոս Վիրոյի գործունեությանը, որից անմիջապես հետո պատմիչը օգտագործում է Վիրոյի թուղթը սովի և համաճարակի մասին։

Հաջորդ՝ 16-րդ գլուխը այն հարկահավաքման մասին է, որ պիտի կատարեր Շաթը Չորպան-թարխանի առաջնորդությամբ, ապա ճակատամարտը պարսիկների դեմ, պարսիկների պարտությունը և հետո խաքանի ետ կանչումը։

Ազոնցը, գնահատելով երկրորդ գրքի 9—16-րդ գլուխները, գտնում է, որ պատումի հիմքը պատմական հավաստի եղելությունններն են, կան մի շարք արժեքավոր տեղեկություններ, սակայն զերծ չեն թերություններից։

Ադոնցը այն կարծիքին է, որ X դարում Կաղանկատվացին իբրև պատմական աղբյուր օգտագործել է Վիրոյի հիշատակարանը, որի ապացույցն է սովի և ժանտախտի նկարագրությունը։

Շատ հնարավոր է, որ Վիրո կաթողիկոսը թողած լինի հիշատակարան, բայց այն գրքի է վերածվել ոչ թե X, այլ VII դարում։ Եվ պատմական իրողությունների ճշգրիտ պատմությունը անպայման ինչ-որ հոռմեական աղբյուրների վրա չպետք է հիմնվեր, որ ճշմարտապատում լիներ։ Հեղինակը պատմում է իր կենդանության օրոք տեղի ունեցած պատմական դեպքերը այնպիսի կրքոտությամբ, վերագնահատումներով, որ առարկության տեղ չի թողնում։ Նույնիսկ Կաղանկատվացուն X դարի հեղինակ համարողները անկարող են չխոստովանել, որ VII դարի իրադարձությունները պատմված են ականատեսի առարկայականությամբ, ճշմարտությամբ ու մանրամասնությամբ։

Պատմիչի որոշ վրիպումները նկատվում են միայն այն դեպքերում, երբ նկարագրվում են իրենից շատ առաջ կատարված պատմական իրողությունները, որոնց ստույգ թվականներն ու մանրամասները հեղինակը կարող էր մոռացած կամ շփոթած լինել, տեղի տալով որոշ ժամանակավրեպության։

Պատմիչի՝ VII դարում ապրած լինելու վերաբերյալ ստույգ տվյալներ

ենք գտնում երկրորդ գրքի 28-րդ գլխում, ուր նա ասում է, թե հարավի բըռնակալի մոտից Ջվանշիրը վերադառնում է մեծ շուքով ու ընծաներով։ Ջվանշիրը այցելում է իր շինած եկեղեցին, որ գտնվում էր Գարդմանում, ապա այդտեղ լինում է ընդհանուր ժողով, ուր պատմիչը նրան տեսնում է ավելի պճնված ու զարդարված։ Տեսնում է նաև արքայական թռչունը (թութակ), որ նկարագրում է ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես վիպագիրը կարող էր ներկայացնել ընտանի թութակը։

Կաղանկատվացին, իբրև պատմիչ ու գրող, ունի սուր դիտողականություն և արտաքին երևույթները նկարագրելու զարմանալի ունակություն։ Ահա թե ինչպես է նկարագրում Ջվանշիրին ընծայված թութակը. «Տեսանէաք եւ զարքայական հաւ, որոյ տեսակն ցանկալի էր, զի ընդ դեղնագոյն փետուրսն փոքր ինչ կանաչութիւն համավար խառնեալ արտաքս ճողճայր, և լանջացն կարմրանիշագոյն այսր անդր տրոհէր շուրջ զպարանոցաւն առ միմեանս պատուածեալ նման գարնանային առաւօտու ցօղոյ կայլակաց յանդաստանս, ըռսկեծայր քտից մարգարտաձև ի վայր կախեալ բոլորովիմբ։ Այսպէս և բիբք աչացն, որ և սոնքաձև կտցոյն փողորտաձգութիւն ի վայր կոյս դարձեալ զբերանովն կռանայր, յորում բոլորատէգ լեզուոյն ծայր իբրու դանդանաց ցցեալ զբարակավանգ ճռուողումն ձայնի ըստ մարդկային բնութեանս խօսից ատէպ ատէպ առ բան հոլովէր» (սույն, էջ 199)։

Եվ վերջապես, Կաղանկատվացին տեսել է Դավթակ Քերթողին ու նույնությամբ վերցրել և տեղադրել է իր գրքում նրա ընդարձակ բարձրարվեստ ողբ քերթվածը Ջվանշիր իշխանի եղերական մահվան մասին։

Որքան էլ «Աղուանից պատմութեան» ժամանակագրության մեջ հակասություններ լինեն, մենք չենք կարող այսպիսի նկարագրությունները երևակայության արդյունք համարել։ Աղվանքի համար փիղն ու թութակը եղել են հեքիաթային կենդանիներ, այդ է պատճառը, որ պատմիչը տեսածը նկարագրում է զարմացած, բայց և նկարչական ճշտությամբ։ Բացի դրանից, «Աղուանից պատմութիւն»-ը VIII դարում ծանոթ է եղել Մաքենացիների վանքի վանահայր Սողոմոնին, IX դարում՝ Մաշտոց կաթողիկոսին։

Ուրեմն, «Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը իր հիմնական մասով կազմվել է VII դարում. X դարում, գուցե և XI դարի սկզբում այն վերջնականապես լրացվել ու խմբագրվել է իբրև մեկ ամբողջություն և այդ վերջնական տեսքով բազմիցս արտագրվելով՝ հասել մեզ։ Իսկ հետագա շուրջ կես դարում (մինչև X դàրի վերջը—XI դարի սկիզբը) գործած հոգևոր նվիրապետների ու իշխանների անունները «Պատմութեան» վերջում եղած ցանկերի մեջ են մտել, ամենայն հավանականությամբ, XI դարի սկզբին։

Հայ գրի մեծ ստեղծող Մեսրոպ Մաշտոցը կենտրոնական Հայաստանում գիր ու գրականությունն արմատավորելուց հետո անցնում է ծայրագավառները՝ համատարած դարձնելու իր ստեղծած լույսը։ Այդ ժամանակ Արցախը և Ուտիքը գտնվում էին Արևելյան Հայաստանի Արշակունի թագավորի տիրապետության տակ։ Հասկանալի է, թե ինչու Սյունիքում գրի տարածման ու դպրոցներ հիմնելու ընթացքին և բուն Աղվանքում աղվանական գիր ստեղծելուց հետո Գարդմանք (Ուտիք) գալով՝ մեծ մտածողը այնպես ջանադրաբար գործեց արդեն ծայրամասային դարձած այս երկու նահանգներում (Փայտակարանը Հայաստանից պոկվել էր դեռ 387 թ.)։ Մաշտոցի ու նրա գործակիցների հոգսն էր հայրենի գրով ու դպրությամբ տոգորված Ուտիքն ու Արցախը պատնեշ դարձնել ինչպես այլահավատ Պարսկաստանի, այնպես էլ այլացեղ

հյուսիսային հարևանների հանդեպ։ Եվ այդ հեռատես միջոցառումն իրեն փայլուն կերպով արդարացրեց հետագա դաժան փորձությունների ժամանակ։ 428 թվականից հետո ստեղծված պարսկահպատակ «Աղվանք» մարզպանության կազմում Ուտիքի և Արցախի միաձույլ հայությունը ոչ միայն կույլ չգընաց հարևանների ու հատկապես պարսիկ տիրապետողների ուծացնող քաղաքականությանը, այլև իր մշակութային բարձր մակարդակով խոր ազդեցություն էր պահում աղվանական ցեղախմբերի վրա, իսկ արաբական բռնապետության հաստատումից հետո էլ անառիկ պահեց իր ազգային ու դավանական ինքնուրույնությունը։

Պատմական դեպքերի բերումով Հայաստանից անջատված Ուտիքն ու Արցախը միշտ էլ դիտվել են Հայաստանի մասեր, և մշակութային առաջընթացն այդ նահանգներում միշտ էլ զուգընթաց է եղել Հայաստանի մնացած մասերի հետ։

Մենք այստեղ այդ հարցերի վրա ավելի հանգամանորեն կանգ չենք առնում, որովհետև դրանք փայլուն կերպով քննել, վերլուծել ու վեր է հանել Աս. Մնացականյանը իր ուշագրավ աշխատության մեջ[30]։ Միայն պետք է նշենք, որ Աղվանից աշխարհի մշակութային կյանքը հայ մտավորականին նույնչափ էր հետաքրքրում, ինչպես հետաքրքրում էր Սյունիքի, Տարոնի, Վասպուրականի և Հայաստանի այլ նահանգների մտավոր գործունեությունը։

Հենց այդ է պատճառը, որ տվյալ դեպքում Աղվանից պատմությունը լրացվել է դարից դար։ VII դարի Մովսես Կաղանկատվացուն լրացրել է X դարի Մովսես Դասխուրանցին, իսկ սրան էլ ցանկություն է հայտնել լրացնել կամ առաջարկել է լրացնել Մխիթար Գոշը[31]։ Շատ ավելի ուշ այդ պատմությանը կցվել են Աղվանից կաթողիկոսների ցանկերը մինչև XVIII դարը։

Հայ մտավորականը Աղվանից պատմությանը նայել է իբրև իր սեփական երկրի տարեգրության, որովհետև այն ստեղծել է իր սեփական ժողովուրդը դարավոր մշակութային կյանքով ու մեսրոպյան լեզվով։

«Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը բաժանված է երեք գրքի։ Առաջին գիրքը կազմված է երեսուն գլխից, որոնցից առաջին երեքի բովանդակությունը վերաբերում է ընդհանուր պատմությանը և ոչ մի կապ չունի Աղվանքի ու նրա պատմության հետ։

Առաջին և երկրորդ գրքի նյութերը հիմնականում վերաբերում են VII դարի իրադարձություններին, որոնց մի մասին պատմիչը ականատես է եղել և ներկայացնում է ամենայն արժանահավատությամբ։ Առաջին գրքի սկզբում պատմված իրողությունները վերաբերում են IV—V դարերին։ Այս տեղեկությունները պատմիչը, ինչպես ասվեց, քաղել է իր ձեռքի տակ եղած հայ մատենագիրներից, Գիրք թղթոցներից ու այլ գրավոր աղբյուրներից։ Հաճախ պատմիչը պատմական իրադարձությունները նկարագրելիս ուղղակի բանաքաղում է իր օգտագործած աղբյուրներից։ Առաջին գրքի գրեթե կեսը ծաղկաքաղ է հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների, որոնք երբեմն Կաղանկատվացին բերում է գրեթե նույնությամբ։ Օրինակ՝ «Իսկ արքայն Աղուանից ոչ կամեցաւ նուաճել անդրէն ի ծառայութիւն, այլ խրամատեաց զպահակն Ջորայ և անցոյց յայն կոյս զզօրսն Մասքթաց։ Միաբանեաց ընդ իւր և զմեծասան թագաւորսն գլեռնորդեայսն և ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին և բազում վնաս արար զօրացն արքունի» (ստ, էջ 16)։

[30] Նույն տեղում, էջ 87—240։

[31] Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 384։

Սրա դիմաց նույն իրողության մասին Եղիշեն ունի. «Սակայն Աղուանից արքայն ոչ կամէր նուաճել անդրէն ի ծառայութիւն,այլ խրամատեաց զպահակն ճորայ, և անցոյց յայս կոյս զզօրսն Մասքթաց. միաբանեաց զմեռասան թագաւորս, զլեռնորդեայսն, և ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին, և բազում վնասս արար զօրացն արքունի»[32]։

Կաղանկատվացու աղբյուրները իր մայրենի լեզվով գրված հայ գրական երկերն են։ Նա ինքնուրույն է այնտեղ, երբ իբրև ականատես պատմում է իր ժամանակի որևէ եղելություն, պատմական որևէ իրադարձություն։ Ոչ միայն առաջին գրքի, այլև մյուս գրքերի աղբյուրները ևս Կաղանկատվացու մայրենի հայ գրականությունն է։ Կաղանկատվացու վերոհիշյալ աղբյուրների խնդիրը մանրամասն ուսումնասիրել է Ակինյանը և մատնացույց է արել եղած համապատասխանությունները։ Մեր նպատակից դուրս է «Աղուանից պատմութեան» ակունքների մանրամասն քննությունը. հետաքրքրվողը կարող է դրանք գտնել Ակինյանի ուսումնասիրության մեջ[33]։

Սակայն Կաղանկատվացու երկի արժեքը այն հատվածների մեջ է, որտեղ պատմիչը իբրև ականատես շարադրում է Ուտիքում, Արցախում տեղի ունեցած պատմական իրադարձությունները։ Այսպես, օրինակ, երկրորդ գրքի 14-րդ գլուխը վերաբերում է Շաթի արշավանքին, որ տեղի է ունեցել 628 թ.։ Պատմիչը այնպես է նկարագրում այդ արշավանքը, որ նախ՝ երևում է, թե ինքը ականատես է եղել, և հետո պատմելաձևից հայտնի է դառնում, որ դա ինչ-որ թուղթ չէ ամբողջությունից զատ ու առանձին, այլ ամբողջական շարադրանքի մաս է և բնույթով էլ պատմություն է, որից անմիջապես հետո նա մեջ է բերում ժանտախտին ու սովին վերաբերող Վիրո կաթողիկոսի թուղթը, իբրև հիշյալ արշավանքի պատմության համար արժանահավատ վկայաթուղթ։

Գրքի ուսումնասիրողները միաժամանակ պնդել են, որ այն ոչ միայն տարբեր ժամանակների կնիքն ունի իր վրա, այլև ոճերի մի խառնուրդ է ներկայացնում և, որ կարևորն է, հետևողական պատմության շարադրանք չէ։ «Պատմութեան» հեղինակը կամ հեղինակները բանաքաղել են մայրենի հայ գրական այն բոլոր մատչելի աղբյուրները, որոնք այս կամ այն առիթով խոսել են Հայոց Արևելից Կողմանց՝ Ուտիքի, Արցախի կամ անդրկուրյան լեռներում բնակվող աղվանների մասին։ Ինչ մնում է մնացած նյութերին, ապա դրանք մեծ մասամբ նամակներ, նշխարների գյուտերի նկարագրություններ, հրաշապատումներ են, մինչև իսկ կա Իլիոն քաղաքի ավերման և Հռոմի հիմնադրման պատմությունը, որ ինչ-որ տեղից հեղինակը առել է իր պատմության մեջ։

Ինչպես էլ որ գնահատելու լինենք այսօր Կաղանկատվացու երկը, մի բան ակնհայտ է, որ նրա հեղինակը տարված է եղել տեղական հայրենասիրությամբ և կամեցել է, որ Հայաստանի երկու մեծ նահանգների պատմությունը լույս աշխարհ հանվի։ Որքան էլ Հայաստանի առանձին նահանգներ լեզվով, կրոնով և մշակութային այլ ճյուղերով սերտորեն կապված էին միմյանց իբրև մի ընդհանուր երկրի հատվածներ, այնուամենայնիվ, ավատական հասարակարգին հատուկ էին կենտրոնախույս տրամադրություններ, երկրի ընդհա-

---

32 Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 198։

33 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, 1955, 1957 թվականների համարները. «Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատուացի) և իր «Պատմութիւն Աղուանից»։ Նորերս Կաղանկատվացու աղբյուրները ուսումնասիրել է Հ. Սվազյանը. տե՛ս ՊԲՀ, 1972, № 9։

նուր թագավորի գերիշխանությունից դուրս գալու և ինքնուրույն իշխանություն կազմելու միտումներ ու նպատակադրումներ, մի բան, որ անցանկալի լուրջ կերպարանք էր ստանում մանավանդ այն ժամանակ, երբ երկրի ընդհանուր գերիշխանությունը թուլանում էր։ Կենտրոնախույս այս տրամադրությունները, որ խարսխվում էին տնտեսական ու քաղաքական հիմքի վրա, դառնում էին տվյալ նահանգի համար ընդհանուր արմատավորված հոգեբանություն, որ պարարտ հող էր ստեղծում նաև առաջնության անհարկի բանավեճերի։

Ինչ վերաբերում է Հայոց Արևելից Կողմանց երկրամասին, այնտեղ տնտեսական ու քաղաքական վիճակն այլ էր։ Հայաստանի այդ երկու կարևոր նահանգները՝ Ուտիքն ու Արցախը, օտարված էին Հայաստանից և մասն էին կազմում Աղվանից մարզպանության։ Թվում էր, թե Հայաստանից անջատված այս նահանգները պետք է որ իրենց տնտեսապես ու քաղաքականապես ծանր վիճակում զգային՝ հայրենի կենտրոնական աշխարհից կտրված լինելու և ուրիշ երկրի հետ մեկ վարչաքաղաքական միավորի մեջ գտնվելու հետևանքով։ Սակայն պատմական իրադրությունը այստեղ այլ կերպարանք էր ստացել։ Այդ երկու հայկական խոշոր նահանգները, ունենալով հոծ հայկական բնակչություն և դառնալով «Աղվանք» մարզպանության առավել առաջատար ուժը, ամբողջ իշխանությունը կենտրոնացրել էին իրենց ձեռքում։ Փաստորեն հսկայական մարզպանական իշխանությունը հայկական էր, և աղվանական ու այլ ցեղերը ենթարկվում էին Ուտիքում ու Արցախում կենտրոնացած իշխանություններին։

Ունենալով տնտեսական ու քաղաքական ինքնուրույնություն՝ Հայոց Արևելից Կողմանքը ձգտում էր մշակութային ինքնուրույնության։ Տեղացի հայ իշխանավորները և ողջ երկիրը իրենց ազատ էին համարում նաև մշակութային զարգացման բնագավառում։ V դարի առաջին կեսում այդտեղ Մեսրոպ Մաշտոցը բաց էր արել հայկական դպրոցներ, և որքան հնարավոր էր այն ժամանակի պայմաններում, հայոց գիրն ու գրականությունը բավականաչափ արագ տարածվել էին այնտեղ։ Հայոց լեզուն երկրամասի պաշտոնական պետական լեզուն էր. կրոնական արարողությունները, գրագրությունները այդ լեզվով էին կատարվում։ Եվ Կորյունի այն խոսքը, թե Մաշտոցը գրեր ստեղծեց նաև աղվանների համար, չի վերաբերում Ուտիքին, Արցախին և նրանց շուրջ ընկած մերձակա տարածություններին. դա անառարկելի կերպով վերաբերում է Կուրից հյուսիս ընկած աղվանական ցեղերին։

Ավելի քան երկու դար Հայոց Արևելից Կողմանքում տարածվում էր հայոց լեզուն ու գրականությունը։ Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Եղիշեի օրինակներով Հայոց Արևելից Կողմանքի իշխող և մտավոր դասը կամեցավ ունենալ նաև իր երկրամասի պատմությունը։ Սրա իրականացումը նշանակում էր հատուկ վկայագրով հաստատել, վավերացնել և բարձրացնել երկրամասի վարչաքաղաքական հեղինակությունը ոչ միայն տեղի բնակչության, այլև ողջ հայոց աշխարհի ու նաև հարևան երկրների աչքում։ Հենց այս հանգամանքները թելադրել են որևէ իշխանի գրել տալ երկրամասի ինքնուրույն պատմությունը, կամ թե անմիջապես հեղինակն է խթանվել ձեռնամուխ լինելու այդ գործին։ Բայց ի՞նչ աղբյուրներ կային երկրամասի հին պատմությունը գրելու համար։ Միայն ժամանակակից պատմական իրադարձությունների շարադրանքը պատմիչի ու նրա ընթերցողների աչքում քիչ բան էր ասում նահանգի ընդհանուր պատմության համար։ Անհրաժեշտ էր նկա-

քագրել անցյալի հերոսական գործերը, դրանց հերոսներին, քաղաքական, հոգևոր ու մշակութային ականավոր անձերի գործունեությունը։ Ներկայի պատմությունը պետք է հենվեր անցյալի վրա, անցյալն է պատմության խարիսխն ու հենարանը։ Իսկ երկրամասի անցյալը առնչվում էր Հայաստանի ու նրա պատմության հետ։ Աղվանից աշխարհի պատմություն գրող հեղինակը իր երկրամասի անցյալը պետք է պատմություն դարձներ մայր գրականության միջոցով, որ չնայած կարճ անցյալին, պատմագրական խոշոր ժառանգություն էր ստեղծել։

Եվ «Պատմութիւն Աղուանից աշխահի» երկի հեղինակը սկսեց պրպտել իր մայրենի հայ գրականությունը, և ինչ որ այնտեղ ասված էր իր երկրամասի վերաբերյալ, հավաքեց, հյուսեց, երբեմն նյութերը ուղղակի տեղադրեց իր պատմության մեջ։ Նրան առանձնապես հետաքրքրում էր իր երկրամասի եկեղեցու պատմությունը, որը ենթարկվելով Հայոց եկեղեցու նվիրապետությանը՝ ուներ իր առանձին պետը՝ կաթողիկոս տիտղոսով։ Միջնադարյան պատմիչի աչքում եկեղեցին այնպիսի մի կարևոր հաստատություն էր, որ փառք ու հեղինակություն էր բերում երկրամասին։ Ուստի անհրաժեշտ էր հաստատել այդ եկեղեցու առաքելականությունը, լուսավորչականությունը, հնությունը, հրաշագործ զորությունը, սեփական սրբերի գոյությունը և նրանց անցյալ գործունեությունը, որոնցով պայմանավորված էին երկրամասի՝ իբրև առանձին տնտեսական ու վարչաքաղաքական միավորի ամբողջականությունը, միասնությունն ու հեղինակությունը։ Հենց այս մտայնության գերիշխանությունը պատմիչին դրդել է գիրքը համեմել նաև հրաշապատումներով, տեսիլքներով, սրբերի նշխարների գյուտերով, վարքաբանական, հայրաբանական նյութերով, դավանաբանական վեճերին վերաբերող թղթերով ու նամակային վավերագրերով։ Եվ դա միանգամայն հասկանալի է։ Առաջին անգամ համակարգված պատմություն էր գրվում, որը պետք է դառնար նահանգի պատմական կյանքի տարեգրությունը, սակայն անցյալի վերաբերյալ տվյալները պակասում էին, և պատմագիրըստիպված էր թերին լրացնել վերոհիշյալ նյութերով։

«Պատմութեան» առաջին գրքի 7—8-րդ գլուխները վերաբերում են նահատակված քրիստոնյա սրբերին, նրանց մասունքների որոնմանն ու հայտնաբերմանը կամ դրանց նշխարները Աղվանից աշխարհ տեղափոխելուն։ Այն ժամանակվա համար սրբերի նշխարների մի վայրում գոյություն ունենալու փաստը հսկայական իրավական, բարոյական հիմք էր տվյալ վայրի եկեղեցու գոյության, հզորության և գերիշխող դիրքի։

Այս նկարագրությունները նպատակ ունեին պատմիչի հայրենի աշխարհը ներկայացնել իբրև քրիստոնեության տարածման օրրաններից մեկը, որտեղ դեռ վաղուց այցելել են այդ կրոնի նշանավոր տարածիչները, քարոզել են քրիստոնեության ուսմունքը, և շատերն էլ հենց այդտեղ նահատակվել են ու թաղվել։ Սրանց նշխարների գյուտերը, հանդիսավոր թափորներով փոխադրելը, երկրի զանազան վանքերում տեղադրելը, մանավանդ դեռևս քրիստոնեություն չընդունած, դեռևս ոչ լրիվ հավատացյալ զանգվածների մեջ հավատը արմատավորելու, վանքեր ու եկեղեցիներ այցելելու, եկեղեցական հասերը վճարելու, եկեղեցու հանդեպ այլ պարտավորություններ կատարելու և հենց եկեղեցու հեղինակության բարձրացման համար անչափ մեծ նշանակություն ունեին։

Որպեսզի պատմիչը իր երկրամասի և նրա եկեղեցու հեղինակությունը բարձր պահի և ապացուցի նրա առաքելական, լուսավորչական ծագումն ու

էությունը, պատմում է, թե ինչպես Աղվանից իշխան Վարազ-Տրդատը Իսրայել եպիսկոպոսին առաքում է Այրարատյան աշխարհը, որ սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքներից բերի Աղվանից աշխարհ։ Իսրայելը գալիս է Այրարատ, և երկար թախանձանքներից ու մեծ տիկնոջ՝ Հեղինեի (Աղվանից Ջվանշիր իշխանի քույրն էր և մարզպան Գրիգոր Մամիկոնյանի կինը), միջնորդությունից հետո Լուսավորչի ծնոտից մի մաս զիջում են Իսրայելին, որ մասունքը բերում և հանդիսավորապես տեղադրում է Գլխովանքում։ Պատմիչը միաժամանակ նշում է, որ թեև Լուսավորչի նշխարների բաժանումը արգելված էր, բայց Աղվանից եկեղեցու համար այդ զիջումը արվում է ի շահ նրա հեղինակության բարձրացման։

Աղվանից եկեղեցու առաքելական էությունն ապացուցելու մտահոգությամբ պատմիչը համակված էր դեռևս իր պատմությունն սկսելու պահերին։ Առաջին գրքի 6-րդ գլխում նա պատմում է, որ Հայաստանում քրիստոնեությունը տարածեց Թադեոս առաքյալը, որի աշակերտ Եղիշան Երուսաղեմում վարդապետ օծվելուց հետո անցավ Աղվանից աշխարհ, Գիս ավանում կառուցեց եկեղեցի և քրիստոնեություն քարոզեց։ Կաղանկատվացու Պատմության մեջ թափանցել է մի մտայնություն, ըստ որի Հայոց Արևելից երկիրը ավելի վաղ է ընդունել քրիստոնեությունը, քան բուն Հայաստանը։

Կաղանկատվացու երկի մեզ հասած ամենահին գրչագիրը (1289 թ. № 1531) ունի այսպիսի մի հատված. Հայոց Աբրահամ կաթողիկոսը (607—625) նամակ է գրում Աղվանից աշխարհ, որտեղ այն միտքն է հայտնում, որ «եթէ յառաջագոյն քան զՀայոց աթոռակալութիւն՝ կացեալ աթոռակալութեան Աղուանից» (թե Հայաստանի աթոռակալությունից առաջ հաստատվել է Աղվանից աթոռակալությունը)։ Ակներևաբար պատմական ճշմարտությանը և բոլոր աղբյուրներին հակասող այս տողերը Աբրահամ կաթողիկոսը չէր կարող գրել, և ամեն մի լրջմիտ հետազոտող պարտավոր էր դիմել Կաղանկատվացու երկի ձեռագրերին ու Աբրահամի նամակի բուն բնագրին՝ տվյալ հատվածի իրական բովանդակությունը վերականգնելու համար։ Սակայն «Աղուանից աշխարհի պատմութեան» և Աբրահամի թղթի գրչագրերին անտեղյակ որոշ «հետազոտողներ» բնագրի աղավաղված վկայության հիմամբ աշխատում են յուրովի, միտումնավոր լուսաբանել հայ առաքելական եկեղեցու և Աղվանից եկեղեցու առաջնությունները, մինչդեռ անկանխակալ քննությունից ակնհայտ է դառնում, որ երկբայելի հատվածում առկա է գրչագրական սովորական այլընթերցում, և «Գիրք թղթոցում» զետեղված Աբրահամ կաթողիկոսի նամակը հնարավորություն է տալիս ստույգ վերականգնելու Կաղանկատվացու երկի աղավաղված ընթերցումը[34]։

Ահա թե ինչու Կաղանկատվացու գիրքը այդքան հարուստ է բուն պատմության հենքի հետ կապ չունեցող հրաշապատում նյութերով ու առասպելախառն պատմություններով։ Այս պատմական երկի առաջին լուրջ թերությունը հենց նման նյութերով խճողվելու հաճախությունն է։ Սրբերի նշխարների

[34] Հայոց Աբրահամ կաթողիկոսի նամակի վկայակոչված հատվածի բնագիրը վերականգնվում է «Գիրք թղթոցի» միջոցով, որտեղ սույն նամակը զետեղված է ամբողջությամբ, առանց հետնադարյան աղավաղումների ու ընդմիջարկությունների։ Ահա տվյալ հատվածի ստույգ ընթերցումը. «Վասն այսր հարկաւոր համարեցան գրել յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթողիկոսութեան յԱղուանս, իսկ մեք ի Վիրս առ Կիւրովն»։ Այսպիսով, «Աղուանից պատմութեան» մեջ Աբրահամ կաթողիկոսի նամակի հատվածը մուծվել է սովորական գրչագրական աղավաղումով, և հազիվ թե հնարավոր է այնտեղ որևէ դիտավորություն նկատել (տե՛ս «Գիրք թղթոց», էջ 193—194)։

ու սրանց գյուտերի նկարագրությունները, ղավանաբանական վեճերի մեջբերումները, հրաշագործությունների պատմությունները և պատմության հետ չառնչվող այլևայլ նյութերի անտեղի միախառնումը խաթարում են պատմական երկի բնույթը և այն դարձնում են անհետևողական քաղագրական մի շարադրանք՝ ընթերցողին զրկելով պատմության ժամանակագրական ընթացքը ընկալելու հնարավորությունից։ Այսպես, երկրորդ գրքի 34-րդ, 35-րդ գլուխները շարունակությունն են 28-րդ գլխի. միջին երեք գլուխները, որ կապ չունեն պատմության հետ, ընդմիջարկել են պատումը։

Գիրք գրող կամ խմբագրող հեղինակը չէր կարող չնկատել այդ պարագան։ Սակայն նախ՝ այդ դարերում նման բնույթի նյութերին առանձնակի կարևորություն էին տալիս, և ապա՝ ընդմիջարկություններ կարող էին շարունակաբար ավելացնել հետագա դարերում։ Այս հանգամանքի վրա պնդում են բոլոր բանասերները, և ապացուցված է, որ սովի ու ժանտախտի նկարագրությունը, օրինակ, կաթողիկոս Վիրոյի ստեղծագործությունն է, իսկ երրորդ գիրքը և երկի վերջնական խմբագրումը ուրիշ ձեռքի գործեր են, որ կատարվել են X դարում։

Չնայած այս ակնհայտ թերությանը, Կաղանկատվացու երկի արժեքը բարձր է հենց այսօրվա գնահատությամբ։ Հայոց Արևելից Կողմանց պատմական կյանքի տարեգրությունը, իբրև հայոց ընդհանուր պատմության մի մաս, մանրամասն ու բազմակողմանի չի լուսաբանված մեր մյուս պատմիչների կողմից։ «Աղուանից պատմութեան» հեղինակը օգտագործելով հայ մատենագրության բոլոր տեղեկությունները Հայոց Արևելից Կողմանցի մասին, լրացնում է նրանց թերիները և իր կարողությունների չափով ամբողջացնում մեր այդ երկրամասի անցյալի պատմությունը։ Առաջին գրքի 5-րդ գլուխը, որ դժբախտաբար շատ համառոտ է, մի չքնաղ նկարագրություն է երկրի բարեբերության, կանաչության, հանքային հարստության, ջրառատության։ Եթե այս հատվածը ավելի ընդարձակ տրվեր, կդառնար Ղազար Փարպեցու՝ Արարատյան դաշտի նկարագրությանը հավասար մի գործ։ Այս փոքրիկ հատվածում իսկ զգացվում է Կաղանկատվացու նկարագրելու շնորհքը և մանավանդ նրա ջերմ սերը հայրենի բնաշխարհի հանդեպ։

Առաջին գրքի 16-րդ գլխում պատմիչը ցույց է տալիս, որ Վաչեից մինչև Բարեպաշտ Վաչագանը՝ մոտ երեսնամյա մի ժամանակաշրջան, երկիրը չուներ իր թագավորը։ Այս գլխում պատմագիրը մերկացնում է պարսից Պերոզ արքայի նվաճողական քաղաքականությունը Աղվանից աշխարհի վերաբերմամբ։ Ցասումով է նկարագրում, թե ինչպես է նա քանդում եկեղեցիները, հալածում, աքսորում ու կոտորում քրիստոնյաներին և ձգտում հրով ու սրով տարածել մոգության դիվապաշտական կրոնը։ Պատմագիրը վշտով է հայտնում Հայաստանի, Վրաստանի ու Աղվանից աշխարհի բազմաթիվ նախարարների բռնի կամ շքեղ խոստումներով կատարված կրոնափոխությունը, երկրում ատրուշանների կառուցումը։

Այս հատվածը, որ Պերոզի նվաճողական քաղաքականության բացահայտման նկարագրությունն է, պատմական առումով շատ արժեքավոր է, որովհետև շարունակությունն ու ընդօրինակումն էր Հազկերտի վարած քաղաքականության, որ հետամտում էր Անդրկովկասի ժողովուրդների ձուլման, մարզպանների ու մարզպանությունների իսպառ վերացման։ Ընդամենը ութ տարի էր անցել Ավարայրի ճակատամարտից, թվում էր, թե այդ ճակատամարտից հետո պետք է մեղմանար պարսից քաղաքականությունը ենթակա

ժողովուրդների նկատմամբ։ Բայց Կաղանկատվացին փաստերով նշում է, որ հին քաղաքականությունը նույն խստությամբ շարունակվում էր այնքան ժամանակ, մինչև որ հեփթաղները հյուսիսից խուժում, ջարդում են պարսիկներին ու ոչնչացնում հենց այդ նվաճողական քաղաքականության հեղինակ Պերոզին։

Այնուհետև Կաղանկատվացին 17-րդ գլխում պատմում է Ուտիքում և հատկապես Արցախում քրիստոնեության վերատարածման, աղանդների և մազդեզական կրոնի վերացման մասին։ Վաչագանը վերականգնում է նախարարական տների իշխանությունը, բոլոր փախած իշխաններին վերադարձնում և հաստատում է իրենց կալվածքներում։ Պատմում է, որ երկիրը մտնում է իր բնականոն զարգացման ընթացքի մեջ, հաստատվում է թագավորությունը։

Պատմիչի հաղորդած տեղեկությունները Վաղարշի (Պերոզից հետո) նոր քաղաքականության, Վաչագան Բարեպաշտի՝ երկրում իշխանական տներ վերահաստատելու, քրիստոնեությունը մասամբ բռնի վերատարածելու, աղանդները վերացնելու, կախարդներին, քրմերին ոչնչացնելու, երկիրը բարեկարգելու և այլ գործերի մասին պատմական արժանահավատ հաղորդումներ են, որոնք հեղինակը կարող է քաղած լինել մեզ անհայտ աղբյուրներից։ Իսկ դրանք պատմական մեծ արժեք ունեն հայոց պատմության համար Վարդանանց հերոսամարտից հետո ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները ուսումնասիրելու առումով։

Ինչ վերաբերում է երկրի մշակութային կյանքին, ապա հաջորդ 18-րդ գլուխը բացառիկ մի հատված է, ուր պատմիչը նկարագրում է, թե ինչպես Բարեպաշտ Վաչագանը վերացված ու ոչնչացված կախարդների, դյութերի, քրմերի, մատնահատների, դեղատուների մանուկներին հավաքում էր իր սեփական Ուտակ գյուղում, տեղավորում դպրոցներում, գրել-կարդալ ու քրիստոնեական կարգուկանոն ուսուցանել տալիս և, մինչև իսկ այցելելով գյուղերը, աշակերտներին խմբում էր իր շուրջը և միաբերան կարդալ տալիս ու լսում նրանց։

Այս գլխում մանրամասն նկարագրվում են մատնահատների, դեղատուների վայրենական աղանդների առանձնահատկությունները, այդ աղանդների հեղինակներն ու կրողները, որոնք մեծ չարիք էին գործում երկրում։ Աղանդների պատմության, քրիստոնեության տարածման, դպրոցների վերաբացման առնչությամբ այս գլուխը հսկայական պատմական ու ճանաչողական արժեք է ներկայացնում։

Կաղանկատվացու երկի առաջին գրքի 26-րդ գլուխը նույնպես պատմական խոշոր նշանակություն ունեցող վավերագիր է։ Սա մի կանոնադրություն է, որ կազմվել է ու վավերացվել V դարի վերջում, Արցախի Աղվեն վայրում, Վաչագան Բարեպաշտի ու Շուփհաղիշո եպիսկոպոսի կազմակերպած եկեղեցական ժողովի կողմից։ Աղվենի ժողովի այս կանոնները արժեքավոր են այն տեսակետից, որ բացահայտում են V դարի Հայաստանում գոյություն ունեցող եկեղեցիների ու վանքերի տերերի իրավունքները, եկեղեցուն տրվող տուրքերի տեսակներն ու չափերը, գործված հանցանքների ու զանցանքների դիմաց պետական պատիժները, ժողովրդի ու հոգևորականության իրավունքների սահմանածիրերը և այս կարգի այլ օրինականացումներ։

Կանոնները հիմնականում խարսխված են մեր ընդհանուր եկեղեցու կանոնագրքերի ընձեռումների վրա, բայց և պարունակում են տեղական հար-

մարեցումներ՝ կապված երկրի տնտեսական կյանքի ու տեղական ավանդությունների հետ։ Աղվենի ժողովի կանոնները ցույց են տալիս, որ Վաչագան Բարեպաշտը մի գործունյա թագավոր է եղել, որին մեծապես հետաքրքրել են երկրի մշակութային կյանքի զարգացումը, իրավական կարգականոնների ստեղծումը, հայ եկեղեցու հզորացումը, որը խոշոր գործոն էր մարդկանց հետամնաց վիճակից դուրս բերելու, քաղաքակրթելու, պետության ու երկրի օրինավոր քաղաքացիներ դարձնելու ճանապարհին։ Ըստ այդ կանոնների, արգելվում էին կնաթողությունը, մեռելների վրա հեթանոսական ողբն ու կոծը, կախարդներին ու քրմերին դիմելը, հոգևոր հայրերի և աշխարհիկ իշխանավորների չարաշահումները և այլն։

Մեր պատմության համար թանկարժեք նյութ է Հայոց Արևելից Կողմանց տարածքներում Մեսրոպ Մաշտոցի ծավալած կրթական ու լուսավորական գործունեության նկարագրությունը, որ հանգամանորեն տրված է նույն գրքի 27 և 28-րդ գլուխներում։ Սա ցույց է տալիս, թե Հայոց մեծ լուսավորիչը որքան էր շահագրգռված Հայաստանի ծայրագավառների ժողովրդի վիճակով։ Նա շատ լավ գիտեր, թե այդ ծայրամասերում դեռևս հեթանոսական ու վայրենական ինչ վայրագ սովորույթներ կան, որոնք խոչընդոտում են ժողովրդի բնականոն զարգացմանը և լուսավորության տարածմանը։ Եթե Մեսրոպի գործունեության այս դրվագները Կաղանկատվացու գրքի մեջ են անցել գրավոր աղբյուրներից, ապա դրանք պատմական ճշմարտություններ են և շատ արժեքավոր փաստեր, որոնք նորովի են լուսաբանում պատմական Հայաստանի տարբեր գավառներում Մեսրոպի ծավալած լուսավորական գործունեությունը, գրի ու գրականության տարածումը։ Իսկ եթե Կաղանկատվացին այդ տեղեկությունները վերցրել է ժողովրդական ավանդություններից, ապա դա ցույց է տալիս, թե ծայրամասերում ապրող հայությունն ինչպիսի երախտագիտությամբ էր հիշում իր առաջին մեծ ուսուցչին, որի մասին եղած նյութերը խնամքով պահել հասցրել էր մինչև VII դարը։

«Աղվանից աշխարհի պատմությունը» չափազանց արժեքավոր աղբյուր է ողջ Անդրկովկասի պատմության, հյուսիսային ցեղերի ու Անդրկովկասի ժողովուրդների, սրանց և Պարսկաստանի ու Բյուզանդիայի փոխհարաբերությունների մի շարք հարցեր պարզաբանելու տեսակետով։ Խազարների արշավանքների և դրանց քաղաքական ու տնտեսական դրդապատճառները ուսումնասիրելու առնչությամբ այս գիրքը ցայժմ մնում է իբրև անփոխարինելի մի աղբյուր։ VII դարի առաջին կեսի պարսկաբյուզանդական պատերազմները լավ առիթ են ծառայում, որ խազարները (ըստ Կաղանկատվացու խազիր) շարժվեն դեպի Անդրկովկաս։ Մինչ այդ նրանք Դերբենդից այս կողմ անցնել չէին կարող։ Բյուզանդիան դաշնակից է դառնում խազարների հետ ընդդեմ Պարսկաստանի և նրանց հրապուրում դեպի Անդրկովկաս։ Մինչ այդ Պարսկաստանը զսպում էր նրանց ախորժակը։ Իսկ երբ Պարսկաստանը մեծ պատերազմի մեջ է մտնում Բյուզանդիայի դեմ, Հերակլը խազարներին իբրև դաշնակից հրավիրում է դեպի հարավ, և նրանք իրենց առաջնորդ Ջեբու խաքանի գլխավորությամբ խուժում են Հայոց Արևելից Կողմանքը և գնում, պաշարում Տփղիսը, որ հռչակված էր հարստությամբ ու փարթամ կյանքի վայելքներով։ Կաղանկատվացին վիպական մանրամասնություններով է պատմում պաշարված քաղաքի ժողովրդի ծաղրուծանակի մասին, որ ուղղված էր պաշարող զորքի առաջնորդի հասցեին։ Իսկ այս վերջինը անզոր կատաղությամբ. վրիժառության հաստատուն երդումով ձեռնունայն վերադառնում է իր երկիրը։

Մի տարի հետո, 628 թ. Ջեբու խաքանը, ըստ Հերակլի հետ կապած դաշինքի, Անդրկովկաս է ուղարկում իր որդի Շաթին։ Շաթի այս արշավանքը աղետաբեր էր Անդրկովկասի, մասնավորապես Հայոց Արևելքից Կողմանքի երկու մեծ նահանգների՝ Ուտիքի և Արցախի համար։ Տփղիսը երկրորդ անգամ պաշարելուց և գրավելուց հետո Շաթը վերադառնում է Ուտիք և Արցախ։ Պատմիչը զարհուրելի գույներով է նկարագրում Թիֆլիսի անասելի կոտորածն ու ավարառությունը, Շաթի հրոսակների խժդժությունները, սրանց արտաքին կերպարանքը, մանավանդ անգթությունն ու դաժանությունը։ Կաղանկատվացու նկարագրած այս արշավանքները դեպի հարավ հասնում են մինչև Ատրպատական, իսկ դեպի արևմուտք՝ մինչև Սևանի ափերը։

Այդ ցեղերի ռազմամոլության, վայրագության, նրանց կյանքի, կենցաղի, սովորույթների, պատերազմելու եղանակների, բնավորության նկարագրության բնագավառում Կաղանկատվացին նախակարապետ է դառնում միջնադարի հայ պատմիչների համար, որոնք հետագա դարերում վաչկատուն ցեղերի աշխարհավեր ասպատակությունների ու ավարառությունները նկարագրելիս մեծապես օգտագործում են նրա հնարանքները (Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Ականցի, Ստ. Օրբելյան)։

Կաղանկատվացու երկը անգնահատելի արժեք է ստանում հատկապես խազարների պատմության համար, մանավանդ որ պատմիչը բավականաչափ մանրամասն է պատմում նրանց ռազմական գործողությունների, կենցաղավարության, զենքերի, ուտելիքների, ձիերի, հագուստի, արտաքինի մասին։ Սրանք բոլորը ստուգապատում նկարագրություններ ու արժանահավատ տեղեկություններ են, որոնք կարևոր նշանակություն են ստանում պատմության բեմից անհետացած այդ ժողովրդի ուսումնասիրության համար։

Կաղանկատվացին լրացնում է նաև արաբական արշավանքների պատմությունը։ Նրա տեղեկությունները վերաբերում են արաբների մուտք գործելուն Անդրկովկաս և նրանց մղած կռիվներին ու շահատակություններին։ Կաղանկատվացին է նկարագրում Մուհամեդ Իբն Մրվանի գործունեությունը Հայաստանում ու Աղվանից աշխարհում VII դարի վերջում և VIII-ի սկզբում։ Նա գրում է, թե ինչպես Իբն Մրվանը 696 թվին զորքերի մի մասը թողնելով Դվինում, շարժվում է Դերբենդ՝ խազարներին ու հոներին զսպելու, որտեղից նրանք մուտք էին գործում Անդրկովկաս։ Հայերը օգտվելով առիթից՝ ապստամբում և ջարդում են Դվինի կայազորը։ Իբն Մրվանը վերադառնում է Դվին ու վրեժ լուծում ապստամբներից, կոտորում նախարարներին, գրավում երկրի ամրոցները, հրով ու սրով վերագրավում ողջ երկիրը։ Նույնիսկ այդ դաժան նվաճողի մահվան մանրամասներն է պատմում Կաղանկատվացին։

«Աղվանից աշխարհի պատմութիւն»-ը սկզբնաղբյուր է նաև Հերակլի ու Խոսրով Փարվեզի մղած պատերազմների, այս վերջինի կործանման և Կավատ Բ-ի գահակալության պատմության համար։ Խոսրով Փարվեզի տիրակալության և նրա անփառունակ վախճանի մասին Կաղանկատվացին պատմում է վիպական մանրամասնություններով ու գունեղ պերճ ոճով։ Առանձնապես ոգևորությամբ է նկարագրում բռնավորի դեմ ուղղված համաժողովրդական ապստամբությունը, Անհուշ բերդից արձակված շղթայակապ կալանավորների երթն ու ցասումը, հեգնանքը մենակ ու լքված վախկոտ բռնավորի դեմ հասնում է տիպականության։ Սակայն պատմիչը ի հակադրություն Խոսրովի, Կավատին ներկայացնում է իբրև բարի թագավոր՝ մոռանալով, որ նրա բարությունը տվյալ դեպքում միայն հարաբերական ու շահադիտական էր. այդ

նույն բարի Կավատը անմիջապես սպանում է հորը, անդամահատում իր եղբայրներին և, այդ էլ քիչ համարելով, ի վերջո կոտորում է բոլորին։

«Պատմութեան» երրորդ գրքի 21-րդ գլխում հիշատակվում է պատմական մի կարևոր իրադարձության մասին ևս, որը վերաբերում է երեք հազար հոգուց կազմված ռուսական մի զորամասի՝ Անդրկովկաս մուտք գործելուն։ Դասխուրանցին չի հայտնում, թե դա ե՞րբ էր, ինչպե՞ս էր այդ զորաբաժինը անցել Դերբենդը, ի՞նչ կռիվներ էր մղել ճանապարհին, որտեղի՞ց էր եկել։ Պատմիչը լոկ փաստն է արձանագրում։ «Աղվանից պատմութեան» բանասիրական քննությունները պարզել են, որ ռուսիկների այս արշավանքն Անդրկովկաս տեղի է ունեցել 944 թ.։ Այս մասին հաղորդումներ կան նաև ժամանակի արաբական աղբյուրներում։ Կաղանկատվացին ռուսական այդ զորաբաժնի արշավանքի մասին պատմում է. «Ընդ նոյն ժամանակս բախի ի կողմանցն հիւսիսոյ այլադէմ, օտարանշան ազգ իմն, զոր ռուզիկ կոչեն, որք ոչ աւելի քան զերիս ժամանակս ընթանալով իբրև զմրրիկ ընդ համատարած աշխարհածով ելիցն Կազբից յանկարծ հասանէին ի մայրաքաղաքն Աղուանից ի Պարտաւ, ոչ ուստեք լեալ կարողութիւն ընդդիմակայել նոցա»։

Կաղանկատվացու երկը միակ աղբյուրն է Միհրական ու Եռանշահիկ հարստությունների ծագման ու պատմության ուսումնասիրության համար։ Այս տոհմերը կարևոր դեր են կատարել մեր պատմության մեջ։

Կաղանկատվացու գրքի կարևոր արժանիքներից է նաև ժողովրդի կենցաղի, հեթանոսական պաշտամունքների, հավատալիքների, սովորույթների, մերձամուսնությունների և այլ փոխհարաբերությունների նկարագրությունը։ Նա հավաստի տեղեկություններ է հաղորդում երկրում գոյություն ունեցող չարագործ աղանդների մասին, որոնք վերացվեցին քրիստոնեության, գիր ու գրականության տարածումով։

Հետազոտողներից ոմանք նկատել են, թե, իբր, «Աղվանից պատմությունը» ոչ այնքան ժողովրդի, որքան երկրի պատմությունն է։ Այդ կարծիքը թյուրիմացություն է։ Կաղանկատվացու երկը իսկական պատմությունն է Ուտիքի և Արցախի հայ ժողովրդի, ինչպես նաև Կուրից այն կողմ բնակվող աղվանական ցեղերի։ Հիշատակվում են նաև բուն Աղվանքի (Անդրկուրյան) նախամարզպանական շրջանի վարչական կազմավորումների մասին՝ թագավորների ցանկի տեսքով, որ դարձյալ քաղված է հայ պատմիչների երկերից։ Ցավոք, աղվանական թագավորացանկում ավելի ուշ ներմուծվել են մարզպանական և հետագա շրջանի հայ թագավորների ու իշխանների անունները, որի հետևանքով առաջացել են ժամանակաշրջանի պատմական իրադրության գնահատության թյուր պատկերացումներ[35]։

Այդ ժողովուրդների կյանքը, կենցաղը, սովորույթները, մշակույթը այն ժամանակվա հասկացությունների չափով, գուցե և ավելի, նկարագրվել են այս գրքում։ Աղվանից աշխարհի եկեղեցին, որ հայոց եկեղեցու մի մասն էր կազմում (այնպես, ինչպես Սյունիքի նախաթոռ եկեղեցին, Աղթամարի, հետագայում նաև Սսի կաթողիկոսությունները) իր պատմության արտացոլումը լայն կերպով գտնում է Կաղանկատվացու գրքում։ Պատմիչը երկրորդ գրքի առաջին իսկ գլխում, գնահատելով իր աշխատանքը, ասում է, որ Արևելից կողմերում շատ զրույցներ կան, որոնք չեն անցել նախորդ պատմությունների մեջ, մենք պատշաճ համարեցինք մեր գրքում մեջ բերել դրանցից մի քանիսը։

---

35 Ավելի մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, «Լրաբեր», 1971, № 7, էջ 56—60։

Իբրև օրինակ նա հիշում է հետևյալ դիպվածը. պարսից Շապուհ թագավորը զոռոզամտելով կամենում է իմանալ, թե որ ժողովուրդներն ունեն բարձ ու պատիվ. այդ նպատակով ճաշկերույթ է կազմակերպում և սեղանի շուրջը նախարարներին բազմեցնում ըստ նրանց աստիճանի։ Հայ նախարարների բարձն ու աստիճանը որոշելու համար դիմում է նրանց. «Զպարսից և զպարթևաց զընական Պահլաւիկս և զազատ արանց զնախագրութիւն քաջ գիտեմ. իսկ զԱրմենու զազատատոհմ և զնոցին նախապատուութիւն ոչ կարացաք գիտել՝ ոչ ի հարցն մերոց թագաւորաց և ոչ ի մատենագրաց։ Եւ արդ՝ մի յերկուց առաջի կայ մեզ նախարարացդ Հայոց՝ ցուցանել զնախնական գիր, զիւրաքանչիւր տանց զաստիճան և զպատիւ և դարձեալ մեծագոյն ունել ի մէնջ շքեղաշուք մեծարանս։ Ապա եթէ ոչ կարէք ակն յայտնի Արեացս դիդիս ցուցանել, զնախանիստ բարձ, զպատիւ, և՛ զտուն, և՛ զհող, և՛ զջուր, և՛ զամենայն ստացուածս ձեր Արեաց ազատ արանց շնորհեսցուք և զձեզ ապաշնորհս արձակեսցուք»։ Եւ նոյնժամայն խորհուրդ բերեալ իշխանացն Հայոց Մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զԱգաթանգեղեայ Պատմութիւնն ցանկալի։ Եւ հրամայեալ ընթեռնուլ և թարգմանել ի պարսիկ գիր և լեզու։ Եւ իմացեալ, եթէ սկիզբն յԱրտաշրէ առնէ՝ ի նախնւոյն իւրմէ, առաւել զուարճացեալ և ներբողումն դրոցն առնելով՝ դնէր ի վերայ աչացն իւրոց խանդաղատելով։ Եւ գտեալ ի նմա գիր տասնեւօթն[36] բարձի՝ սկսանէր ըստ այնմ յարդարել զնիստ իւրաքանչիւրոցն ի սեղանն արքունի» (ստ. էջ 106—107)։ Այսպիսի զրույցների շարադրումը նույնպես կարևոր նշանակություն է ստանում, քանի որ դրանք չկան մեր մյուս պատմիչների գործերում։

Հայաստանի տնտեսական կյանքի մասին քիչ թե շատ լրիվ պատկերացում կազմելու համար չենք կարող հաշվի չառնել Կաղանկատվացու հիշատակած հարկերի ու տուրքերի տեսակներն ու սրանց գանձման պարագաները։ Կաղանկատվացու տվյալներով երկիրը կառավարվում էր բնատնտեսությամբ։ Հարկերը մեծ մասամբ գանձվում էին բնաբերքերով. դրամական շրջանառությունը երկրորդական նշանակություն ուներ։ Աղվենի ժողովի կողմից հաստատված կանոններում թվարկված են եկեղեցուն իբրև պտղի կամ տասանորդ տրվող հետևյալ հասույթները՝ ցորեն, գարի, քաղցու, հաց, գինի, ոչխար, բուրդ, պանիր, ձի, հորթ, խոշոր եղջերավոր անասուններ։

Այդ կանոնների մեջ արժեքավոր տեղեկություններ կան եկեղեցու կարգ ու սարքի վերաբերյալ։

«Աղվանից պատմությունը» անուղղակիորեն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում խաշնարածության վերաբերյալ։ 851 թ. այնքան անձրևներ են գալիս, որ հեղեղը խաշնարածների ութ հարյուր վրան է քշում տանում։

Հիշենք նաև, որ Կաղանկատվացուն ենք պարտական VII դարի հայ բանաստեղծ Դավթակ Քերթողի նշանավոր «Ողբ»-ի համար, որ գրված է Աղվանից աշխարհի իշխան Ջվանշիրի եղերական մահվան առիթով։

«Ողբ»-ի հորինվածքը հետևյալ ձևով է զարգանում. բանաստեղծը սկզբում նկարագրում է ժողովրդին պատած համատարած սուգը, որն ինչքան էլ թանձր է իր գույներով, այնուամենայնիվ ժամանակի իրական վիճակն է ներկայացնում։ Մեր պատմությունից շատ լավ գիտենք, թե հին դարի հայ մարդը ինչ ողբ ու կոծ էր բարձրացնում, երբ մեռնում էր թագավորը, նշանավոր որևէ իշխան, որոնց հետ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում։ Քերթվածի

36 Իրոք, Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, 414 էջում հիշատակված են հիշյալ «բարձ»-երը։

*սկզբում ասվում է, որ Ջվանշիրը երկրի համար կենդանի վեմ էր, ամուր պարիսպ, բանավոր աշտարակ։ Այս պատճառաբանությամբ է հիմնավորվում երկրին պատած մեծ սուգը, մանավանդ որ բանաստեղծը կոչ է անում ժողովրդին սգալու մեծ իշխանի ողբերգական մահը։ Կա նաև մի այլ հանգամանք․ Քերթողը ասում է, որ մեր խաղաղությունը դառնության փոխվեց և ավազակային հորդաներ են թափվելու մեզ վրա, «Զի մեծասքանչ տէրութիւնն կործանեցաւ, Եւ հրաշալի պետութեանն շիջաւ ճառագայթ»։*

*Այս բոլորից հետո գալիս է Ջվանշիրի չափազանցված գովքը՝ ի հակադրություն անարգ մարդասպանի։ Մեկը մորենու մեջ նստած առյուծ էր, բարի հոգի, հանճարեղ մի մարդ, իսկ մյուսը՝ չարի ծնունդ էր, անօրինության զավակ, որ անեծքի է արժանի, և Դավթակը թանձր անեծքի մի ամբողջ հեղեղ է թափում մարդասպանի վրա։ Այս հակադրությունը և գրականացված ժողովրդական անեծքը քերթվածի ամենաուժեղ տեղն է։ Անեծքին հետևում է Ջվանշիրի բուն գովքը, որը ժողովրդական ողբերգու կանանց գովքերն է հիշեցնում իր ողջ հորինվածքով ու բովանդակությամբ։ Բանաստեղծ Դավթակը մանկությունից սկսած մինչև իր հասուն տարիքը հաճախ է լսել հայ մայրերի, քույրերի, վարձու ողբերգուհիների մեռելականչի գովքերը, որոնց հետ խառն են անեծքը՝ մահվան պատճառին ուղղված, հույսերի փլուզման դառն գանգատները, կենդանի մնացածների անելանելի վիճակի ծանրությունը, մաշող կարոտի մրմունջները։*

*Դավթակի «Ողբ»-ի մասին ասված է, թե ոճով հիշեցնում է Կոմիտասի «Անձինք նուիրեալք» շարականը։ Այս դիտողությունը արդարացի է։ Ահա նմանության մի քանի տողիներ.*

Բեկումն մեծ, որ եղև արևելից աշխարհիս,
Եւ աղաղակ կործանման հնչեաց ընդ երկիր.
Ազգք և ազինք լուիցեն զբարբառս իմ,
Եւ երկրածինքս ամենայն ողբասցեն ընդ իս:

*(Դավթակ Քերթող)*

Բարբառք երկնաւորք լցին երկիր,
Քանզի հոտ անուշից բուրեցայք ի Քրիստոս:
Ողջակէզք բանաւորք և զոհք փրկութեան
Եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ:

*(Կոմիտաս, «Անձինք նուիրեալք»)*

Դարձաւ ի դառնութիւն խաղաղութիւն մեր
Եւ դրունք հինից տեղացին ի մեզ.
Զի մեծասքանչ տէրութիւնն կործանեցաւ,
Եւ հրաշալի պետութեանն շիջաւ ճառագայթ:

*(Դավթակ Քերթող)*

Զօրք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին,
Եւ կանայք ի յերկինս գրեցան զինաւորք.
Կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին,
Խաչակից լինելով կուսածին արարչին:

*(Կոմիտաս, «Անձինք նուիրեալք»)*

*Սակայն այս նմանությունը զուտ ձևական է։ Դավթակը օգտվել է շարականի ձևից՝ իր քերթվածին տալով զուտ աշխարհիկ ողբի բովանդակություն, որով նա դարձել է առաջին աշխարհիկ բանաստեղծական բարձրարվեստ երկի հեղինակ մեր հին գրականության մեջ։*

Ե՛վ Կոմիտասի «Անձինք նուիրեալք» շարականի, և՛ Դավթակ Քերթողի «Ողբ ի մահն Ջուանշիրի մեծի իշխանին» եղերերգի վրա նկատելի է ոսկեդինիկ Եղիշեի ազդեցությունը։ Նշենք նաև, որ «Ողբը» գրված է իբրև ծայրակապային ստեղծագործություն (ակրոստիքոս)։

* * *

Նյութերի պակասի, կողմնակի անձանց կատարած լրացումների, հեղինակի մոռացության, չափազանցումների և այլ պատճառներով «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում տեղ են գտել մի շարք անճշտություններ, ժամանակագրական շփոթումներ ու այլ կարգի թերություններ։

Այսպես, Կաղանկատվացին Ուռնայրին վերաբերող նյութը վերցրել է Խորենացուց, բայց Խորենացին չի ասել, թե Ուռնայրը Տապուհի քրոջ ամուսինն է։ Հավանորեն, մի ինչ-որ ավանդություն է դա, որ պատմիչը ճշմարտության տեղ է ընդունել ու նույնությամբ հաղորդել մեզ։ Այդպիսի անիրական հաղորդման պատճառ կարող է լինել նաև պատմիչի տեղական սնափառությունը։

Կաթողիկոսների ու թագավորների ժամանակագրական կարգի մեջ կան խախտումներ ու անհամաձայնություններ։ Ինչպես երևում է, պատմիչը ուշադիր կամ զուցե հմուտ չի եղել պատմական իրադարձությունները վերլուծելու ու ճիշտ բացատրելու գործում։ Մինչև իսկ պատմահայր Խորենացու նման բազմահմուտ հեղինակն է այսպիսի պարագաներում սայթաքում։ Կաղանկատվացուն շատ մեծ պահանջներ ներկայացնել չենք կարող։ Պատմիչը չի ասում, թե ինչու Ջվանշիրը ընդունեց արաբների տիրապետության ծանր լուծը, ինչու նրա հայրը կողմնակից էր այդ տիրապետության ընդունմանը, բայց հետո Ջվանշիրը դիմում է Կոստանդին կայսեր, որպեսզի նա գա և իշխի երկրի վրա։

Կաղանկատվացին ասում է, թե Կոստանդինը Ջվանշիրին շնորհում է մեծամեծ պարգևներ և դարձնում պրոտոն պատրիկ ու թույլատրում, որ նա իր արքունիքի ավագանուց հազար երկու հարյուր մարդու շնորհի բյուզանդական աստիճաններ՝ պատրիկություն, հյուպատոսություն, հյուպարքոսություն, ստրատելատություն, էլիստություն։ Այս կապակցությամբ մեջ է բերվում կայսեր հրովարտակը, որտեղ նվերների մասին խոսք կա։ Ըստ հռչակավոր բյուզանդագետ Ն. Ադոնցի, Կոստանդինի այս հրովարտակը, ինչպես նաև Ջվանշիրի թուղթը, վավերական չեն. առասպելական ու չափազանցված են նաև կայսեր շնորհած ընծաները, 1200 մարդուն տրվելիք պատիվներն ու աստիճանները և այլն։

Ըստ Կաղանկատվացու, կայսրը Ջվանշիրին նվիրում է նաև կենաց փայտից, որից նա ոչ ոքի չէր նվիրել։

Պատմությունից հայտնի է, որ 660 թվականին Կոստանդինը Պարսկաստան կամ Արևելք չի գնացել։ Նա Հայաստան է եկել իր թագավորության 12-րդ տարում՝ 653 թվականին։ 659 թ. կամ դրանից հետո Կոստանդինը Հայաստանում չի եղել և չէր կարող Ջվանշիրին Վաղարշապատում ընդունել։ Նա չի եղել նաև մարերի Քունգր գյուղում և չէր կարող այնտեղ կենեղուտ խաչից մաս հատկացնել նրան։ Հնարավոր չէր, որ նա Կոստանդինի կողմից նշանակվեր իշխան Վրաստանի սահմաններից մինչև հոների դրունքը։ Մուավին այդ տարածությունները մինչև Ճորա պահակը հանձնել էր Թեոդորոս Ռշտունուն և ոչ թե Ջվանշիրին։

Կաղանկատվացու երկը սոսկ պատմություն չէ։ Հեղինակն առանց ընտրության օգտվել է բազմաբնույթ աղբյուրներից։ Պատմական անցքերի շա-

բազրմանը միահյուսվում են վարքագրություն, վկայաբանություն, հերոսապատում, հրաշապատումներ, կենցաղագրություն, սովորույթների նկարագրություններ և այլն։ Եթե նկատի չունենանք վկայաբանությունները և հրաշապատումները, մնացած նյութերը շատ օգտակար են Հայաստանի այն ժամանակվա ծայրագավառների իրավիճակը այս կամ այն չափով ճանաչելու համար։

Խոսելով «Աղուանից աշխարհի պատմութեան» ոճի մասին, պետք է ասենք, որ այն բազմաբնույթ է ոչ միայն այն պատճառով, որ իր մեջ ամփոփում է այլևայլ թղթեր, վարքագրություններ, հերոսապատումներ, կանոններ, վկայաբանություններ և այլն, որոնք տարբեր հեղինակների գրություններ են և իրենց ներքին բովանդակությամբ պայմանավորված՝ միմյանցից ոճաբանորեն տարբեր, այլև ժամանակագրորեն հիշյալ նյութերը իրենց ոճով զանազանվում են։ Եթե նյութերը դասավորված լինեին ժամանակագրական կարգով, հնարավոր կլիներ դարից դար հետևել գրքի ոճի զարգացմանն ու փոփոխություններին և գնահատել դրանք ըստ արժանվույն։ Բայց քանի որ դասավորությունը կանոնավոր չէ, ապա ամեն մի առանձին վերլուծություն կարող է թյուրիմացությունների հանգեցնել։

Ընդհանրապես պետք է նշել, որ Կաղանկատվացին պատմելու և նկարագրելու լավ շնորհք ունի, նա առարկաները, դեպքերը, երևույթները նկարագրում է դիտողականություն ունեցող գրագետի հմտությամբ։ Արտաքին նկարագրությունները փայլուն են, որ ակնառու երևում է նաև վերևում մեջբերված հատվածներից։ Այդպիսի գեղեցիկ նկարագրություններ են Ջվանշիրի սպանության, Իսրայելի տեսիլքի պատումները (Գիրք 2, ԻԹ)։ Ճիշտ է, տեղ-տեղ նա հետևվում է ճարտասանական ոճի ընդունված ձևերին ու կանոններին, մանավանդ գրությունների սկզբում, բայց հետո մոռանալով՝ անցնում է իր բնական, ազատ ու հստակ շարադրանքին։ «Լերինք մշտնջենաւորք և ծովք անդնդայինք ալեկոծեալք հնազանդեալ կան բանին աստուծոյ, քանզի վիրնաոաք հրամանն յորժամ հայի յերկիր, դողացուցանէ զնա, և ի մերձելն ի լերինս՝ ծխին։ Որպէս և այժմ ահա յերեսաց ահի տեառն բարձրացեալ բլուրք հարթեալ հաւասարեցան, և այեփարթամ խորոցն ջրայեղց բռնութիւնքն անդէն յինքեանս սուզան» (սատ, էջ 192)։

Բնության այս վերամբարձ նկարագրությանը զուգորդվում է պարսից պետության հզորության նույնքան վերամբարձ նկարագրությունը. «որպէս ահագին փառք Պարսից տէրութեանն խոնարհեցան, զամպախրոխտ բարձրութիւնս նորա խորք ծածկեցին։ Լռեցին թևաւորք արձագանք խորոց ի հողմուստ եռանդանէ, և փուշք ագարակի օդասլաց թռչմամբ եկեալ տողաւորեցան ի վերայ մկանանց լայնատարած ծովուն։ Զի որպէս ջուրք բաղումք, որ կոհակաշարժք բռնութեամբ ծաւալասոյզ առնէին զերկիր, էր երբեմն ժամանակ, յորժամ թագաւորք Հռոմոց ամբոխեալ զօրօք այնպէս հիածածուկ զընդհանրական աշխարհիս առնէին բազմութիւնս» (Գիրք 2, Իէ, սատ, էջ 192)։ Ագաթանգեղոսի երկի սկզբի հատվածը հիշեցնող այսպիսի վերամբարձ ու խճողված հատվածներին զուգընթաց կան պարզ, անպաճույճ կտորներ։ Օրինակ, երկրորդ գրքի 17-րդ գլուխը, որ մի սովորական պատմություն է, որտեղ պատմիչը դիտողություններ, վերագնահատումներ է անում, մինչդեռ վերևում բերված հատվածները խճողված են ճարտասանական, վերամբարձ հնարանքներով։

Կաղանկատվացին վարպետ պատմող է և իբրև այդպիսին իր գրածի մեջ

ներդնում է սեր, ջերմություն, հույզ և հենց դրանով վարակում ընթերցողին։ Մեզ հայտնի են մեր գրականության մեջ թափանցած կրոնական, անհույզ, սխոլաստիկ հատվածներ, որոնց մեջ հոգի ու շունչ չկա։ Բայց հապա կարդացեք «Ջվանշիրի աղոթքը» և տեսեք, թե ինչ ջերմ սիրտ ու հոգի կա այդ անպաճույճ, անզարդ, բայց հոգեկիր աղոթքի մեջ (Գիրք 2, Իէ)։ Եթե նույնիսկ ընդունենք, որ դա քաղագրություն է, դարձյալ պատիվը պատկանում է հեղինակին, որ այդպիսի կաթոգին խոսքը ավանդել է սերունդներին։

Եվ որովհետև այս գրքի մեջ թափանցել են և՛ վիպական, և՛ դյուցազներգական, և՛ վկայաբանական, և՛ վարքաբանական, և՛ կենցաղագրական հատվածներ, ամենուրեք զգացվում է նաև դրանց համապատասխան տարբեր ոճերի բազմազանությունը։ Եթե Ջվանշիրի աղոթքը գրված է թախծային որոշակի գույներով ու երանգներով, որ հատուկ է կյանքում հաջողակ, բայց ջերմ ու երկյուղած հավատացյալ մարդուն, ապա Ջվանշիրի անձնական բարեմասնությունները, ճակատամարտերը, քաջագործությունները նկարագրվում են դյուցազնական պաթոսով ու համապատասխան ճարտասանական ոճով։

Սա ցույց է տալիս, որ հեղինակը գրելու շնորհք, նյութը ընտրելու և յուրահատուկ ձևավորելու ճաշակ ունի։

Կաղանկատվացու լեզուն չունի դասական հայերենի հարստությունը, ձևերի պեսպիսությունը, դարձվածքների առատությունը, բայց աչքի է ընկնում ճշտությամբ, պարզությամբ ու քերականական անսխալությամբ։

Կաղանկատվացին, ապրելով Հայաստանի Արևելից Աշխարհում, իր կարողության չափով ուսումնասիրել է երկրի սովորույթները, անցյալը, հատկապես եկեղեցու դրվածքը։ Եթե նրա պատմությունն ունի ինչ-ինչ թերություններ, ապա դա պետք է վերագրել նրա պատմագիտական կարողություններին ու ժամանակին, որ հեղինակին չի ընձեռել անհրաժեշտ նյութեր ու հնարավորություններ, որպեսզի նա կարողանար գրել ժամանակագրությամբ ստույգ ու հետևողական պատմություն։

Ճիշտ է, նա չունի Խորենացու խորաթափանց մտածողությունը, մտքի կուռ տրամաբանական հետևողականությունը, ընդհանրացնելու հզոր տաղանդը, պատմագրի բարձր գիտական ըմբռնումն ու պատասխանատվությունը, բայց և օժտված է բնական շնորհքով, հմտորեն տիրապետում է իր մայրենի լեզվին, քաջածանոթ է իր ձեռքի տակ եղած մատենագրությանը։ Մեծ գիտնական չէ, բայց իբրև ժողովրդի ծոցից դուրս եկած բազմաշնորհ մի մարդ, բարձր է իր միջավայրից հենց նրանով, որ հասել է երկրամասի պատմություն գրելու բարձր գիտակցությանը։ Նա անտարբեր ժամանակագիր չէ, այլ պատմած ամեն նյութի մեջ դնում է իր զգայուն վերաբերմունքը։ Շատ դեպքերում նույնիսկ անաչառ է, պախարակում է նաև նրանց, որոնց կողմնակիցն է ինքը, բայց որոնց արարքներում անարդարություն է տեսնում։

Կաղանկատվացին իր զգացումներով, աշխարհայեցողությամբ, նպատակներով ու ձգտումներով հայրենասեր հայ է։ Նրա ամբողջ մտասևեռումը ուղղված է այն բանին, որ հյուսիսային ժողովուրդները քրիստոնյա դառնան և միավորվեն հայ եկեղեցու հովանու ներքո։ Հայաստանը Մովսես Կաղանկատվացու համար տիեզերական աշխարհ է, իսկ սուրբ Գրիգորի մասունքները այն բաղձալի սրբություններն են, որոնց համար Իսրայել եպիսկոպոսը ամեն ջանք գործադրում է նրանցից մի մաս ձեռք բերելու Աղվանքի համար։ Եվ ահա, ինչպես վերևում տեսանք, հանդես է գալիս Մեծ Հայքի տիկին Հեղինեն՝ մարզպան Գրիգոր Մամիկոնյանի կինը, որ Աղվանից երկրից էր և իր հայրենի նա-

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## I. ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ» ԵՐԿԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

*Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» երկի մեզ հասած ձեռագրերը բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբի ձեռագրերի մայրն է «Պատմութեան» ամենահին ձեռագիրը, որ պահվում է Մատենադարանում 1531 համարի տակ (հին №-ը՝ 1682)։ Այս ձեռագիրը արտագրվել է 1288—1289 թվականներին, սույն հրատարակության մեջ անվանված է* a*։ Իսկ երկրորդ խմբի ձեռագրերի մայրն է № 2561 ձեռագիրը (1664 թ.), որ այստեղ անվանված է* c*։* a *և* c *խմբերի ձեռագրերը տարբերվում են առաջին հերթին բնագրական որոշ հատվածներով, որոնցից մեկ խումբը ունի այսինչ կամ այնինչ հատվածը, կապակցությունը, բառը, իսկ մյուսը չունի։ Օրինակ,* cblers *ձեռագրերը չունեն Ա գրքի 11-րդ գլխի վերջում* «Ոչ թէ դու միայն ես անման» *տողը։ Նույն տեղում մյուս խումբը* (adghkmw)՝ *չունի՝* «Ողջ հոգւով և առողջ մարմնով և»: *Դարձյալ նույն տեղում* adghkmw՝ *չունեն՝ «Լուսաւորեա զիմ տրտմութիւնս քո ողջունաբեր թղթով։ Դու եղեր չարչարակից Քրիստոսի, նմանեա նմա ամենայնիւ. զի թէ նա ի վերայ խաչահանուացն աղաչէր չյիշել զմեղս, որչափ ևս առաւել քեզ արժան է թողուլ զիմ հեղգութիւնս»։ Այս օրինակները քաղվեցին միայն մեկ էջից։ Ավելորդ ենք համարում այլ օրինակներ բերել, դրանք հազարների են հասնում։ Այստեղ իբրև փաստ չենք բերում նաև բառական ու նախադասական զանազանությունները, որոնք դարձյալ բազմազան ու բազմաթիվ են։ Այդ բանը ընթերցողը կտեսնի ծանոթագրությունների մեջ։ Սակայն ամենակարևոր փաստը, որ երկու խմբերը որոշակի զանազանում է միմյանցից, առաջին գրքի ԻԱ, ԻԲ, ԻԳ գլուխներն են։ Այստեղ բնագրերը ըստ խմբերի այնքան են զանազան, որ երբեմն կարելի է ինքնուրույն բնագրեր համարել։ Տեղ-տեղ միայն համընկնում են, իսկ գերազանցորեն այնքան տարբեր են, որ հարկադրված* c *խմբի բնագիրը առանձնացրինք իբրև տարբերակ։ Իբրև օրինակ բերենք մի հատված զուգահեռաբար.* a *խմբի բնագիրն է. «Էր բերեալ երիցուն Մատթէ անուն կոչեցեալ ի Յոհաննէ Մանդակունւոյ՝ Հայոց կաթողիկոսէն, զոր ունէր նորին մատանեաւն կնքեալ և առաքեալ անդ երիցունս առնոյր առ իւր։ Եւ ի գալ մեծին Գրիգորի հանդերձ պատերազմակից պսակելովքն Հռիփսիմեաւ և Գայիանեաւ ի մեծ ժողովն Դիւտականու, ընդառաջ ելանէր թագաւորն հանդերձ թագուհեաւն և ամենայն մեծամեծ նախարարօքն հեռագոյն ի գեղջէն ընդառաջ ելանէին ամենայն եպիսկոպոսունքն իւրաքանչիւր իշխանութեամբ և պաշտօնէիւք բազում դասք դասք և գունդք գունդք՝ յիւրաքանչիւր գնդի նշանք սրբոցն մեծապէս պատուով ընդ աւետարանին պատուեալք բազմութիւնք խաչիցն և զանազան նշանացն փողփողելով, ծուխ խնկելոցն ուժգին բուրեալ յիւրաքանչիւր դա-*

հանգի բարգավաճման մտահոգությամբ ամեն ինչով նպաստում է Իսրայել եպիսկոպոսի առաքելության հաջողությանը։

Իհարկե, Իսրայել եպիսկոպոսը միայն Գրիգորի նշխարների համար չէր եկել Արարատյան աշխարհը. նրան Վարազ-Տրդատն ուղարկել էր միաբանություն և համերաշխություն հաստատելու Հայաստան աշխարհի և նրա հյուսիսարևելյան եզերքը կազմող երկրի միջև (Գիրք 2, ԼԸ)։

Մովսես Կաղանկատվացին ցնծությամբ է դիմավորում Տրդատի հաղթանակը հյուսիսայինների դեմ, որոնց Հայոց թագավորը հալածում է մինչև հոների երկիրը։ Աղվանից Աշխարհում թագավորող Սանատրուկը, որ հոն էր և մասքութների ցեղից, ոխն է Կաղանկատվացու համար, որովհետև այդ Սանատրուկը թշնամի է Հայաստան աշխարհին։ Եվ երբ Սանատրուկը հարմար ժամ է գտնում Հայաստան արշավելու և Օշականի առապարների մոտ տեղի ունեցած ճակատամարտում Վահան Ամատունին նիզակահարում է նրա հսկա, անպարտելի զորապետներից մեկին, «եւ ուղղեալ զնիզակն ընդ զաւակ ձիոյն յերկիր կործանէր զահագին վիրագն», ցնծությամբ բացականչում է Կաղանկատվացին (Գիրք 1, ԺԲ)։

Կաղանկատվացին Վաչագան Բարեպաշտին համեմատում է Կոստանդինոս կայսեր կամ Մեծ Հայքի Տրդատիոս Արշակունու հետ, որ «Հայոց Մեծաց փրկութեան գտող և մեզ արեւելեայցս եղեւ դուռն լուսոյ աստուածգիտութեան և բազմազան բարեաց օրինակ»,— ավելացնում է Կաղանկատվացին սիրով ու պատկառանքով։

Մասքութների Սանեսան թագավորը, հետապնդելով հավատացյալներին, Դիզափայտ լեռան վրա նահատակում է բազմաթիվ քրիստոնյաների։ Կաղանկատվացին հաղորդելով այս տեղեկությունը, սրտաբուխ բացականչում է. «Որոց բարեխօսութեամբ միշտ գթասցի Աստուած Աղուանից Աշխարհիս և Հայաստանեայց երկրին» (Գիրք 2, Ե)։

897 թվականն է. մեռնում են հայոց մեծ հայրապետ Գևորգը և Սյունիքի Աշոտ իշխանը, արաբների կողմից խաչվում է հայոց Սմբատ թագավորը։ Մովսես Կաղանկատվացու երկը շարունակող պատմիչը լալահառաչ ասում է. «Եւ ապա գուժէր ձայն աղետաւոր ի տանն Թորգոմայ, և առհասարակ աւերանք աշխարհին հասանէր»։ Եվ պատմիչը խոր գոհունակությամբ է նշում արաբների հեռացումը Հայաստանից։ Այս արդեն Աղվանից պատմությունը շարունակող Դասխուրանցին է, որ նույն ոգով է շարադրում պատմական իրադարձությունները, ինչ ոգով ներշնչված էր Կաղանկատվացին։

Կաղանկատվացու ողջ պատմությունը շնչում է հայ մշակույթի, հայ եկեղեցու, հայ պետականության գաղափարներով։ Պատմիչի ամբողջ իղձն է Հայաստանը և Աղվանքը ազատ տեսնել օտար տիրողներից ու բարբարոսներից, որպեսզի երկրում ծաղկեն դպրոցները, շենանան եկեղեցիները, և հայ մարդը ապրի ազատ, ինքնորեն ու լի։

Նա, անշուշտ հասարակ մարդ չի եղել, կապված է եղել պալատական շրջանների հետ, մոտ է եղել Ջվանշիրին, նրա շրջապատին, որտեղ և հղացել է պատմություն գրելու իր երախտագիտության արժանի մտադրությունն ու իղձը։ Գուցե հենց պալատում է առաջարկություն ստացել գրելու առկա պատմությունը։

*սուէն, ձայնք սաղմոսանուագ հոգևոր երգոցն քաղցրագոյն հնչմամբ անհատ բարեբանելով զԱստուած՝ զտուողն մեծագոյն պարգևին» (տատ, 67)։*

*Այժմ բերենք* c *խմբի համապատասխանը. «էր բերեալ Մաթէ երիցու՝ աշակերտի Յովհաննու Հայոց հայրապետի Մանդակունոյ և էր ի գիւղն Դարահոճ նորին մատանեաւ, զորոց առաքեալ երիցունս և ետ բերել ի բանակն։ Եւ ի գալ նահատակացն ելանէր առաջ մեծ արքայն Վաչագան ամենայն ժողովրդովն Դուտականաու և քրիստոսասէր դշխոյիւն և մեծամեծ նախարարօքն։ Եւ ամենայն եպիսկոպոսք զիւրաքանչիւր վիճակի սպասաւորս դաս դաս արարեալ բազմութեամբ խաչից զանազան փողփողելոց նշանից և հոտ խնկոցն ուժգին բուրմամբ և յայտ աւետարանք։ Այսպէս խաղացեալք ընդ առաջ ձայնք սաղմոսաց յիւրաքանչիւր դասուէ հնչեցեալ լինէին ի փառաբանութիւն Աստուծոյ» և այլն (տե՛ս սատ. էջ 67)։*

*Արդեն ծանոթագրությունների բաժնում այդ երկու խմբերի ձեռագրերը բևեռանում են. բոլոր տեսակի ընդհանուր տարբերակումները առանձնանում են ըստ* a *և* c *խմբերի։ Իրար համընկնումները սովորական տարբերակներ են, իսկ խմբագրական և մայրերից եկած փոփոխակները խմբավորվում են ըստ* a *և* c *ձեռագրերի։*

### Ա. ՁԵՌԱԳՐԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ

### a—ձեռագիր, № 1531

*Ամենահին ձեռագիրն է, որ արտագրված է 1288—1289 թթ.։ Ձեռագրի էջի մեծությունն է 48×33, գրադաշտը 40×22, երկսյուն, յուրաքանչյուր սյունակը 32 տող, մի տողում 18—20 տառանիշ։*

*Առաջին մասը Սոկրատի «Եկեղեցական պատմությունն» է, իսկ երկրորդը՝ «Աղուանից պատմութիւն»-ը։ Կազմը շատ ամուր կաշեպատ տախտակ է, որը ներսից պատված է վանդակազարդ գույնզգույն ամուր կտորով։ Գրված է հաստ, բավականաչափ լավ պահպանված թղթի վրա։ Սկզբից, ուր Սոկրատի «Եկեղեցական պատմությունն» է, 4 թերթ պակասում է, բայց այդ պակասը ոչ թե առկա ձեռագրի պակասությունն է, այլ գալիս է մայր օրինակից։ Մեր ձեռագիրը պահպանել է 4 դատարկ թերթեր, որոնցից երկուսը կտրված վերցված են, իսկ երկուսը ամբողջական մնում են. ուրեմն ձեռագիրը մեզ է հասել ամբողջական վիճակում*

*Ձեռագիրը գրված է խոշոր բոլորգրով, սկզբում վերնագիր չունի, իսկ «Պատմութիւն Աղուանից», որ սկսվում է 231 թերթից, բացվում է «Նախերգան պատմութեան Աղուանից առաջին* հատածն *գլուխ[ք] Լ» վերնագրով և հաջորդող 30 գլուխների ցանկով։ Բուն բնագիրն սկսվում է 232 թերթի առաջին սյունակից։ Ցանկի սկզբնատառերը, բնագրի* աստուածաստեղծ *բառը, վերջակետից հետո եկող ու պարբերությունների սկզբնատառերը խոշոր երկաթագրեր են։ Ձեռագիրը ոչ մի զարդ չունի։*

*236-րդ թերթի երկրորդ սյունակի 5-րդ տողից սկսած տասը տող ավելի քերված թղթի վրա մուգ թանաքով գրված է. «Զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորա նորին սուրբ ձեռնադրութեամբն լինիլ եպիսկոպոս աշխարհին իւրոյ, որք և այսու կանոնիւ կացին աշխարհս Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ մինչև ցայսօր»։*

*Այս գրության տեղում ջնջվածքը երևում է, բայց ոչ մի հին տառի հետք չի նկատվում։ Տեղադրումն այնքան ճիշտ չափված ու ձևված է, որ ոչ մի տա-*

ոի հավելում կամ պակասում չկա։ Այդ գրությամբ փոխարեն bcelrs ձեռագրերը ունեն. «Ոչ թէ ի հարկէ ինչ կամ թէ աւագ գոլ զՀայս քան զԱղուանս հաշուեցան, այլ սակս մեծամեծաց զօրութեանն որ կատարեցաւ ի Հայք, կամ եղև սորա կամաւ հնազանդիլ արժանաժառանգ զարմին սրբոյն Գրիգորի. կոչեցին և հաճեցան»։

Այս երկու բնագրերը հակասական որևէ բան չեն պարունակում, բայց առիթ են տվել անհիմն բամբասանքների։ Առաջին բնագրի թարգմանությունն է. «Որովհետև մեր Ուռնայր արքան խնդրեց սուրբ Գրիգորից, որ նա ձեռնադրությամբ եպիսկոպոս լինի իր (Ուռնայրի) երկրին, և այս կանոնով մնացին Հայոց և Աղվանից աշխարհները համակամ եղբայրությամբ և անքակտելի դաշինքով մինչև այսօր»։ Այստեղ չարախոսության ոչ մի առիթ չկա, ընդհակառակը՝ խոսվում է դաշինքի, եղբայրության և համակամության մասին։

Երկրորդ բնագրի թարգմանությունն է. «Ոչ թե ինչ-որ հարկադրանքով կամ Հայաստանը Աղվանից Աշխարհից ավագ լինելով ավագ համարվեց, այլ այն մեծամեծ հրաշքների պատճառով (Հայաստանը ավագ համարվեց), որ կատարվեցին Հայաստանում. սրանք (Աղվանից աշխարհի հոգևորականները, իշխանները, ժողովուրդը) կամեցան հոժարությամբ հնազանդվել սուրբ Գրիգորի արժանաժառանգ զարմին. հրավիրեցին և հաճեցան»։ Առաջին բնագրում խոսվում է այն մասին, որ Ուռնայրը խնդրել է սուրբ Գրիգորից, որ իր երկրի համար եպիսկոպոս ձեռնադրի, իսկ երկրորդ բնագրում խոսվում է սուրբ Գրիգորի զարմին հնազանդվելու մասին։

Ձեռագիրը գրված է հատ-հատ խոշոր տառերով, վարժ գծագրությամբ, բայց գրաբարի ընդունված ուղղագրությունից բավականաչափ հեռու։ Այս ձեռագրից արտագրված g ձեռագրի վերջին հիշատակարանում կարդում ենք սրան վերաբերող այսպիսի տողեր. «Եւ զի այսպէս սխալ, խրթին և մթին էր օրինակն գրքոյս, վասն որոյ ես անգէտս ոչ կարէի թարց նպաստի պարզագրել և ի լոյս ածել, ուստի բարեմիտ և գրասէր հաւս իմ զտեղի իմն սահմանեաց մերձակայ ինքեան վասն երկուց պատճառաց. նախ՝ զի ինքն ևս օժանդակ լիցի տկարութեանս իմոյ, երկրորդ զի փութով աւարտիցեմ զսա, յորում նստեալ գրէի նորին օժանդակութեամբ և մշտավերահասութեամբ մինչև յաւարտումն սորին»։

## ի—Անթիլիասի ձեռագրի լուսանկարները (№ 180)

Լուսագիրը ստացել ենք Անթիլիասից խորին շնորհակալությամբ։ Ձեռագիրը չունի ոչ մի հիշատակարան, հայտնի չէ որտեղ և ով է գրել։ Միայն 94 էջի վերջին տողում միևնույն գրչի ձեռագրով հայտնվում է. «Ստացող գրոյս զերջանիկ հայրապետն տէր Աբրահամ կաթողիկոս ամենայն Հայոց»։ Սրանից իմանում ենք, որ ձեռագիրը XVIII դարի 30-ական թվականներին է գրված, որովհետև 1730-ից մինչև 1737 թ. հովվել են երկու Աբրահամ կաթողիկոսներ՝ Խոշաբեցի և Կրետացի։

Ձեռագիրը երկսյուն է, բաղկացած 297 լուսաէջից, մաքուր բոլորգրով գրված. գրադաշտ 20×13,5, բաղկացած է 23 տողից, ամեն տողում 40 նիշ։ Պակաս էջեր չկան։ Մի քանի տեղ լուսանկարը հաջող չի ստացվել, հայտնի չէ, ձեռագրի թերությունն է, թե լուսանկարի. որոշ տեղեր խավար տառերը երևում են։ Նմանվում է մեր g ձեռագրին (№ 2646, 1760—1761 թթ.)։ Երկուսն էլ պատկանում են a ձեռագրի խմբին։

### d—ձեռագիր, № 3043 (հին՝ 1111)

*Ընդօրինակված է Թավրիզում 1839 թ. «յայլ իմն ձեռագրոյ», ասում է Շահնազարյանը[37]։ Ձեռագրի վերնագրի տակ հիշված է, թե ընդօրինակված է սկզբնագրի (a-ի) բաղդատությամբ։ Բայց, ինչպես երևում է արտագրված է Թավրիզում գտնվող մի ձեռագրից, իսկ ինչպես է բաղդատվել a-ի հետ, անհասկանալի է։ էջի մեծությունն է 22×17,5։ Ունի լուսանցագծեր. գրադաշտն է 18×14, տողերի քանակն է 28, տառանիշերը մի տողում 35։ Գրված է լավ ընթեռնելի նոտրգրով, կապտավուն ամուր հաստ թղթի վրա։ Պահպանված է շատ լավ վիճակում։ Բնագիրը սկսվում է 4-րդ էջից, վերջանում է 367 էջով։ Վերջում երեք էջ հիշատակարան ունի և երկու ազատ թերթ։ Կազմը հաստ, ամուր խավաքարտ է, պատկերազարդ թղթյա շապիկով, կռնակը կաշեպատ։ d² d-ի հետ միաժամանակ ընդօրինակված է Թավրիժում Հովսեփ Հովհաննիսյանի ձեռքով միևնույն Ղազար վարժապետի պահանջով, ինչպես որ գրված է d ձեռագիրը։ Սա ևս համեմատված է a ձեռագրի հետ։*

### g—ձեռագիր, № 2646 (հին՝ 632)

*Այս ձեռագիրը արտագրված է a ձեռագրից, 1761 թ.։ էջի մեծությունն է 27×18,5, գրադաշտը՝ 19×12։ Միասյուն՝ բաղկացած է 28 տողից, տողում՝ 39—40 տառանիշ (հաշված միայն նիշերը)։ Վերնագիրն է «Գիրք պատմութեան Աղուանից աշխարհին ի յերիս հատորս բաժանեալ շարադրեցեալ ի Մօսիսէ գերիմաստ վարդապետէ Կաղանկատացւոյ։ Ի վաղնջոց ժամանակ, ի փառս ամենամեծին Աստուծոյ»։*

*Նյութը թուղթ է, կազմը կաշեպատ, բարակ տախտակ, թերթերը մասամբ իրարից պոկվել են կարերը քանդվելու պատճառով։ Պահպանված է լավ վիճակով, ոչ մի էջ չի պակասում, միայն մի քանի լուսանցազարդեր կտրված հեռացված են, իսկ 93 էջը հավանորեն ունեցել է գեղեցիկ խորանազարդ (սկիզբն է երկրորդ հատորի), որ կտրված է և փոխարեն շղագրով գրված ու փակցված է ուրիշ թերթ։ Այդպես է նաև 269 թերթը, որով սկսվում է երրորդ հատորը։ Գրված է նոտրգրով. վերնագրերը կարմրագիր են, սկզբնատառերը՝ թռչնագիր, ծաղկագիր և կենդանագիր։ Երեք խորանազարդից մնացել է մեկը (էջ 5), ուր քառակուսի շրջանակի մեջ, վերևում գրված է «Ես Հայրապետս Հայոց Մեծաց ետու գրել զայս յինձ յիշատակ»։ Շրջանակի աջ մասում գրված է իբրև շարունակություն՝ «Նաև դեղ հոգւոյս ցաւոց»։ Շրջանակի ձախ մասում գրված կա. «Ես Յակոբոս այրս մեղսախոց»։ Ներքևում, ձախ անկյունում թվականն է՝ «թվին ՌՄԺ (1761)», իսկ աջում՝ «Երեմիայ ծաղկող»։ Շրջանակի բոլոր տառերը երկաթագիր են։ Ունի 76 լուսանցազարդ։ Գրիչն է Ղունկիանոս դպիրը, տեղը՝ էջմիածին։ Պատվիրատու և ստացող՝ Հակոբ կաթողիկոս Շամախեցի։*

*Ցանկն սկսվում է 2-րդ էջից, որի վերնագիրն է. «Ցանկ առաջնոյ հատորի գրքոյս։ Նախերգան պատմութեան Աղուանից։ Առաջին հատվածն ունի «զգլուխս երեսուն»։*

*85 էջում վերջանում է առաջին հատորը։* Ամէն *բառից հետո գրված է 1209 (1760)։*

*Ինչպես արդեն ասվեց, այս g ձեռագիրը (№ 2646) արտագրված է a-ից (№ 1531)։ Գրիչը բնագրին հավատարիմ է մնացել, բայց ուղղագրությունը*

---

37 *Տե՛ս Պատմութիւն Աղուանից, Փարիզ, 1860, հ. Ա, էջ 86։*

հիմնովին փոխել է և զարմանալիորեն գրել է գրեթե անսխալ։ Գրիչը հիշատակարանում ասում է, որ ձեռագիրը պատվիրող Հակոբ Շամախեցի կաթողիկոսը հետևել, վերահսկել և օժանդակել է արտագրությանը։

## f—ձեռագիր, № 4197

«Արտագրեալ ճիշտ բաղդատութեամբ ընդ գաղափարին (a-ի), որ ի մատենադարանի Աթոռոյ Սրբոյ էջմիածնի ի պէտս սարկաւագ Սահակայ Գեղամեանց, ի 1822 թուականի»։ Միասյուն, նոտրգիր, գրադաշտ 29×16,5, մի էջում 27 տող, ամեն տողում 35 տառ։ Բաղկացած է 150 թերթից՝ մատյանաձև կազմով։

Այս ձեռագիրը մեզ ծանոթ ձեռագրերից ամենահինն է, որ ունի Դավթակի ողբի շարունակությունը, բայց թե ինչ ձեռագրից է արտագրված, հայտնի չէ։ Հավանորեն սրա մայրը եղել է Դավրեժի անհայտ ձեռագիրը, որից արտագրված է հենց Դավրեժում մեր d ձեռագիրը 1839-ին, որը նույնպես ունի ողբի շարունակությունը։

## r—ձեռագրի լուսանկարը

Բրիտանական թանգարանի ձեռագրի լուսանկարն է։ Այս ձեռագիրը մանրամասն նկարագրել է Ֆրեդերիկ Կոնիբերը իր A Catalogue of the Armenian Manuscriptes in the British Museum գրքում (Լոնդոն, 1913), № 117-ի տակ։ Ըստ Կոնիբերի, ձեռագիրը կաշեկազմ է, միասյուն, գրված է բոլորգրով։ Թուղթը ջնարակած է, գրադաշտը 12,7×18,5 սմ. 245 թերթ, գրված է պարզ, խոշոր բոլորգրով։ Էջը ունի 21 տող։ Սկզբնատառերը կարմիր են, ավելացված են շեշտեր։ 5-րդ թերթի ձախ էջը ջնջված է և նոր գրված դատարկ թղթի վրա։ Նույն ձևով ութերորդ թերթի մյուս էջը ջնջվել է, կորցնելով գլխի վերջին մասը։ Հիշատակարան չունի։ Չի կարող գրված լինել 1500 թվականից շուտ և 1600-ից ուշ։ Ձեռագիրը նախկինում պատկանել է Րաֆֆուն։

## t—ձեռագիր, № 2866

Գրված է 1829 թ., Հովհաննես աբեղա Գևորգյան Շահխաթունյանց Շահրիարցու ձեռքով։ Գրիչը հայտնում է, որ «Սոյն առաջին գաղափարի պատմութիւնս գոլով կարի մեծագիր և դժուարընթերց (խոսքը մեր a ձեռագրի մասին է)՝ օրինակեցի ես ինքնին զայն ի սոյն յայս ի պարապումն ինձ ի հարկաւոր դէպս և յաւելի ևս ի վախճանին զցանկ մտացն բովանդակ ըստ այբուբենական կարգի։ Յամի տեառն 1829, ի սուրբ էջմիածին»։

Ձեռագիրը բաղկացած է 109 թերթից, գրված է նոտրգիր, պարզ ընթեռնելի ձեռագրով, չունի ոչ մի զարդագիր։ Նկատի ունենալով, որ նույնությամբ արտագրված է a ձեռագրից և հիմք է ծառայել Շահնազարյանի հրատարակության, ավելորդ համարեցինք այս ձեռագրի համեմատությունը, մանավանդ որ Շահնազարյանի փարիզյան հրատարակությունը համեմատված է w անունով։ Ձեռագիրը պատկանում է a խմբին։

## m—ձեռագիր, № 6520

Արտագրված է Միքայել արքեպիսկոպոս Սալլանթյանցի ձեռքով, Մոսկվայում, 1835 թ.։ Պատկանում է ձեռագրերի a խմբին։ Թուղթը չափազանց լավ է պահպանված։ Կաղանկատվացու բնագիրը բաղկացած է 76 թերթից,

սկսվում է 1-ից, վերջանում է 76-ով, գրված է շղագիր, միասյուն։ Թերթի մեծությունն է 22,5×18, գրադաշտը 19×16։ Ամբողջ ձեռագիրը բաղկացած է 150 թերթից. 79ա էջից սկսվում է Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն»-ը և վերջանում է 141բ էջում։ Կազմը խավաքարտ, կռնակը բրոնզագույն կաշի, շապիկը և աստառը թուղթ։ Ձեռագիրը պատկանել է Գրիգոր Խալաթյանցին։ Էմինի տպագրությունը այս ձեռագրի հիման վրա է կատարված։ Չնայած իր սեփական ձեռագրին, որ նույնպես a խմբին է պատկանում, նա հետևում է m-ին, որ արտագրված է g ձեռագրից, բայց վերջինս ինչպես է հասել Մոսկվա, պարզ չէ։ Սալլանթյանցը 1բ էջում գրում է, որ ինքն է ընդօրինակել «ի Մոսկով, յամին 1835»։ Այլ հիշատակարան չկա։ Բայց Էմինի (n) ձեռագիրը m-ի հետ համեմատողը բերել է g-ի հիշատակարանից մի փոքրիկ հատված, որ m-ի մեջ չկա։ Բացի այս ապացույցից, կա և այն փաստը, որ g ձեռագիրը վերջին երկու էջում ունի Գանձակեցուց մի հատված, որը կա նաև Էմինի ձեռագրում։

## n—ձեռագիր, № 6547

Գրված է հավանաբար Մկրտիչ Էմինի ձեռքով, 1847 թ., պատկանել է Էմինին։ Արտագրված է g ձեռագրից (№ 2646) նույնությամբ։ Այդ երևում է ոչ միայն համեմատությունից, այլև g ձեռագրի հիշատակարանի պատառիկից, որ արտագրված է այս ձեռագրի 137բ էջի լուսանցքում. «Փառատրութիւն Աստուծոյ և վերջաբանութիւն Աղուանից աշխարհին, զոր շարադրեալ է քաջ գիտնական և գերիմաստ վարդապետն Մովսէս Կաղանկատվացի, զոր հրամանաւ տեառն իմոյ Յակոբայ մեծի վեհին՝ ես Ղունկիանոս մեղսալի և պարապակոծ գպիրս ի խրթնացեալ և յերկաթագիր օրինակէ պարզեալ գծագրեցի ի հազար երկու հարիւր և տասն թուին»։ Հետագայում (մինչև 1860 թ.) Էմինի այս ձեռագիրը բաղդատվել է Միքայել արքեպիսկոպոս Սալլանթյանցի ձեռքով արտագրված № 6520 (1835 թ.) ձեռագրի հետ և Սալլանթյանցի ձեռագրի տարբերությունները գրված են այս ձեռագրի լուսանցքներում, ամենայն մանրամասնությամբ ու բարեխղճությամբ։ Էմինի հրատարակությունը ոչ թե իր ձեռագրի ընդօրինակումն է, այլ՝ Սալլանթյանցի։ Ջաջմանում ենք միայն, որ նա իր հրատարակության «Ազդ»-ում գրել է. «Յերկուց անթուական օրինակաց արարաք զյառաջիկայ տպագիրս մեծաւ զգուշութեամբ բաղդատեալ և մաքրեալ ի գրչացն վրիպակաց»։ Այս ձեռագրի g-ից արտագրելու մի այլ փաստն էլ այն է, որ g-ն ունի Կիրակոս Գանձակեցուց մի հատված, որն առկա է Էմինի ձեռագրում։ n-ն նույնպես պատկանում է a-ի խմբին։

n ձեռագրի համեմատությունը որևէ բան չի ավելացնում կամ լրացնում բնագիրը, մանավանդ որ արտագրված է g ձեռագրից նույնությամբ։ Իսկ g ձեռագիրը ամբողջությամբ համեմատված է։ Ինչ վերաբերում է Սալլանթյանցի (m) ձեռագրին, սա ևս համեմատված է, որ արտացոլված է Էմինի տպագրության (k) մեջ. այս k-ն ևս համեմատված է։

### Բ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲԸ

## c—ձեռագիր, № 2561

Այս ձեռագիրը երկրորդ խմբի ձեռագրերի մայրն է, որ արտագրվել է Սիմոն գրչի ձեռքով, Ամարասի վանքի վարդապետ Ղուկասի կողմից հայտնաբերված մի հին ձեռագրից, 1664 թ.։ Ստացողն է նույն Ղուկաս վարդապետը։ Ձեռագրի մայր օրինակը եղել է Արցախում և հավանորեն կորել է, իսկ Ամա-

*րասի վանքում մնացել է միայն c ձեռագիրը՝ իբրև վանքի սեփականություն։ Հետագայում այն Գանձասարից փոխադրվել է Էջմիածնի մատենադարան և պահվել նախ 633, ապա 2561 համարի տակ։ Նյութը լավ պահպանված հաստ թուղթ է, բաղկացած է 264 թերթից։ Ձեռագիրը վերջանում է 259 թերթի բ էջում, նույն էջի երկրորդ սյունակից սկսվում է հիշատակարանը և հասնում է մինչև 262 թերթը։ Գրությունը՝ բոլորգիր, մեծությունը՝ 17×13, գրադաշտը՝ 13×9,5, երկսյուն, 23 տող, յուրաքանչյուր տողում (երկսյուն միասին)՝ 30 տառանիշ։*

## e—ձեռագիր, № 8035

*Արտագրված է c ձեռագրից (№ 2561), 1848 թ. Շուշիում։ Գրիչն է Ներսես Տեր-Բարսեղյան Աբովյան Օձնեցին։ Թուղթ, մեծությունը՝ 20×16,5, գրադաշտը 17×13,4։ Գրված է նոտրգիր, առանց զարդագրերի, վերջին էջի վրա կա գրչի հիշատակարանը։*

## b—ձեռագիր, № 1725

*Նյութը՝ թուղթ, էջի մեծությունն է 16,5×10, գրադաշտը 11,5×7, միասյուն, տող 20, յուրաքանչյուր տողում 23 տառանիշ, նոտրգիր։ Պակաս թերթ չկա, մեջընդմեջ մի քանի թերթեր պոկված, 283 թերթ։ «Գրքերի» սկիզբները նկարազարդված են, ունի մեկ կամ երկու կարմիր զարդագիր, երկաթագիր, վերնագրերը ամբողջովին կարմիր թանաքով են գրված, իսկ բնագիրը՝ սև, կազմը կաշեպատ տախտակ, դրոշմազարդ, կռնակը ծայրերում քայքայված, շերտազարդ կտավե աստառով։ Գրիչ՝ Յոհաննէս, թվ. 1675-ից հետո։ Պատկանում է ձեռագրերի 2-րդ խմբին (c-ին)։*

## l—ձեռագրի լուսանկարների հավաքածու, № 19

7 adgkmw *խաչի* km չիք *ընդգրկեալ* adghw *գրեալ* փխ *ընդգրկեալ* bcelr *ասէ*

8 bl *նա* փխ *և նա* dg *պողոսիկ* km *պօղոս* km չիք *արդ*

9 bcelr *իմ* փխ *ես* a *զարգուցեալ* kmw *քնոյ* a *փոյտ* a *առնեի* bcelr *առնէի փոյթ*

10 a *տեսանեի* bcelr *տեսլեամբ (չիք ի)* a *եթե* bcdeklrw *թէ*

11—12 bcelr *ասէ* cdlw *ծածկեալք* bcer *գաւառի* dw *արձախայ* ac *արցախա* m *արցախոյ* h *արցախու* b *և մի մխանց* l *և ի մխանց* bcelr *տոհմի* w *տոհմէն* km *վայրսն* adgkmw *կաղնետոյ* h *կաղնեզոյ* d *նախավկային* kw *տէր*

13 ac *Ստէփաննոս* a *Թեոդորոս* w *Թէոդոս* abcdghrw *սուրբն* d *մամոս* gl *մարսարգիս* km չիք *մար*

14 ce *Գրիգորոս* gl *Գէորգէոս* km *Գէորգ* adh *գիորգիոս* cr *վկա* d *կոզմաս* ad *դոմիանոս* g *դամիւնոս* l *որբոց* d *քառասնից*

15 cr *ի նոյն* b *ասէ* w *բասիրայ*

16 a *չարչարեցա* d *խաչին* begklrw *կորնչիլ* c *կորընչիլ* ad *նշխար*

17 b չիք *է* w չիք *մասն*

18 c *վէհիկ*

19 bcr կացի bl *ի* փխ *ընդ* g *մինչ* a *ցեաւթն* cr *ցեւթն* adgkmw *ամ* փխ *անգամ* cr *յամենաողորմէն* b *ամենաողորմ* d *ամենողորմ*

20 b չիք *աստուծոյ* acdeghklmrw *սոյն* փխ *ի սուրբ* adhkmw չիք *և*² km *և ճշմարտութեամբ* b *և ճշմարտապէս*

21 b *զխորհուրդն* dw *տեսլեան*

Եւ յաճախէր ես առաւել նոյն տեսիլն, և ճեպէր զհանելն, զի դեռ ի Նեղի եմք, ասէր։ Եւ ապա յարուցեալ ես Վեհիկ՝ չոգայ առ սուրբ Հայրապետն Աբաս՝ պատմելով նմա զխմբումն մեծապայծառ վկայիցն։ Եւ նորա լուեալ զտեսեալսն յինէն, ետ փառս Աստուծոյ կենդանւոյ բազմապատիկ գոհութեամբ. և նոյնժամայն արձակեաց զԴանիէլ մեծահաւատ քահանայն Տրխոյ իրագէտ լինել մեծասքանչ խորհրդոյն։ Եւ երագութեամբ ընթացաւ այրն հաւատարիմ հանդերձ Բոհիւ քահանայիւ և Եզեկիէլիւ դպրաւ, որք փութանակի հասին ի վայրս Կաղսեառ առ իս Վեհիկս։ Հասին և այլքն ի հանդէսն գործակից մեզ. Աբաս՝ Մոմհարէից երէց հօտիւն իւրով և Մարկոս քահանայ իւրով եղբարբք և հայր Տիրիթ ի Յովհաննու վանից՝ յանապատէն Քարմեղինայ և այլ բազմութիւն յոյժ հաւատացելոց։

Սոքօք հանդերձ կացեալ մեր յաղօթս մեծահայց խնդրուածովք՝ սկսաք զբրածն առնել որպէս չափ մարդոյ։ Եւ յանկարծակի եղև բուռումն անուշահոտութեան ի տեղւոջն. և յայտնեցաւ ծածկեալ գանձն ըստ փրկչական բանին, եթէ չէ պարտ թաքչել լուսոյ և դնել ընդ գրուանաւ։ Այսպէս արտահայտեաց Աստուած սրբական ծառայից իւրոց ճրագ և ետ լոյս փափագողաց սրտի աննուաղելի ճառագայթ։ Որոց ի յայտնելն արար Աստուած ողորմութիւն աշխարհիս Աղուանից և քաղցրութիւն առողջական վայրին Կաղսեառ։ Եւ նոյնժամայն մեծապէս օրհնաբանութիւն Աստուծոյ և գովեստ սրբոցն տուեալ ժողովոյն՝ ամփոփեցին զնշխարսն ի պատուական ինչ տեղարանս՝ յիւրաքանչիւրոցն առեալ մասն։ Զմեծագոյնսն պարփակեալ Դանիէլ քահանայ վաղվաղակի հասանէ մեծարգի

1 a ճէպէր h ի հանելն

2—3 bcelr Նեղիմք g ապայ b վեհիկս b չոքա ah չոգա a սուրբն c հայրապէտն h ապաս bcelr պատմել b զխումբն d զխնբումն

4 w զտեսեալն km զտեսիլսն d ի տեսեալսն լուեալ յինէն v և սորա ի տեսլեան ուեալ յինէն c ըզտեսեալսն b կենդանոյ

5 a զդանիէզ d զմեռանել փխ զդանիէլ d զմեծահաւատ

6 bcehl քահանայ v տրխոյ gl լինիլ d երկրպագութեամբ

7 b այր gkm չիք հանդերձ a եզեկիեզիւ l էզէկիէլիւ cr եզեկիելիւ

8 d զպրիւն abceghlr զպրիւ km կաղսեառյ h կաղսեառ b չիք իս c վէհիկ abehlr վեհիկ

9 kmw այլք m գործակիցք h ապաս bcelr մոմհարից d երեց celr էրէց d հաւտիւն

10 adgh չիք իւրով c քահանայիւ km եղբարքն km հայրն adghkmw չիք ի

11 km վանաց d յանապատէ bcelr քարմեղինա bcelr չիք յոյժ

13 a խնդրուածաւք l խնդրուածօք

14 w զչափ km ի չափ

15 cr տեղոջն gkm գանձն ծածկեալ h զծածկեալ

16 bcelr թէ a եթե g թաքչիլ km թագչել adcegklmrw դնիլ

17 km այնպէս ble վերայայտնեաց l վերայայտեաց b չիք աստուած b զսրբական d սրբակայ c սըրբական m ծառայիցն km զճրագ

18 m փափաքող d փափագօղ aghkw փափագող w սրտից km աննուաղելի kmw յորոց adhw չիք ի gl յայտնիլն

19 adghmw քաղցրութեամբ

20 km վայրացն km կաղսեառյ adghkmw չիք մեծապէս

21 adghkmw զնշխարս

22—23 cr տեղիսն b տեղի ինչ տեղարանս ckmr և իւրաքանչիւրոցն b իւրաքանչիւրոց g յիրաքանչիւրոցն l իւրաքանչիւրոց adgh առնել km առնելով h զմեծագոյնս b զմասն k քահանայն bcdklmr հասանէր

*ընծայիւն առ հայրապետն Աբաս։ Ընդ որ յոյժ հրճուեալ նորա, ի գալ սրբոցն տօնախմբէ զնոցին յիշատակ և դնէ ի մաքրագոյն յարկեղս։*

## ԳԼՈՒԽ Է

### Թուղթ Յովհաննիսի՝ Հայոց կաթողիկոսի առ տէր Աբաս՝ Աղուանից կաթողիկոս սակս հաւատոյ հաստատութեան

*Լաւաց, ճշմարտից, աստուածասիրաց՝ սիրելի եղբօր և աթոռակցի մերում տեառն Աբասայ՝ Աղուանից կաթողիկոսի, Մովսեսի՝ Բախաղատու եպիսկոպոսի, Գրիգորի՝ Կապաղակայ եպիսկոպոսի, Հոմկայ՝ Ամարասայ եպիսկոպոսի, Տիմոթէի՝ Բաղասականու եպիսկոպոսի, Ամբակումայ՝ Շաքւոյ եպիսկոպոսի, Յոհանկայ՝ Գարդմանայ եպիսկոպոսի, Ղեւոնդի՝ Մեծկողմանց եպիսկոպոսի։*

*Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱբրահամէ՝ Տարօնոյ եպիսկոպոսէ, ի Գրիգորէ՝ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Ստեփաննոսէ՝ Տայոց եպիսկոպոսէ, ի Մաշտոցէ՝ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, ի Գիւտայ՝ Վանանդայ եպիսկոպոսէ, յԱրդիշուէ՝ Ասորեաց եպիսկոպոսէ, ի Պապայ՝ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Քրիստափորէ՝ Ռշտունեաց եպիսկոպոսէ, ի Սեկունդոսէ՝ Մոկաց եպիսկոպոսէ և յայլ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց օրհնութեամբ ողջոյն։*

---

1 cr *ընծայիւքն* a *ընձայիւն* c *հայրապէտն* h *նոցա*

2 d *սրբոյն* d *տօնախմէ* cer *յիշատակս* bl *զյիշատակս նոցին*

3 abcehlw չիք *դլուխ*

4 dk *կաթուղիկոսի* b *կաթողիկոս աղուանից* dk *կաթուղիկոս* h *ի տէր*

5 bcelr *հուատոց* clr *հաստատման* gkm *հաստատութեան երկնաւոր չնորհօք աղցեալ*

6 d *լուսոյ* փխ *լաւաց*

7—11 agh *մերոյ* bcer *աբասա* dck *կաթուղիկոսի* ah *մովսէսի* dcgmw *մովսիսի* l և *մօսիսի* b *մովսի* w *բաղաեատու* km *բաղախատոյ* l և *գրիգորի* d *կապաղակեայ* l *կապաղակու* bcchr *կապաղակա* a *կոպաղակա էպիսկոպոսի* abeh *հռմկա* l և *հռօմակայ* c և *հռոմակայ* abh *ամարասա* cr *յամարասա* a *տիմոթեի* cr *զիմոթէի* l և *տիմօթէի* b չիք *տիմոթէի բաղասականու* km *բաղասականոյ* b չիք *եպիսկոպոսի*[1] a *էպիսկոպոսի* abchr *ամբակումա* l և *ամբակումայ* bcelr *շաքիոյ* ah *յոհանկա* w *յովանկայ* c *յովհանգա* br *հովհանկա* d *յովհանգայ* l և *յովհանկայ* abcer *գարդմանա* km *գևոնդեայ* l և *գևոնդեայ* bcer *գևոնդեա* d *մեծակողմանց*

12—14 bd *յովհաննիսէ* gkm *հայոց մեծաց* dk *կաթուղիկոսէ* cr *յաբրամա* b *յաբրահամու* և *յաբրահամու* d *տարօնայ* m *տարոնոյ* a *էպիսկոպոսէ* d *գրիգորայ* aghkmw *գրիգորոյ* l և *ի գրիգորէ* d *մարդպատական* h չիք *ի* l և *ի* adgw *յստեփաննոսէ* փխ *ի ստեփաննոսէ* g *տարոց* cr *տաոց* a *էպիսկոպոսէ* l և *ի* h *մաշոցէ* d *խորխորունեաց* a *էպիսկոպոսէ* cer *գիտա* g *գիւտոյ* dw *գտայ* abh *գտա*

15 abcelr *վանանդա* d *վանանտայ* kmw *յարդիշոյէ* l և *յարդիշոյ* bcer *յարդիշոյ* h *յարդիշուեայ* be *ասորոց* l *ասորւոց* a *յասորեաց* cr *ասորաց* h *յասորոց* a *էպիսկոպոսէ* abcr *բաբա* gkm *բաբայ* l և *ի բաբայ* h *բագա*

16 a *էպիսկոպոսէ* l և *ի* a *յըշտունեաց* a *էպիսկոպոսէ*

17—18 l և *ի* gh *սիկունդոսէ* d *սիկնդոսէ* a *սիկոնդոսէ* d *մոգաց* a *էպիսկպոսէ* adg *յամենայն* abghl *հայաստանեաց*

*Քանզի եհաս մեզ լուր դժնդակ համբաւու, եթէ են ոմանք դայլք յափըշտակողք զգեստուք ոչխարաց, որ եկին յաշխարհդ ձեր ի վանաց պըղծոյն Պետրոսի, որ անուամբ աղքատասէրք կոչին և գործովք՝ քրիստոսատեացք և ուրացողք զսուրբ երրորդութիւնն, զչար որոմն անիծելոյն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանեն ի հոգիս անմեղաց՝ թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյն՝ մատնել ի յաւիտենական կորուստն։ Զորմէ լսելով թէ վնասակար հոգւոյ և մարմնոյ եղեն անբժշկելի ցաւք։ Վասն որոյ ամենայն հարկաւորութեամբ փութացաք կարեկից լինել ձեզ և գրել՝ յիշեցուցանելով ձեզ զբանս սրբոյ առաքելոյն զգուշանալ անձանց և հօտիդ, յորում եդ զձեզ հոգին սուրբ տեսուչս և վարդապետս՝ հաստատուն ունելով զհաւատս ուղղափառութեան, զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց գրոց՝ Հին և Նոր Կտակարանաց ի ձեռն սրբոյն Գրիգորի և յերից երանեալ ժողովոցն՝ ՅԺԸ-իցն ի Նիկիա, և ՃԾ-իցն ի Կոստանդնուպօլիս, և Մ-իցն յԵփեսոս, որոց ձայնակիցք և ժառանգորդք եղաք ուղղափառ նոցա հաւատոյն, այսինքն ամենայն եկեղեցիք Քրիստոսի Աստուծոյ։*

*Խոստովանիմք զմի Աստուած հայր ամենակալ՝ զարարողն ամենայնի և զմի տէր Յիսուս Քրիստոս՝ որդի Աստուծոյ, ծնեալ ի հօրէ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, որով ամենայն։ Եւ սուրբ հոգին ելող ի հօրէ՝ ընդ հօր և ընդ որդւոյ երկրպագեալ և փառաւորեալ՝ արարչակից և*

---

*1—4* clr *ի մեզ* a *դժնակ* bcelr *համբաւոյ* a *եթե* bcel *թէ* bgl *յափշտակօղք* bcer *զգեստիւք* ahl *զգեստուք* bklm *որք* b *յաշխարհս* k չիք *պղծոյն* l *որք* abcdeghkmr *աղքատասէր կոչի* a *գործաւք* h *գործօք* abceghkmr *քրիստոսատեաց* d *քրիստոնեայ* gl *ուրացօղք* mk *ուրացող* b *զչար ոմն* km չիք *անիծելոյն*

*5* km չիք *և... քաղկեդոնի* adghw *զժողովն* a *քաղկէդոնի* d *սերմանեալ* aghkmw *սերմանել* abceghlr *յոգիս* փխ *ի հոգիս*

*6* km *հաւատոց* l *և մատնել* adgh չիք *ի*

*7* a *թե* bcel *եթէ* bcer *հոգւոյ* ah *անմարմնոյ*

*8* ah *ցաւուց* bcdelrw *ցաւոց*

*9* gl *լինիլ* km *յիշեցուցանելով* clr *զբան* clr *սուրբ*

*10* l *և զգուշանալ* b *յորում զձեզ հոգին սուրբ եդ* g *եդ*

*11* adghw *ուղղափառութեամբ* k *ուղղափառութեանն*

*12* bdgk *սուրբ* l *ի գրոց սրբոց* l *ի հին և ի նոր*

*13* aw *երիցս* (ըստ գիրք թղթոցի) km *յերիցս* bcelr *երից երանելեաց* d *ժողովոցս* agkmw *ժողովոց* cl *ժողովոյն* km *ութ և տասանիցն* w *318-իցն* gkm *որք ի Նիկիա* (hk *Նիկիա*) abdegkm չիք *և*[2]

*14* k *ի հարիւր և յիսնից* m *յիսնից* gkm *որք ի* a *Կոստանդնուպուլիս* bcelr *Կոստանդինուպօլիս* w *Կոստանտնուպօլիս* k *յերկերիւրոցն* w *200-իցն* cr *բձոց* gk *որք յեփեսոս* a *յէփեսոս* adghkmw *յեփեսոս* բառից հետո ունեն *Ջուղայ* (d *Ջուղրայ*) *Ովք սուրբ* (d *սուրբք*) *հայրապետք*, որ համարում ենք գրչագրական ներմուծույթ

*15* ahkm *եղէք* w *եղեն* bcelr *նոցայն* bceklr *հաւատոցն* l *եկեղեցիկ* km *եկեղեցեաց*

*16* bcelr չիք *աստուծոյ*

*17* bgl *զարարօղն*

*18* agkmw *ի մի* dh *մի* akm *յորդի* b *որդին*

*19* agkmw *ի սուրբ* acglr *ելօղ*

*20* k չիք *ընդ*[2] bcer *որդոյ*

հաւասար Երրորդութեանն, կատարեալ միով բնութեամբ, փառօք և զօրութեամբ՝ նախախնամելով զընդհանուր եղեալսս։

Իսկ ի վախճան յաւիտենիս Աստուած գոլով մշտնջենաւոր բանն Աստուծոյ՝ եղև մարդ կատարեալ անյեղապէս, մարմնացեալ անճառապէս ի սուրբ կուսէն, ոչ հեռացեալ ի բնութենէն, և ոչ քայքայեալ ի մարմնաւորութիւն, այլ եկաց մնաց որ էրն. նոյն անփոփոխելի Աստուած մարմնացեալ ոչ մասամբ, այլ բոլորովիմբ. ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի. ոչ հայր մարմնազգեաց, այլ որդի. ոչ սուրբ հոգին մարմնացեալ թանձրաձև, այլ միածինն ի հօրէ. բայց կամաւ և հօր զօրութեամբ և սուրբ հոգւոյն. այլ գոյութեամբ միայն բանն Աստուած։ Այսպէս և սուրբ ծնունդն ճանաչի։

Նոյն ինքն անբովանդակելին խանձարրապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն. եդաւ ի մսուր, զի մեք զանասնական բարսն ի բաց դիցուք. ի հրեշտակաց փառաւորեցաւ, զի մեք լիցուք նոցա երգակից. ընծայեցաւ ի մոգուց, զի պատարագեսցուք զհաւատս. կաթամբ բուծեցաւ, զի զանմեղութիւն ընկալցուք. զարգացաւ ըստ մարմնոյ ամենակատարն, զի ժամանեսցուք ի չափ հասակի լրմանն Քրիստոսի. եկն կամաւ ի չարչարանս, զի ի տանջանաց մեղացն զերծցուք. խաչեցաւ, զի ի կենդանութեան պտղոյն վայելեսցուք. մեռաւ, զի մահուամբն մեռուսցէ զմահ. եդաւ ի գերեզմանի, զի խորտակեսցէ զնիգս դժոխոց. յերրորդ աւուր յարեաւ, զի զմեզ ի կենդանութիւն փոխարկեսցէ. համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ հօր, զի դասեալ լիցուք և մեք ընդ աջմէ նորա։ Գալոց է միւսանգամ դատել զկենդանիս և զմեռեալս, և չիք վախճան նորա թագաւորութեանն։

Այսպէս հաւատամք և երկրպագեմք և փառաւորելով ասեմք. «Սուրբ

---

1 bdw երրօրդութեան celr երրորդութիւն k երրորդութիւնն

2 a զընթհանուր cel ընթհանուր b ընթանուր bcelr եղելոցս adghkmw եղեալքս ուղղում ենք եղեալսս

3 ab վաղճան dw վախճանիս dw յաւիտենից b մշտընջենաւոր h բան

5—9 c բնութենեն k բնութենէ w մարմնաւորութենէն k մարմնաւորութեանն d մարմնաւորութեան h մարմնաւորութիւն a էկաց km էնն abcdeghlr էն m այն փխ նոյն ah երկութիւն d եկաւորութիւն a այղ a անբարժանելի d անբաժանելի միութիւն ah մարմնազգեաց b մարմնացեալ a այղ km որդին bcelr չիք սուրբ cr թանձրացեալ մարմնով a այղ km զօրութեամբ հօր

10—11 bcelr չիք սուրբ bcer հոգոյն a այղ mk չիք այլ... ծնունդն l զօրութեամբ փխ գոյութեամբ c ծընունդն km չիք ճանաչի

12—13 ah անբաւանդակելին cr զգեցցուք a զանապանութիւն bcelr բարս

14 a հրշտակաց d փառաւորեցաւ bcelr նոցա երգակից (l երգակիցք)

15 a ընձայեցաւ b մոգուց c զի մեք h պատարեսցուք bcelr զհաւատն k բուծեցաւ

16 k զանմեղութեան h զանմեղութիւն կալցուք

17 dw չիք չափ w հասակ

18 d տանջանարանցն մեղաց bcelr զերծուսցէ

19 c պտղոյն bcelr սպանցէ d մեռուցուսցէ

20 bcdehlr դժոխոցն h և երրորդ cr յաւուր

21—22 cr փոխեսցէ bl և նստաւ bcelr նորա փխ հօր bcelr չիք զի դասեալ... աջմէ նորա

23—24 a վաղճան gkm նորա թագաւորութեանն վախճան

25 adghkmw չիք և երկրպագեմք

Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»։ Իսկ զոչ այսպէս խոստովանողսն նզովեցին սուրբ հարքն, նմանապէս և մեք նզովեմք զհին զամենեսեան եղեալ հերձուածողսն և զնորս՝ զԱրիոս, զՊաւղոս Սամոստացի, զՄանի և զՄարկիոն, զպիղծն Նեստոր և զԹէոդորիտոս, և՛ զսնոտի չար ժողովն Քաղկեդոնի, և՛ զհրէական տոմարն Ղևոնի, որ լրբաբար յանդգնեցան ասել երկու բնութիւնս և երկու դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ, և եթէ սուրբ կոյսն ոչ ծնաւ Աստուած, այլ՝ մարդ սոսկ ըստ մեզ և լոկ տաճար բանին Աստուծոյ։

Են և այլք ոմանք, որ ասեն, եթէ մինչ ի յերկրի էր տէրն Քրիստոս, յերկինս ոչ էր. և մինչ ի խաչին էր, չէր յաթոռ փառաց. և մինչ ի գերեզմանին էր, ոչ էր ընդ աջմէ հօր. զխորհեցողսն այսպէս՝ նզովէ Աստուած, և մեք նզովեմք զամենայն, որք այսմ հաւանեցան կամ հաւանին։ Եւ առաքեցաք առ ձեզ յուխտէս մերմէ զայր հաւատարիմ՝ զՄատթէոս քահանայ բերել զգրեալս մեր առ ձեզ։ Յիշեցուցանեմք և զբանն Յովհաննու աւետարանչի, որ ասէ. «Եթէ ոք եկեսցէ առ ձեզ և զվարդապետութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ունիցի, մի՛ ընդունիջիք զնա ի տունս և մի՛ բանիւք ողջոյն ասել նմա։ Եւ եթէ ոք տացէ այնպիսւոյն ողջոյն, կցորդ լիցի չար գործոց նորա. զի որ ոչ խոստովանի զտէր Յիսուս մարմնով եկեալ, նա ինքն իսկ է Նեռնն մոլորեցուցիչ։ Զայնպիսին ի սահմանաց ձերոց հալածեսջի՛ք և զմահաբեր վարդապետութիւն նորա ամենևին ոչ լսել»։ Արդ՝ վասն զի հարքն ձեր հաւատակից էին հարցն մերոց, և դուք մեզ. հաճոյ թուեցաւ գալ ի ձէնջ այսր եպիսկոպոսաց երից կամ աւելեաց լսելով ի մէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն, զի մի ոք կորիցէ

1—2 ab ողորմեայ | ողորմեաց b ոչ | խոստովանօղսն a նզովէցին

3 b չիք և$^2$ w զհինսն k զամենայն cmr հերձուածողս | հերձուածօղս

4 c նորս adghmw չիք զարիոս g զպօղոս d սողոմայեցիս h ամօսատացի w մարկիոն b և զպիղծն d զպիղծս ch զպեղծն km չիք զպիղծն

5—6 km զնեստոր a զթիոդորիտոս w զթէօդորետոս bcelr զթէօդորիտոսն d զթեոդորոտոս bl չիք և$^2$ km և զայլս km չիք զսնոտի չար ժողովն a քաղկէդոնի km չիք քաղկեդոնի... ղեոնի clr չիք և d զչար փխ զհրէական bcer տումարն | տօմարն bceghlr լեոնի gkm որք a լրբար c լըբբաբար d յանդգնեան m երկուս

7 m երկուս a եթե kmw թէ

8 km զաստուած km զմարդ km զլոկ abcdeghlw չիք լոկ d բանի

10 bcelr այլ և են ոմանք ad այլ klm որք d ասէն a եթե bceklmr թէ bcelr յերկրի h ի վերայ երկրի

11 bcelr չէր փխ ոչ էր bcelr յաթոռ փառաց չէր d չիք էր$^1$

12 gkm զխորհողն | զխորհօղսն d աստուած այսպէս նզովէ

13 cr և փխ կամ k զամենեսեան h ամենայն որ cr հաւանեն

14—16 b չիք յուխտէս... մեր առ ձեզ achr զմաթէոս h քահանայն a բերեալ gkm յիշեցուցանել m չիք և b աւետարանչին a եթե h ոք որ

17 adh ունիցին bcelr ընդունիցիք

18 clr բանիւ bcr չիք և a եթե h տայցէ abhl այնպիսոյն cer ողջոյն այնպիսոյն

19 h նոցա

20 adgkmw չիք ինքն cklw նեռն c չիք է

21 bcelr հալածեսջի b մահաբեր abcdeglw նոցա

22 l հաւատակիցք a եին

23—24 a էպիսկոպոսաց b չիք երից km լսել aghkw ի ձէնջ ad վարդապետութիւն

ի հովուաց կամ ի հօտից, այլ ի վերայ բարւոյ գիտի ձերոյ եղիցի ուրախութիւն հրեշտակաց յերկինս և մեզ՝ յերկրի, ծառայիցս և երկրպագուացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ողջ լերուք ի տէր։

## ԳԼՈՒԽ Ը

### Հալածումն հերձուածողացն յԱղուանից, զոր արէր Աբաս՝ Աղուանից կաթողիկոսն ընդ գալ թղթոյն ի Հայոց արտաքսմանեաց

Զայն շփոթ աղմկի սփռեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի ի ժողովոյն Քաղկեդոնի ի սնոտի և ունայն չարափառաց պղտորմանէն, որ ի ներելն Աստուծոյ զօրացաւ սուտ վարդապետութիւն նոցա, և դիւրալուր ունկնդրութեամբն ներկեալ բազմաց ազանց հոգիքն՝ մշտնջենաւոր խաւարի կորստեան մատնեցան։ Եհաս որոմնաբոյս արմատս այս յաշխարհս Աղուանից։ Ի նոյն ժամանակս տեառն Աբասայ Աղուանից կաթողիկոսի յոյզ քննութեան առնելով իւրովք եպիսկոպոսօք, որ վերագոյնդ կան ի գրի, նոքօք հանդերձ հալածեաց ի տանէ Աղուանից զպիղծ վարդապետս աղանդոյն այնորիկ՝ զԹոմասն կեղծաւոր և զփսաղտն Եղիա և զԻննոտն և զԻբաս և զայլսն ընդ նոսա, զնմանողս նոցին արար տարաբնակ ի հեռաւոր վայրս։ Եւ այնու եղև խաղաղութիւն ուխտի եկեղեցւոյ ի ժամանակին յայնմիկ ողորմութեամբ տեառն ամենակալի. այլ մարմնաւորական պատերազմունքն կարի յաճախէին։

---

1 adgw հօտից (չիք ի) bcer բարոյ
2 a հրշտակաց c հրեշտաց
3 bclr նորին քրիստոսի h և ձեզ
4 abcehlrw չիք գլուխ
5 km հերձուածողաց mw զորս
6 dk կաթուղիկոս aghm կաթողիկոս bcelr հայրապետն աղուանից w ի գալ
7 adghkmw չիք ի հայոց
8—14 abcdegklmw յայն փխ ձայն r յոյժ փխ ձայն adghkmw փոյթ փխ շփոթ bcelr սորոտս երկրի dkm չիք ի km համբաւ ժողովոյն g չարաժողովն km չիք ի սնոտի ...պղտորմանէն l և յունայն bcelr պղտորմանց d ի լինելն փխ ի ներելն km չիք սուտ d ուխտ փխ սուտ d վարդապետութեան m նորա abcdeghkmrw դրութեամբն k ներկեաց km դրազմաց l բազմազանց cer յոգիք bl ոգիք km հոգիսն km չիք մշտնջենաւոր... մատնեցան bcr կորստեանն l էհաս km եհաս զաւանութիւնս այս և յաշխարհս աղուանից ի ժամանակս տեառն աբասայ կաթողիկոսի (k կաթուղիկոսի) որ յոյժ abchr աբասա bcelr չիք աղուանից bcelr կաթուղիկոսի abdghkmw յոյժ փխ յոյզ b զքննութիւն d քննութեամբ aghkmw քննութիւն l իւրօք a էպիսկապոսաւք gklm որք ahw վերնագոյնդ
15 d նօքօք gkm տանէն km չիք պիղծ hl զպեղծ g վարդապետսն km զվարդապետս
16 km կրօնին փխ աղանդոյն adghkmw այնմիկ cehlr զԹումասն b զԹումաս km չիք կեղծաւոր km չիք զփսաղտն km զեղիային adg եղիայ
17 cer զիբիաս bdghkmw զայլս km նոսին bcelr արտաբնակ
18—20 bceir այնուհետև փխ այնու cr եկեղեցոյ acdgh ժամանակի l այնմիկ h տեառն ամենակալի աստուծոյ ողորմութեամբն cr մարմնական h մարմնաւոր m պատերազմունքն a յաճիւր gkm աճէին bcelr յաճախիւր d յաճախէր h յաճախր

## ԳԼՈՒԽ Թ

### Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց և պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, որ եղեւ աշխարհաց

*Ո՛վ սքանչելի պատմութեանս, զոր հանդերձեալ եմ հնչեցուցանել ի լսելիս տիեզերաց, մօտաւորաց և հեռաւորաց, որում համեմատ են ո՛չ դարուցն առաջնոց նշանագիրք ազգի ազգի պատերազմաց և խռովութեանց, որք ի տեղիս տեղիս և յազգս ազգս գործեցան և ի հոգւոյն սրբոյ բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ դրոշմեցան։ Նա և ո՛չ արտաքնոցն յարմարական ճարտարախօս առասպելացն երկրաւոր, շընչաւոր, իմաստասիրական յօրինուածքն կարող են հանգոյն այսմ գտանել։*

*Զի եկն եհաս ի վերայ մեր միանգամայն և կատարեցաւ, զոր փրկիչն մեր ի կենսաբեր աւետարանի անդ ի ժամանակի չարչարանացն, ըստ հանդուրժելոյ լսելեաց ընտրեալ երկոտասանիցն մարդկօրէնս գիջանելով խօսէր. ասէ. «Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. և՛ լինել սովուց յաճախութիւն, և՛ սուրք, և՛ սասանութիւնք, և՛ նշանք յարեգակն, և՛ ի լուսին, և՛ յաստեղս. և՛ խռովութիւնք ժողովրդոց՝ որպէս ալեաց ծովու խռովելոյ»։ Եւ նոյն ինքն տէրն զգուշացուցանէր, եթէ արթուն լերուք, զի ոչ գիտէք զօրն և զժամն։*

*Եւ արդ՝ քանզի ընկղմեցան միտք իմ և զմբաղեցան խորհուրդք իմ ի տիեզերական հարուածոցս, և մոռացայ զկարգ բանին, զոր հանդերձեալն էի արկանել հիմն և սկիզբն առնել ժամանակաց և անցից, որ անցին ընդ աշխարհս Աղուանից՝ ըստ բանի մարգարէին, որ ասէր, եթէ մոռացայ*

---

1 abcehlrw չիք *զլուխ*

2 km չիք *յաղագս*

3 a *տիէզէրահեծ* d *տիեզերահեձ* k *տագնապիցն* d *աշխարհս հայոց*

4 abcdeghlr *որ* d *հանդերձեալ էր*

5 d *լսելիսն* km *համեմատեն* bacdeglw *համեմատէ* h *համեմատի*

6 h *առաջնոցն*

7 d չիք *և*[1] d *ազգս* bcer *հոգւոյն*

8 adghkmw չիք *բազում* k չիք *նա*

9—10 d *առասպելեացն* km *առասպելաց* d *երկնաւոր* gkm *և շնչաւոր* c *օրինուածքն* d *յօրինուածք* l *կարօղք* kw *գտանիլ*

11 l *էհաս*

12 a *կենանաբեր* l *անտ*

13 d *լսելեացն* b *ընդրեալ* dwv չարս օրինակ *առ երկոտասանից* bcdelr *մարդկօրէն* h *իջանելով*

14 bgl *լինիլ*

15 b *սասանութիւն*

16—17 d *յարէգական* bh չիք *ի* km *լուսինն* c չիք *և խռովութիւնք* c չիք *ժողովրդոց... ծովու* b *յալեաց* cdlr *խռովելոց* a *եթե* bcelr *թէ*

18 r *գիտակք* cr *և ոչ ժամն*

19 d *մեր* bgklmw *զբաղեցան* d *նուաղեցան*

20 d *հարուածոյս* bcehlr *մոռացա* abcdeghlrw *որ*

21 adghw *էր* gklmw *որք*

22 a *մարգարեին* բոլոր ձձ. չիք *որ ասէր*, բացի b-ից a *եթե* bceklmr *թէ* chr *մոռացա*

*ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ։ Սակայն և այժմ առ անգամ մի թողեալ զահ և զերկիւղ, որ դեռ զմեզս ունի, ի նոյն կարգն դարձցուք. քանզի տեսանեմք զբազումս, զի կան և կամին լսել, եթէ զի՞նչ արդեօք կարիցէ բովանդակել, զի անթիւ հարուածս բարբարոսականաց թշնամեաց շուրջանակի զմեօք պատեալ։ Այլ և ընդ նմին զնշանս մեծամեծս և զարմանալիս, որով զթշնամիս մեր պարտեաց հզօր և մարդասէր աջն Աստուծոյ, և անկան տապաստ առաջի աչաց մերոց։ Եւ զի անցեալ ժամանակն յետս յետս զիւրն պահանջէ ի մէնջ պատմել, սկսայց յառաջին ժԸ է նահանջէն յայտնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մեհեկանի ամսոյ ի ԼԵ ամին Խոսրովու Յորմզդեան՝ Պարսից արքայից արքայի։*

ԳԼՈՒԽ Ժ

## Յառաջին ժԸ է նահանջէն. սկիզբն պատմողաբար

*Իբրև լցաւ ժամանակ գերութեանն Երուսաղեմի, որ յաւուրս Փլաւոս Հերակլի քրիստոսասէր կայսերն, որպէս երբեմն եօթանասուն ամացն՝ յաւուրս Կիւրոսի պարսկի, այց արար Աստուած յանդիմանել զսէզ թագաւորն Պարսից՝ զմեծն Խոսրով, որ ի բազում ժամանակաց յաղթահարեալ վանեաց վարատեաց նա զտունն օգոստոսական մեծ աշխարհաւն իւրով հանդերձ Հռոմաւ և նշանաւոր քաղաքաւն Պաղեստինեայ։*

*Արդ՝ իբրև ետես նա եթէ յաջողեցաւ գործ մարտի պատերազմաց,*

---

*2* bcelr *զմեզ* h *զմեզս* cr *դարձցի*

*3* adghkmw *զի* փխ *քանզի* c *կամի* a *եթե* bcelr *թէ*

*4* a *բաւանդակել* adghkmw *զանթիւ* փխ *զի անթիւ* adghkmw *բարբարոսական*

*5—6* adghkmw չիք *պատեալ* g *ապայ* clr չիք *այլա և* bcelr *և զնշանս* d *նշանս* cr *զզարմանալիս* km *զթշնամիսն* adgw *թշնամին* h *զթշնամին* adgh *պատեաց* bcel *պատժեաց*

*7* h *անկան տառաջի աչաց մերոց տապաստ*

*8* w *յետս կոյս* փխ *յետս յետս* bcelr *յետս* փխ *յետս յետս* gk *պահանջէր* a *յառաջին յառաջին* km *ութևտասն* d *տասն և ութն*

*9* dgkmw չիք *է* d *նահանջեն* h *նահանջին* km *յարութեան* g չիք *տեառն* gk *մեհեկի*

*10* km *ամսոյն* h չիք *ի* a *երեսուն* փխ *ԼԵ* b *հինգ* kw *որմզդեան* adghw չիք *պարսից* abcdeghlrw *արքայի որ եղև*

*11* abcehlrw չիք *գլուխ* g *գլուխ ժ-րն*

*12* d *տասն և ութն* km *ութևտասն* dkmw չիք *է* bcer *նահանջի* l *նահանջին* d *նահանջեն*

*13* dw *գերութեան* abcdegmrw *երուսաղէմի* dw *բլորոս* v *փղօսս* b *փղօս* aceghkm *փղաւոս*

*14* abw *հերակղի* a *եւթանասուն*

*15* b *յաւուրսն* dw *պարսից* clr *և այց* k *զսեզ* c *ըզսէզ*

*16—17* cr *յաղթարեալ* k *զտուն* adghw *զտունս* b *օգոստուսական* l *օգոստական*

*18* adghkmw չիք *հանդերձ* h *հռովմաւ* cr *նշանաւ* a *քաղաքովն* gkmw *պաղեստինեաւ* d *բաղաստինեաւ* l *պաղեստեայ* cer *պաղեստեա* b *պաղեստինեա* ah *պաղեստինեաւ*

*19* l *էտես* a *եթե* bcelrm *թէ* abcdeghkmrw *յաջողեաց* ce *պատերազմաց մարտի* blr չիք *մարտի*

զոր սկսաւ առնել ընդ արքային Յունաց ի ձեռն զօրավարին իւրոյ, զոր կացոյց ի վերայ զօրուն այնորիկ, զոր կազմեալ էր ընդդէմ արևմտից, որոյ բուն անուն իւր Խոռեան կոչէր։ Եւ վասն մղելոյ նորա և յօրինելոյ զճակատն պատերազմաց և զյաղթութիւնսն կատարելոյ ըստ խորագիտութեանն Պարսից, այլ և այլ պճնող անուամբ յորջորջեն զնա. երբեմն Ռոզմի Ոզան և երբեմն Շահ Վարազ։

Սա առ և հրձիգ արար զսուրբ քաղաքն Երուսաղէմ և ի գերութիւն վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց, որով դժոխք գերեցան, և զսպասսն ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ զոսկւոյ և զարծաթոյ և զականցն պատուականաց և զհանդերձս ծիրանիս ընդելուզեալ մեծագնի մարգարտով. նա և զկահ անգամ շինուածոց զարմանալի հոյակապ մայրաքաղաքաց, զսիւնս և զխոյակս կճեայս, նաև զշորքոտանիս և զթռչունս մեծամեծս, զորոց զանուանս անգամ ոչ էր լուեալ ի կողմանս արևելից։ Եւ զի ոչ երկարեցից զբանս, քանզի անցանել զանցանէ զչափ կարգի տեսութեանս իմոյ գործն, զոր գործեաց նա։ Եւ զմըթերս գանձուցն, զոր աւարեաց և ետ բերել ի դուռն Պարսից արքայի։ Սակայն ոչ յագեցաւ և ոչ շատացաւ անթիւ կարասեաւն, և հրգեցիկ ազգի ազգի արուեստաւորօքն խրախճանականաց փափկասուն աղջկանց և մանկանց. այլ առաւել ևս ոգորէր ընդ ծով և ընդ ցամաք, և զգեղեցկաշէն քաղաքս Հռովմայեցւոց բնակչօքն իւրովք հանդերձ խաղացուցանէր ի կողմանս Պարսից վասն տենչանաց իւրոց։ Նմանապէս ճարտարօք ի նոյն ձև օրինակի նստուցանէր և անուանէր զոմն առաւել քան զԱնտիոք քա-

---

*1* bcelr չիք առնել c սըկսաւ

*2* bcel կացուցեալ էր km զօրացն adghw իւրոյ այնորիկ km այնմիկ bcelr չիք ընդդէմ արևմտից

*3* bcehlrm անունն adghm խոռիեան bcekl խոռիան ghl կոչիւր bcelr կոչիւր յարևմտից adgh մղելոյն gh յօրինելոյն h օրինելոյն

*4—6* dmw յաղթութիւնս aghk զյաղթութիւնս dk խորագիտութեան a այդ և այդ d այլև l պճնօղ d պճնողս bdghkw յորջորջէ m յորջորջէր bcelr ռուզմի ոզան d ռազմի սշան

*7* gkm էառ gkm զմեծ փխ զսուրբ b չիք երուսաղէմ a գերութեան

*8* bl որովք

*9* km զսպասս abcdehlw զսպասն bcelr զոսկոյ

*10—11* h արծաթոյ և ականց gkm ծիրանիս մեծագինս ընդելուզեալս d ընդելուզեալս bcelr մեծագին d մեծագնո km մարգարտօք km զկահս ad շինուածու w շինուածոյ g զշինուածու

*12—13* adghkw զսիւն bcelr զխոյակսն a կնճեայս g զշորեքոտանիս bcr զորոյ adghw որոց bcelr և զանուն w զանունս gkm ոչ էր լուեալ անգամ

*14* cr յերկարեցից d անցեալ փխ անցանել gkm անցանէ

*15* b չիք զչափ

*16* b աւերեաց d աւեաց ad բերեալ adgw արքային

*17* bcdegkr կարասովն amw կարասուովն l կարասեաւ b երգեցիք

*18* w արուեստաւորօք d արուեստաւորս abgl արուեստաւոր cer չիք արուեստաւորօքն abcdegklrw խրախճականացն l և փափկասուն l ախճկաց cr աղճկանց

*19* a այդ g ծով c չիք ընդ[2] a զգեղեցկաշէն

*20* cel զքաղաքսն b զքաղաքն l հռօմայեցւոց cer հռոոմայեցոց w հռոմայեցւոց bcdelr բնակչօք a իւրաւք bl իւրօք

*21* km և զճարտարս bcer ճարտարովք

*22* abcdeglrm նստուցանել w անուանել b զանզիոք

9—1079

ղար. և զայլսն ամենայն ի նոյն օրինակի յիւր անուն՝ զառաւելն ի վերայ յաւելեալ։

Արդ՝ իբրև էլից յաղթութեամբն ըստ ցանկութեան զկամս իւր ի վերայ ամենայն ազգաց և թագաւորութեանց, մինչև ցայնչափ զօրանալ և հպարտանալ և կարծել անձին քաջութեամբ առնուլ զթագաւորութիւնն իւր ահեղ և զարմանալի և ոչ էառ ի միտ, եթէ տէր է բարձրեալն թագաւորութեան մարդկան և ում կամի, տայ զայն։

Ապա սկսաւ տակաւ նուաղել և տկարանալ առաջի արքային Յունաց և ոչ կարէր ամբառնալ զգլուխ իւր ըստ առաջին զօրութեանն։ Զի յանկարծակի աղդ արարեալ կայսերն ամենայն զօրավարաց և զօրագլխաց իւրոց զյաջողելն Աստուծոյ առաջի նորա, հրամայէր վաղվաղակի ի մի վայր գումարել հանդերձ ամենայն զօրութեամբ, որ ընդ ձեռամբ իւրեանց և լըսելի լինէր ամենեցուն ժամադիր գումարտակին այնորիկ։ Ոչ ժամանէր այր ընկերի իւրում, այլ առանց յապաղելոյ փութանակի կոտորէին զխոփս իւրեանց ի սուսերս և զգերանդիս իւրեանց ի գեղարդունս։ Տկարքն և հանդարտքն խրախուսէին, եթէ հզօր և պատերազմող եմք մեք։ Եւ յարուցեալ ամենայն զօրութեամբ իւրով՝ ինքն իսկ իւրովի զօրավար և առաջնորդ լինէր առաջի զօրաց իւրոց։ Եւ զդուռն պալատանն իւրոյ թողեալ ի ձեռս որդւոյն իւրոյ, թագ կապեալ նմա՝ նստուցանէր փոխանակ իւր յաթոռ թագաւորութեան իւրոյ։

Եւ ոչ հարկանէր ընդդէմ զօրացն Պարսից, որք պատեալ պաշարեալ ի հնազանդութեան ունէին զաշխարհս և զքաղաքս նորա. և ոչ անցանէր մօտ

---

1 km զայլս abcdeghrw զայլն km չիք ամենայն adghkmw չիք ի նոյն bcehlr իւր c օրինակի իւր b զառաւել են

2 c աւեալ l աւելեալ

3 bcelr արդ իբրև յաղթեաց և էլից զցանկութիւն ըստ կամս (c կամ) w յաղթութիւնն d յաղթութեան km ցանկութեանն bcelr չիք իւր

4 celr այնչափ b չիք ցայնչափ m յայնչափս k յանչափս] bcelr զարմանալ փխ զօրանալ

5 d անդէն փխ անձին d քաջութիւն k առնել

6—7 aw չիք և ոչ էառ... մարդկան bcdegr առ cdelr թէ abcemr տա

8 b տակաւին gklmw նուաղիլ c նուազել k անկարանալ

9 d զօրութեան acdegklmw չիք կարէր

10—12 a արարել km կայսեր b զամենայն adgkmw զօրաց իւրոց և զօրագլխաց ad զյաջողեալն bcer զյաջողեալ l զյաջողել cr հրամաէր lw գումարիլ d զօրութեամբն k զօրութեամբք gkm որք km ձեռամբք

13 d լինէին gl լինիլ abcer լինել l ժամադիրք cr գումարտկին d գումարդին

14 km ընդ ընկերի a առ առանց d յապրելոյ a կոտորեին d կատարէին d զխոտս

15—16 cr չիք ի l չիք ի սուսերս և զգերանդիս իւրեանց adghw տկարն և հանդարտ km տկարք և հանդարտք a խրախուսեին a եթե bcelr թէ dl հզօրք g պատերազմօղ l պատերազմօղք d պատերազմողք

17 cr և ինքն

18 bcelr զօրացն l զդուռնն h դուռն ahw պաղատանն bcr պաղատան dl պալատան km չիք իւրոյ

19—20 ad որդոյն bcer որդոյ l որդւոյ h թագ կապմեալ cr նստուցանէ d իւրոյ յաթօռ թագաւորութեան իւր m թագաւորութեանն m չիք իւրոյ

21 km չիք և l հարկանիւր l պատեալք պաշարեալք

22 a ունեին bcelr զաշխարհ նորա և զքաղաքսն k չիք և

առ նոքօք, և ոչ գրգռէր զնոսա ի մարտ պատերազմի. այլ թողեալ զնոսա անդէն յերկրին իւրում, եկն եւ ընդ ծով, ճանապարհ կազմեալ ընդ աշխարհն Եգերացւոց՝ գայ ընդ Հայս և անցանէ ընդ գետն Երասխ։ Եւ խորհէր ի մտի իւրում յանպատրաստ ունել զմեծ թագաւորն Խոսրով։

Եւ իբրև ազդ լինէր Խոսրովու, հիանայր ընդ միտս իւր և ասէր. «Ո՞չ նա է սա, որ յերկիւղէն իմմէ յանդունդս վարեցաւ. իսկ արդ այս զի՞նչ»։ Եւ խոյս տուեալ յերեսաց նորա յամրոցացն սահմանացն Մարաց՝ գնաց անդէն յաշխարհն Ասորեստանեայց։ Եւ վաղվաղակի առաքէ սուրհանդակս երագահասս և գրէ առ մեծ զօրավարն իւր Շահ Վարազ երդմունս մեծամեծս և սպառնալիս։ «Այնու քաւեսցի մեծ նախատինքս և ցասումնս իմ, եթէ այսպէս ժամանեսցես փութալ հասանել և ոչ թողուլ և ո՛չ զմի ոք ի մարդոյ մինչև յանսաուն ի համարձակելոյդ յերեսս իմ»։ Եւ ի ձեռն առեալ զօրավարին զհրամանն, ընթերցեալ և լուեալ զլուրն ահագին՝ վաղվաղակի հանդէս առնէր ամենայն զօրացն Պարսից։ Եւ թողեալ ի ձեռս գումարտակաց զքաղաքսն Հռովմայեցւոց և Պաղեստինացւոց զեկեալսն ի հնազանդութիւն ծառայութեան. և զգուշութեամբ պատուիրէր ունել մինչև դառնալ նմա յիրացն հասելոց։ Եւ ինքն շարժէր զզօրսն հանդերձ ընտիր սպառազինուք և քաջընթաց երիվարօք աճապարէր հասանել ի հրաման թագաւորին։

Իսկ կայսրն մեծ Հերակլիոս իբրև ետես եթէ խոյս ետ յերեսաց նորա թագաւորն Պարսից, դադարեաց ի պնդելոյ զհետ նորա։ Եւ ասպատակ

---

1 d ի պատերազմ մարտի a այդ

2 bcer անդրէն l անտէն b ի յերկրի celr յերկրի c յիւրում w չիք եկն d եկեա փխ եկն եւ bcelr ի փխ ընդ w կալեալ փխ կազմեալ

3 bcer եգերացոց ah գա d չիք և[1] bcer անց l էանց

4 adghkmw չիք ի մտի իւրում hw անպատրաստ km յանպատրաստի abcdeghrm ունելով d խոսրովու

5—6 km չիք և[1] bcelr ոչ է սա նա (l այն) d ոչ է նա սա cemr յերկիւղէ bl յերկիւղէ a իմէ b յանդունդք h յանդս

7 w յամարոցաց bcdel յամրոցացն km յամարայնոց g յամարանոցացն bcelr ի սահմանաց c գընաց

8 l անտէն m անդրէն bcelr յերկիրն d յաշխարհ abcdeghr ասորեստանեաց km չիք և bcelr առաքէր

9 abcdeghlw երագահաս bl գրէր cr դրդռէր w չահվարազն ah չահվարազս adgh երդումն

10 bcelr այսու km քաւեսցի սաէ bcelr նախատինք և ցասումս d ցասումն

11 a էթե b փութանալ l հասանիլ cr չիք և ոչ[2] d զոք մի

12 w ցանասուն d յանասունս abcdeglr չիք ի[2] dw յերեսիս bm երեսս ag երես h յերես

13 klm և ընթերցեալ km չիք և adghkmw չիք լուեալ c ըզլուրն

14 adghw առնէ d առնես adghw ձեռն

15 adgw գումարտակացն c գումարտկաց dkm զքաղաքս l հռոմայեցւոց bce հռոմայեցոց

16 bcegklmr չիք և w ունիլ

17 bcelr նորա adg յիրաց cr զզորն b զզօրն d զզօրս

18 dw ընտիր ազնուաշուք ս պառազինօք bcelr սպառազինօք gl հասանիլ b ի հասանել

20 a հերակղիոս bv հերակղիոս a եթե bcmr թէ

21 bcelr պարսից խոսրով l պնտելոյ bcr ասպատ

սփռեալ զկողմամբք Ատրպատականկու. մինչև ցտեղի անուանեալն Գայշաւան՝ տեղի ամարոցաց ամսոց ջերմութեան ընտրեալ յառողջութիւն հովասնութեան թագաւորացն Պարսից, որ է ի սահմանս Մարաց աշխարհին։ Աւերէր, քանդէր,գերէր զերկիրն ամենայն և անտի դարձեալ՝ կամէր ձմերել ի կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհաց։ Ուստի և գիր արարեալ առ իշխանս և առաջնորդս աշխարհաց, զի ինքնակամ կամօք ելցեն ընդ առաջ նորա և ընկալցին և պաշտեսցեն զնա հանդերձ զօրօքն իւրովք յաւուրս ձմերանւոյ։ Ապա եթէ ոչ՝ համարեսցին առաջի նորա իբրև զհեթանոսս, և առցին ամուրք նոցա, և գերեսցին սահմանք աշխարհացն այնոցիկ ի զօրաց նորա։ Եւ իբրև լուան զայս ամենայն պետք և իշխանք աշխարհիս Աղուանից, ի նոյն ինքն ի հրամանէ խոսրովու թողեալ զքաղաքն մեծ Պարտաւ և ելեալ գնացին ամրացան ի տեղիս տեղիս. և բազումք ի քրիստոնէից և ի հեթանոսաց, յարուեստագործաց բնակչաց քաղաքին, որք վասն անկարութեան և տկարութեան իւրեանց ոչ կարացին զերծանել փախչել առաջի նոցա, մնացին անդէն ի քաղաքի անդ։

Եւ քահանայ ումն՝ անուն Զաքարիա՝ այր սուրբ, որ էր վանական Պարտաւայ եկեղեցւոյն, հեզ և հանդարտ, որ եդ զանձն իւր ի վերայ նոցա, և երդմամբք և ազգի ազգի հնարիւք զերծոյց զբազում անձինս քրիստոնէից՝ աղօթիւք իւրովք երաշխաւորեալ զնոսա։ Նա և վասն հրէից և հեթանոսաց, ուստի և յետոյ գովեցաւ գործ նորա և վկայեալ յամենեցունց կարգեցաւ յեպիսկոպոսապետութիւն աթոռոյն Աղուանից։ Իսկ իբրև եկն եհաս զօրն Հոռվմայեցւոց անթիւ բազմութիւն յոյժ յոյժ և բանակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանացն զեղջն

---

*1—3* bcelr սփռեալք w զկողմամբ bcl զկողմամբքն adgkmh զկողմամբն bcelr ատրպատականի bkmw ցտեղին d ի սոյն տեղի bkm անուանեալ bcelr գաշաւան v գայշանխոյ adghkm ամրոցաց adghkmw չիք ամսոց d ջերմութեամբ b ընդրեալ h ընկալեալ edr հովհանութեան b հովասանութեան cr էր d վրաց

*4* l աւարէր abcer անդի clr դարձուցեալ

*5* d ձմերեալ clr և վրաց

*7* c եղցեն cr յառաջ ach ընկալցեն dgkm ընկալնուցուն

*8* bcehlr ձմերայնոյ dg ձմերայնւոյ g ապայ bcelmr թէ a եթե bcelr զի ոչ adgh համարեսցի bcelr համարեալ

*9* d հեթանոս km հեթանոսք km չիք և[1] d առցեն bcer ամրոցք l ամրոցքն bd գերեսցեն

*10* k չիք և[1] bcelr չիք ի

*11—13* d չիք ի[2] d զքաղաք k զմեծ քաղաքն k չիք և[1] (տ. 12) km իսկ բազումք h բազում a քրիստոնեից hw արուեստագործաց d արուեստագործոց d բնակչացն

*14* b անկարգութեանց bcelr չիք և km չիք և տկարութեան

*15* ghlw զերծանիլ ghl փախչիլ l անտէն l անտ

*16* g յանուն a զաքարիայ

*17—18* bcer պարտաւու bcer եկեղեցոյն k եկեղեցւոյ km չիք որ abg եա d չիք իւր c նորա adghkmw երդմամբ adgw չիք և[2] (տ. 81)

*19—21* adgh աղօթիւքն bcel և աղօթիւք cer երաշխի առեալ bl յերաշխի առեալ km չիք զնոսա bcelr զհեթանոսաց և զհրէից (չիք վասն) adghkmw չիք և[1] (տ. 20) ah յետս bcer յետո acdegmrw յամենեցուն h ամենեցուն w յեպիսկոպոսութիւն a յէպիսկոպոսապետութիւն d աղուանից աթոռոյն

*22—23* bcer հոռմայեցոց l հռօմայեցւոց w բազմութեամբ bcel բազմութեան ckmr յոյժ փխ յոյժ յոյժ km չիք և (տ. 22) aghkm բնակեցան

*Կաղանկատուաց. և կոխեցին քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստանեաց և գիւղաստանեաց, ընդ որ անցանէին։ Եւ անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ՝ մօտ ի գիւղն Դիւտական։*

*Ապա եկեալ հասին զհետ նոցա զօրն Պարսից, զոր Նոր զօր անուանէին։ Եւ էր զօրագլուխ նոցա Շահապղակն։ Եւ ի հաւատարիմ նախարարաց թագաւորին վերակացու և հրամանատար ի միջի նոցա՝ այր մի, զոր Գրանիկն Սաղար անուանէին, եկն էջ ընդդէմ նորա. և միւս զօրավարն Պարսից եկեալ ի Հռովմայ և դարձուցեալ զՀերակլիոսն ընդ կրունկն և վարեցին ընդ աշխարհն Սիւնեաց։ Զի թէպէտ և հարուածք մեծամեծք եղեն զօրացն Պարսից, սակայն հանին տարան արկին զնա յաշխարհն իւր և անդէն կալան զքաղաքսն, զոր հանին բռնութեամբ ի նմանէ։*

## ԳԼՈՒԽ ԺԱ

### Վասն գումարելոյ Խոսրովու ընդդէմ արքային Յունաց և յաղթահարելոյ զնա ամս բազումս սրով և զօրութեամբ աշխարհին Հռովմայեցւոց

*Սատիկ ամբոխիւ ելին խազիրք՝ ասպատակել յաշխարհս մեր հրամանաւ Հերակլի։ Եւ պատգամատարք առ նոսա Խոսրովու՝ Պարսից արքայի, «Եթէ դուք ո՞յր հրամանաւ եկիք յաշխարհս իմ. որ թափառական և փախստական շրջէր յերեսաց իմոց ի կղզիս ծովուն արեւմտից։ Ապա եթէ*

---

*1—2* hw *կաղանկայտուաց* d *կաղկանտուացւոյ* km *կաղանկատուոց* ag *կաղանկայտուոց* w չիք *քանդեցին* d *այգեստանեացս* hkm *այգեստանեաց* a *գեաւղաստանեաց* w *գեօղաստանեացն* l *գեղեստանեացն* cr *գեղաստանացն* dm *գեօղաստանեայցն* k *գեղաստանեայց* g *գեօղաստանեայց* be *գեղեստանացն* km *որս* a *անցանեին* bg *անդի*

*3* abcer *տրտուա* a *գեւղն* bcer *գեղն* gh *գեօղն* bcelr *դուտական* d *թիւթական* h *դեւտական*

*4—6* g *ապայ* bcelr *եկին* bcelr *զօրն պարսից զհետ նոցա* a *պարից* m *զօրքն* k *զօր* km *զօրս* aghk *անուանեն* bcer *զօրական* aghk *շահրապղական* w *շահատրպաղական* d *շահատրպալատական* blm *շահապղական* b չիք *ի (տ. 5)* b *նախարարացն* bcr չիք *և (տ. 6)* a *հրամատար*

*7* m *գրանիկ* bcelr *գրանիկան* bcelr *սալար* a *անուանեին* m *նոցա* l *միւսն*

*8* bcdelmr *հռոմայ* a *հռովմա* bcelr *դարձուցին* a *հերակղիոսն* km *զհերակլեանսն* bcelr *ընդ կրունկն* (b *կրունկ) զհերակլիոս* (b *հերակղիոս)* km չիք *և*[2]

*9—10* k չիք *զի… իւր* a *թեպէտ* l *և տարան* w *տարին* d *յաշխարհէն* agw *յաշխարհ*

*11* d *կեալն* փխ *կալան* gh *զքաղաքն* l *զորս* cr *զնմանէ* adgkw *նմանէն*

*12* abcehlrw չիք *գլուխ*

*13* a *գումարելո* abcdehlrw *ընդ* փխ *ընդդէմ*

*14* g *յամս* k *զամս*

*15* bcelr *զաշխարհն* k *յաշխարհին* l *հռոյմայեցւոց* dw *հռոմայեցւոց* bcer *հռոմայեցւոց*

*16* bcelr *ամբոխեալ* h *ամբոխիւք* d *ասպատակեալք*

*17* a *հերակղի* w *հերակղիոսի* b *հերակղի*

*18* a *եթե* bcelr *թէ* bcelr չիք *ոյր* bcelr *հրամանաւ նորա ելէք* (l *ելիք) մեր* gkm *այնմ որ*

*19* gkm չիք *փախստական* d *կղզին* b *յարեմտից* h *երեսաց* d չիք *եթէ* a *եթե*

կարօտեցար դու ի նմանէ ոսկւոյ կամ արծաթոյ, կամ ականց պատուականաց, կամ ոսկեման մարգարտայեա հանդերձից, բեհեզից և ծիրանեաց, կարող էի ես առաւել կրկին քան զնա հաճել զմիտս քո։ Վասն որոյ ասեմ քեզ, մի՛ կրկնել առ իս վասն դորին ունայն խնդրոյ. ապա եթէ ոչ, եղիցին կամք քո։ Բայց ահա կանխաւ ասացից քեզ, զոր ինչ ես գործելոց եմ յառաջագոյն. ի թողացուցանել ինձ նմա ըստ բանիդ քում, կոչեցից ես յերկրէ նորա զյաղթող զմեծ զօրավարն իմ Շահ Վարազն հանդերձ երկու քաջ զօրականօքն իմովք՝ Շահենովն և Քոռիկարինաւն և զզօրսն իմ՝ զբիւրաւորս և զհազարաւորս զընտիր սպառազէնսն իմ, զոր յօրինեցի ընդդէմ արևմտից կորուսանել և ջնջել զնա յերկրէ իմմէ։ Արդ՝ ահա դարձուցից զերասանակս նոցա ընդդէմ արևելից, և յարեայց ամենայն զօրութեամբ իմով ի վերայ քո, և ոչ թողից զքեզ, և ոչ տաց քեզ դուլ և դադար, մինչև հանից զքեզ ընդ ծագս տիեզերաց։ Ապա գիտասցես և ի միտ առցես զանիմացական, զտրտմեցուցիչ անձին քո խնդիրս, զոր առնես. զի ուր տաբայց, հանգուցից, յորժամ հանից ես անտի զայն ամբոխ բազմութեան. և կամ ո՞ր իցէ երկիր, որ բաւիցէ առաջի նոցա. եթէ ոչ արարից ըստ բանիդ ըստ այդմիկ»։ Եւ այսպէս միաբան սպառնալեաց պատգամաւ դադարեցին յամին յայնմիկ և դարձան անդրէն ընդ նոյն դուռն։

Ապա իբրև ետես իշխանն՝ տէրն նոցա զայն ամենայն աղխ գերութեան աւարացն մարդոյ և անասնոյ և անօթոց, արծաթեղինաց և ոսկեղինաց և հանդերձից պատուականաց, խորհեցաւ ի մտի իւրում յայն կոյս ինքն իսկ իւրովի գալ ելանել։ Ազդ առնէ այնուհետև ամենեցուն, որ

---

1 w կարօտացաք km կարօտացայք gl կարօտացար abcder կարոտեցար adgkmw h չիք դու նմանէն bcer ոսկոյ belr և արծաթոյ c և կամ արծաթոյ

2 bcer ոսկէման d մարգարտիւ h մարգարեա a բեեզից g բէեզից km բեհեզաց

3 l կարօղ

4 ag չիք առ իս d դարին gk դորա km խնդրոյն a եթե bklm թէ d չիք եթէ

5 d քոյ h չիք ես bcelr ցուցի փխ ասացից amw ասացի

6 bcelr թողացուցանել h բանի

7 bcelr ի յերկրէ h երկրէ h զօրաւարն bcelr զմեծ զօրավարն իմ և զյաղթողն (l զյաղթօղն) g զյաղթօղ bgl զշահվարազն cr չիք շահվարազն km զշահվարազ

8—9 a իմաւք b իմօք km շահենով adghkmw զրտակարինով c քըրտիկարինաւն km զզօրս adghw զզօրն cr ըզզօրսն d զբիւրաւորսն l զհազարաւոր b զընդիր l զնդիր km և զընտիր a զնտիր cr զընտիր km սպառազէնս h զսպառազէնս l զորս d յօրինեցին

10 adghkmw չիք կորուսանել ...յերկրէ իմմէ cr իմէ bcer չիք և b չիք արդ cr դարձուցանեմ b դարձուցի

12—13 bcelr չիք և ոչ... հանից զքեզ h մինչ g ապայ bcelr առնուցուս

14 d քոյդ խնդրես km զխնդիրն

15 gkm հանիցեմ adhw հանդիցեմ l անդի bcelr բազմութեանն

16 km չիք և կամ adghw ուր փխ որ a եթե

17 km այսպիսի փխ և այսպէս bcelr անմիաբան k չիք միաբան cer պատգամօք bl պատգամովք adghw պատգամովն

18 w չիք յամին h այնմիկ bcelr դարձեալ bcelr չիք անդրէն bcelr մտին ընդ նոյն դուռն

19 l էտես adgkmw իշխան տէր d ախղ

20 ah աւարուցն cl աւարոցն km աւարաց cr ի փխ և[1] բոլոր ձձ., բացի h-ից չիք արծաթեղինաց

21 aghkmw յայնմ

22 celr կողմն փխ կոյս b կողմինքն b չիք ինքն gkm որք

*ընդ ձեռամբ իւրով էին, տոհմից տոհմից և ազգաց ազգաց, լեռնականաց և դաշտականաց, յարկաբնակաց և բացօթեկաց, ծովամխաց և ցամաքայնոց, գլխագերծաց և գիսաւորաց. զի ընդ ակնարկել նորա պնդակազմ, պատրաստական գտանիցին։*

*Արդ՝ յամին երեսներորդի ութերորդի, որ ամ էր տագնապի և աղետի, սպանման Խոսրովու, եկեալ նոյն ինքն, զոր վերագոյնն ասացաք, որ էր նա Ջեբու խաքան, ունելով ընդ իւր և զորդին իւր. և զհամար զօրուն նորա ոչ ոք կարէր արկանել ընդ թուով։ Իբրև եհաս յերկիրս Աղուանից բօթն ահագին, կամեցեալ ամրացուցանել զաշխարհս մեր ի մեծ մայրաքաղաքին Պարտաւայ բերդին. և լինէր այն ի հրամանէ առն միոյ, որում անուն էր Գայշաք, որ առաքեալն էր ի Խոսրովայ պետ և իշխան աշխարհիս. որ փակեաց ի ներքս զբազմութիւն շրջակայից գաւառաց և կամէր պնդել զինքն միաբանութեամբ հանդերձ մեծամեծաց աշխարհիս և բնակչաց քաղաքին կալ ընդդէմ նոցա։ Բայց հայէր տեսանել, եթէ զինչ ինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծի քաղաքին Ձորայ. և ընդ զումարտակս սքանչելի պարսպացն, զոր բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհ իւրեանց՝ զումարել ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս ի շինուածս մեծասքանչ գործոյն, զոր փակեցին աղխեցին ընդ լեառն Կաւկաս և ընդ մեծ ծովն Արևելից։*

*Արդ՝ ի մօտել տիեզերական ցասմանն, որ առաջի էր մեզ ամենեցուն, նախ՝ զնա բախեցին ալիք ծովուն ծաւալեալ և ի հիմանց տապալեալ։ Քանզի տեսանելով զահն սաստկացեալ ժանտատեսիլ, ժպրհերես,*

---

1 a *եին* bcelr *է* d *տոհմից և ազգաց*

2—3 a *բացեաւթակաց* a *ցամաքայնւոց* bcelr չիք *ընդ* bcelr *յակնարկել* dl *պնտակազմ*

4 cr *գտանիցեն*

5 bcer *ի յամին* l *ութներորդի* adghkmw չիք *և* km *աղետից* acdeglrw *աղէտի*

6 hkm *սպանմանն*

7 clr *զօրաց*

8 cr *կարէր ընդ գրով արկանել կամ ընդ թուով* h *երկիրն աղուանիցն* l *էհաս*

9—10 km *կամեցան* bcelr *մայրաքաղաքն պարտաւ* ag *պարտաւա* d *պարտաւոյ* km *պարտաւաբերդի* g *բերթին* r *պարտաւու* bg *անունն*

11 bcel *գաշաք* adghkmw *առաքեալ* bcelr *ի խոսրովու* a *պէտ*

12 km *շրջակայ* abcdeglrw *շրջագայից* l *պնտել* aghkmw *պնդեալ*

13 a *մեծամէծաց* bcelr *մեծաց*

14 a *եթե* b *թէ* adghkmw չիք *ինչ*

15 adg չիք *անցանիցեն* w *անցանելոց են* adghkmw *մեծ* adh *չողա* bcr *չորա* gkmw *չողայ*

16 d *քանզի* փխ *սքանչելի* km *պարսպացն նորա* w *զորս* a *ծախովք* d *ծախօք* bcelr *թագաւորաց*

17 adhklmw *զաշխարհս* d *զումարեալ* k *զումարելով* h *ճարտարս արս* d *և հնարելով*

18 cer *շինած* bl *շինուած* km *որով*

19 gkmw *կովկաս* l *կաւաս* b *կօկաս* d չիք *և* bcelr չիք *մեծ* g *ծօվն*

20 gl *մօտիլ* b *ցասման* dcelr *առաջի կայր*

21 k *բաղխեցին* d *ծովու* g *ծօվուն* cr չիք *ի*

22 bcelr *զահս* cr *ժանգատեսիլ* w *ժպիրհերես* a *ժպրհէրես* h *ժպրհէին*

*լայնադէմ անարտևանուն բազմութեանն ի ձև իգական գիսարձակս դիմեալս ի վերայ՝ դողումն կալաւ զնոսա առաջի նոցա. մանաւանդ ի տեսանել զպնդաքարշ կորովաձիգսն, որ իբրև զկարկուտ սաստիկս տեղայր ի վերայ նոցա։*

*Իբրև զգայլս գիշախանձս անամօթացեալս դիմեցին ի վերայ նոցա և անխնայ կոտորեցին յանցս և ի փողոցս քաղաքին. և ոչ խնայէր ակն նոցա ի գեղեցկատես, պայծառագեղ, մանկահասակ արուի կամ իգի, և ոչ յանպիտանս և յանօգուտս. և ոչ թողուին զհաշմս կամ զծերս, և ոչ գթային կամ գալարէին աղիք նոցա ի խանդաղատանս տղայոց, որք զկոտորեալ մարքն փարէին և դիէին զարիւն ստեանց նոցա իբրև զկաթն։ Այլ իբրև զհուր վառեալ յեղէգն՝ մտանէին ընդ դուռն և ելանէին ընդ միւսն՝ գործ գազանաց երկրի և թռչնոց երկնից թողեալ ի նմա. ապա տակաւ տակաւ շարժէին ալիքն ընդդէմ մեր։*

*Արդ՝ իբրև լսէր զայս ամենայն պետ և իշխանն մեր, որ պահէր և ունէր զքաղաքն Պարտաւ, կամէր խօսել առ ամրացեալ բազմութիւնն, որք էին ժողովեալ ի մեծ բերդին, վասն սաստկացեալ ահին, եթէ զինչ իցէ արժան գործել։ Ելաց զբերան իւր և յերկիւղէն մեծէ անդրէն զբանն կրկնել ոչ կարաց, քանզի թափեցաւ սիրտն նորա, և դողումն կալաւ զնա յոտից մինչև ցգլուխ, և ծունգք նորա զմիմեանս բախէին։ Եւ իբրև գիտաց բազմութիւնն զանչափ վատասրտել առնն, զաղաղակ բարձին և ասեն. «Ընդէ՞ր ընաւ արգելեր զմեզ պահել ի ժամս յայս՝ տալ զմեզ կանամբք և որդւովք մերովք ի ձեռս արիւնարբու գազանացն։ Եւ արդ՝ որպէ՞ս կարի-*

---

*1—3* d *այտնադէմ* փխ *լայնադէմ* b չիք *բազմութեանն... իգական* a *ձէւ* a *դի-մէալս* clr *դիմեալ* a *վէրայ* gkm *տեսանելով (չիք ի)* bdgl *զպնտաքարշ* bcelr *զկորովաձիգ-նետսն* gk *որք* k *կարկուտ* dgkm *սաստիկ* km *տեղային*

*5—6* d չիք *զգայլս* km *գայլք* km *գիշախանձք* k *անամօթացեալ* m *ամօթացեալ* km *դիմէին* d *դիմեցին յանցս և ի փողոցս քաղաքին ի վերայ նոցա* ce *յանխնա* b *ան-խնա* a *յանխընա* dghlw *յանխնայ* km *կոտորէին* b չիք *ի (տ. 6)* cr *խնաէր* d չիք *ակն*

*7* a *գէղէցկատես* bcelr *մանկան հասակ* km *մանկահասակս*

*8* bcelr *զանպիտանս և զանօգուտս* h *յանպիտանս էր* abcdehlrw չիք *և ոչ* k *ոչ* փխ *և ոչ*[1] a *եր* փխ *և* clr *և զծերս*

*9* bcelr չիք *կամ* d *գթացին* a *խանտաղատանս* g *որքք* bklm *որ*

*10* d *մարքն* clr *մարմաքն* bcelr *որպէս* փխ *իբրև* a *ըստեանց*

*11* a *իբեւ* փխ *իբրև* k *հուր* l *վառեալք* cr *ի յեղեգն* h *եղէգն* b *մտին ի յեղեգն մտին* celr *մտին* a *ելանեին* bcelr *ելին*

*12—13* abcdeghklmw չիք *երկրի.* ավելացնում են adgkmw չիք *թռչնոց.* h չիք *երկնից* g *ապայ* adghkm *տակաւ* փխ *տակաւ տակաւ* bcehlr *ի վերայ մեր*

*14—15* km *և* փխ *արդ* adgkmw չիք *և*[1] d *իշխան* adghkmw չիք *մեր* bcelr չիք *որ պահէր և ունէր* lw *խօսիլ* b *ամրացեալս*

*16* a *եին* gkl *ժողովեալք* g *ի մէջ բերդին* a *եթե* bcer *թէ*

*17—18* bcelr *արժան է* cr *յերկեղէն* h *բերանն և երկիւղէն* adh *կրկնեալ* adg *զնոսա*

*19* bcelr *ի վեր* փխ *ցգլուխ* b *ծունկ* d *ծունգկ* b *բախեն* dkm *բաղխէին* km չիք *և*

*20* d *բազմութիւն* hk *զայնչափ* dgklmw *վատասրտիլ* b *վատասրտեալ* h *վատա-սրրտութիւնն նորա* k *աղաղակ*

*21* cr *արգելէր* b *այս* adw *մեզ*

*22* bcer *որդովք* bl չիք *մերովք* adgw *ի ձեռն* h *արեանարբու* bcelr *թշնամեացն* փխ *գազանացն*

ցեմք ելանել փախչել առաջի նոցա այսչափ խառնաղանճ բազմութիւն քաղաքիս, քանզի եկն եհաս ահա սատակիչ թշնամին մօտ առ մեզ իբրև մղոնօք երիւք։ Ապա ասեն այր ընկեր իւր. «Ընդէ՞ր հեղգամք առնել զքաղաքս գերեզման անձանց մերոց, թողցուք զկահ և զկարասի մեր, ելցուք գնասցուք, թերևս զերծնուլ մարթասցուք»։ Եւ դէմ եդեալ առ հասարակ ընդ չորս դրունս քաղաքին՝ աճապարէին անկանել ի լեռնակողմն Արցախայ գաւառին։

Եւ իբրև իրազգած եղեն թշնամիքն եղելոցն՝ պնդեցան զհետ փախստէիցն. և հասեալ ի մասն ինչ առ ստորոտով լերինն, որ է յանդիման գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի, յորմէ և ես։ Եւ ի նսեմանալ աւուրն ոչ կարացին ժամանել ի բազում ինչ ի վնաս, այլ զանկեալսն փոքր ի շատէ ի ձեռս, զորս կոտորեցին և զորս զհետ կահուց, սայլիցն և գրաստուցն անկելոցն ի բուռն՝ դարձուցին անդրէն ի բանակն իւրեանց։ Եւ ի խնամակալութենէն Աստուծոյ ոչ ևս յաւելին պնդել զհետ բազմութեան փախստէիցն։ Եւ ի գիշերի յայնմիկ անցին ամենեքեան, որպէս երբեմն եբրայեցիքն ընդ ծովն Կարմիր, և անկան յամուր գաւառն Արցախայ։ Եւ նոյնպէս և այն իշխանն՝ Գայշաք անուն զերծաւ համօրէն տամբ իւրով և անկաւ ի կողմանս Պարսից. և այլ ոչ ևս կարաց կարգել զինքն ի նոյն իշխանութիւն։

Եւ յետ այսր ամենայնի դիմէին ուղխքն յարուցեալ, գետն յորձանուտ ընդդէմ Վրաց աշխարհին, և պատեալ պաշարէին զփափկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփղիս։ Ազդ լինէր և մեծի կայսերն

1 bcelr չիք ելանել h այսքան cer խառնիճաղանչ b խառնաճաղանչ l խառնաղանչ gkm խառնիճաղանճ h խասնաճաղանճ

2 adhw քաղաքի bcelr չիք եկն l էհաս h չիք ահա d սրտակէզ փխ սատակիչ dw չիք մօտ

3—5 b մղոնովք adghkmw մղոնիւք g ապայ adghkw չիք իւր a ընդեր gkm առնելով bcelr չիք առնել զքաղաքս գերեզման անձանց մերոց d կաքաւս փխ զքաղաքս bclr չիք թողցուք... մեր w կարասի v զահ և զուկարութիւն մեր km և ելցուք bcer զերծանել klm զերծանիլ bcelr զիմեալ փխ դէմ եդեալ

6 bcer չորեսեան l չորեսին a աճապարեին ghl անկանիլ clr լեռնակողմ d լեառնակողմն

7 agh արցախա w արձախայ clr արցախ d արձախ k արցախագաւառին

8—9 bcelr և իբրև երբ ուրեմն a իրազզայ (ուղղված իրազգած) l իրազգածք d թշնամին l պնտեցան km փախստէից a ստորոտով bcelr չիք է

10 bcelr մեծ գեղին (l գիւղին) կաղանկատուաց որ և (l որ է) ի նմին ghkm կողման adghkm կայտուաց r (լուսանցքում) ի թու հայոց 50 կամ 60 w չիք կողմանն a դէաւղջն k որ ի նմին h որ է

11 dk չիք և a նսէմանալ hm վնաս (չիք ի)

12—16 d զոր km կահից adghw կահաց km սայլից km գրաստուց km չիք անկելոցն ի բուռն adghw անկելոց adg բանակ adghkmw չիք և ի խնամակալութենէն... փախստէիցն l պնդիլ cer բազմութեանն d չիք ի (տ. 15) km իսկ ի գիշերին a ամենէքեան b հեբրայականքն cer յեբրայականքն adhlw հեբրայեցիքն g ծօվն c կամիր

17 adghkmw գաւառս dw արձախայ k արցախոյ bcer արցախս bklm չիք և[1] b չիք և[2] km իշխանն այն abcehlr գաշաք g յանուն

19 cr կարգիլ cer իշխանութիւնն b զիշխանութիւն

20 km չիք և km դիմէր km ուղխն h ուխքն w գետ km և գետն

21 b պաշարէցին

22 cer վաճառաշահն քաղաք հռչակաւոր և մեծն տփխիս b վաճառաշահն bhl զմեծ bklm տփխիս l արդ փխ ազդ km չիք և adghw մեծ

*Հերակլիոսի։ ժողովեալ և նորա զամենայն զօրս զօրութեան իւրոյ, գայր վաղվաղակի հասանէր առ նիզակակից օգնականն իւր. և ի մատուցանել զօժիտս և զընծայս թագաւորական ընկալեալ, յոյժ բերկրեցան ի տեսանել զմիմեանս։ Ապա այնուհետև անդ էր տեսանել զաղէտս եղկելի անձանցն, որ փակեալն էին ի բերդին։ Հասեալ ի վերայ նոցա թշուառութիւն ի վերայ թշուառութեանն. բայց վասն զի չև ևս էր հասեալ ժամանակն, որ առաջի կայր։ Եղև այսպէս, զի իմացեալ խոսրովու զժամադիր մեծ թագաւորացն երկոցունց ի քաղաքն յայն, յառաջ քան զպաշարելն զօր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա և ի պահպանութիւն քաղաքին, զյօժարն և զքաջ պատերազմող զզօրագլուխն իւր զՇարհապաղ և յընտիր հեծելոց թիկնապահաց և դռնապահաց իւրոց ընդ նմա իբրև արս հազարս։ Զոր իբրև տեսին բնակիչք քաղաքին զզօրավիգն առաքեալ հանդերձ յաղթանդամ և կիրթ պատերազմակցօքն, յոյժ զօրացան յանձինս իւրեանց. և սկսան ծաղր առնել զերկուս թագաւորսն, զի թէպէտ և տեսանէին զանթիւ բազմութիւն զօրացն հիւսիսոյ և արևմտից, զի ի նմանութիւն լերանց ճակատեալ շուրջ զքաղաքաւն, թնդայր, դողայր երկիրն ի բազմութենէն, նա և ընդ նմին զմեքենայսն և զչորեքանիւսն և զայլ ազգի ազգի հնարս յօրինեալ ի ձեռաց ճարտարացն Հոռմայեցւոց, որով անվրէպ առնէին զքարաձիգսն ի փլուզանել զպարիսպն քարամբք մեծամեծօք։ Նա և զուռուցիկ տիկսն մեծամեծս, քարալիցս, աւազալիցս, որով զգետն մեծ՝ զԿուր, որ պատէ զկողմն քաղաքին՝ ուռուցեալ յետս ընդդէմ ընդ պարիսպն դիմեցուցանէին. այլ նոքա ոչ ինչ վարեալք և յոչ մի ինչ իրաց,*

---

*1* g հերակլիսսի abcdelm չիք հերակլեոսի km հերակլիոնի km և ժողովեալ նորա h նորև

*2* dh օգնական cer մատուցանէր

*3* bcelr զօժիտսն a զընձայս k թագաւորականս bcelr ընկալեալ ի նմանէ cr տեսանելն

*4* l անտ a անդր cer ի տեսանել adghkmw չիք զաղէտս km զեղկութիւն փխ զեղկելի

*5* gl որք bk փակեալ agh թշուառութիւնն

*6* agh թշուառութնան gkm թշուառութեանց bcelr չիք վասն

*7* adghkmw չիք այսպէս

*8* a երկուցունց cr երկոցունցն adghw այն a զպաշարեալն k զպաշարիլն

*9* cr չիք ի

*10* a պարէրազմողն l պատերազմօղն bcerg պատերազմողն h պատերազմօղն agh զշարհապաղա bcelr զշարհապլական w զշահրվարազ km զշարհապալայ d զշահապազ a յնդիր b ընդիր cr յընտիր

*11* adghw իւր hk հազար b զորս

*12* dw զօրավիգն

*14* km զերկու a թեպէտ a տեսանեին

*15—16* acr հիւսիւսոյ abcdeghlw զարևմտից km չիք զի adgh չիք ի l ճակատել l թնթայր adghkmw չիք թնգայր... բազմութենէն

*17* a զմենքենայսն a չորէքանիւսն d զչորիւքանիւսն c զչորէքանիւսն adgkmw հնարսն

*18* bdw ձեռն lw հռոմայեցւոց bcer հռոմայեցոց l որովք a առնեին

*19—20* l զքարաձիքսն bcelr չիք ի (տ. 19) l զպարիսպսն l մեծամեծս l չիք Նա և l չիք զուռուցիկ տիկսն մեծամեծս bcer աւազալից k չիք աւազալիցս km որովք

*21* bcelr զքաղաքին կողմն l չիք ընդ kl պարիսպսն h պարսպին

*23* km սակայն փխ այլ bcer ոչ մի adgkmw ոչ ի մի k չիք այլ

*այլ քաջալերէին զմիմեանս. և զբեկեալսն ի պարսպէն անդէն շինէին և կանգնէին։*

*Ապա իբրև լքան վատեցան վաստակեցան զօրք երկոցունց Թագաւորացն, և ոչ սակաւ էր Թիւ անկելոցն ի մարտի հետևակացն, խորհեցան առ միմեանս Թագաւորքն և ասեն. «Ընդէ՞ր է այս կորուստ զօրաց մերոց. ո՞չ ապաքէն յորժամ կապիցեմք զհզօրն, զտուն նորա, որպէս և կամիցիմք, աւար հարկանիցեմք»։ Յայնժամ կարգէր, յօրինէր նախանձախնդիր մեծ կայսրն Հերակլիոս, եԹէ զինչ ինչ արժան իցէ գործել։ Եւ ասէ ցայրն այն, որ եկեալ էր յօգնականուԹիւն նմա. «Դարձի՛ր դու, մո՛ւտ խաղաղութեամբ զօրօք քովք յամիս յայսմիկ ի տեղի քո. զի տեսանեմք զհովանութիւնդ ձեր, և ահա ոչ կարէք տոկալ՝ ի հասանել ամառնային տապախառն ջերմութեան աշխարհին Ասորեստանի, ուր է Թագաւորանիստն Պարսից առ գետովն մեծ, որ է Տիգրիս։ Եւ ի գալ միւս ամին և ի նուազել ամառոցն ջերմութեան փաղփաղեսցես ելանել այսրէն, զի կատարեսցուք զկամս մեր. և ես ոչ դադարեցից ոգորել ընդ Թագաւորին Պարսից և փտանգեալ նեղեցից զաշխարհս և զծառայս նորա. և այնչափ հնարեցայց խելամտութեամբ. մինչև յիւրոցն վճարեսցի»։*

*Եւ եղև իբրև լուան բնակիչք քաղաքին զլքանել զվատել նոցա, առաւել հպարտացան յանձինս իւրեանց և սկսան զպատճառ կորստեան իւրեանց զխաղն խաղալ։ Բերին դդում մի մեծ, նկարէին ի վերայ նորա զպատկեր Թագաւորին Հոնաց՝ կանգուն մի յերկայնն և կանգուն մի ի լայնն. և զտեղի արտևանաց աչացն յօտ մի ծրագրեալ, զոր ոչ ոք կարէր*

---

*1–2* bcelr *քաջալերեալ* adghkmw *ի նոցանէն* փխ *ի պարսպէն* km *նոցանէ* kmw *անդրէն* a *շինեին և կանգնեին* d *զանգնէին*

*3* g *ապայ* km *վատնեցան* abcdehl *վանեցան* l *և վաստակեցան* h չիք *վաստակեցան* bcelr *զօրքն*

*4* km *հետևակաց* a *խորհեց* d *խոնարհեցան*

*5* d չիք *ասեն* w *Թէ ընդէր* a *մէրոց*

*6* b *զտունն* b *կամիցեմք*

*7* l *հարկանիցիմք* b *զնախանձախնդիր* d չիք *մեծ*

*8* h *կայսր* d *հերակլիւս* abcew *հերակղիոս* a *եԹե* bcel *Թէ* adghkmw չիք *ինչ* w *արժան էր* abcdeghl *արժան է* adghkmw չիք *այն*

*9* bcer *մուտ դու* l *և մուտ դու*

Յայնմ ժամանակի զօրավարի և մեծի իշխանին Հոնաց՝ Ալփ Իլիթուերու առեալ զբազմութիւն զօրաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ էին առ նա յաժխուժաղնեան յաշխարհէն Գովգայ, ի զէն և ի զարդ վառելոց զօրապետաց, դրօշուք և գնդիւք մկնդազգեստ աղեղնաւորաց և սպառազէն հեծելոց զրահեալք և սաղաւարտեալք, իբրև թէ վրէժխնդիրք արեանն իցեն Ջուանշիրի՝ ապատակ սփռեալ յաշխարհն Աղուանից՝ առ ստորոտով մեծ լերինն Կաւկասու և յաւանս Կապաղակայ գաւառին։ Եւ ինքն իւրով յօգնական գնդիւն ի հովիտս դաշտացն ճախր առեալ՝ անցանէր յԻտի գաւառ ընդ գետն Կուր. և ահա սաստիկ ամփոփէր զմարդ և զանասուն աշխարհին այնորիկ, աւար առեալ գերէին զամենայն։ Եւ ինքեանք անդրէն դարձեալ բանակէին ի կողմանս դաշտին առ սահմանօքն Լփնաց։

Իսկ իբրև ետես իշխանն Աղուանից Վարազ Տրդատ զայն ամբոխ բազմութեան գնդին, զի ապատակ տուեալ յանխնայ գերէին, քանդէին զամենայն, նեղեցաւ յոյժ և տարակուսեցաւ։ Ապա առաքէր պատգամ առ իշխանն Հոնաց զմեծ եպիսկոպոսապետն Եղիազար՝ ցուցանելով ի ձեռն նորա զիւրն հաւատարմութիւն միամիտ և զսէրն, զոր ունէր առ նա մտերմաբար իբրև եղբօր սիրելւոյ, թէ չէաք մեք հաղորդ սպանմանն Ջուանշիրի.

1 adhkmw չիք նախնական d տէրութեան w տէրութեամբն dkm ի նոյն aghw ի նոյն փխ իսկոյն

3—4 kmw զօրավարին cghklmr մեծ d հոնաց aghkm ալփիւղի թուէրոյ w ալըիւղի թուելայ b ալփիլի թուէրու d ալտիւղի թուելոյ l ալփիղի թուէրու cer ալփիլիթուէրու gkm որք acr ուստէք ուստէք l և ուստեք ուստեք որք եկեալք bcer ուստեք ուստեք որ եկեալ

5--6 adgw աժխուժաղնեան bcelr յայխոժաղնեան km աշխոյժաղնեայք km գովգոյ cr գովգա a վառէլոց a զօրապէտաց b զօրաց պետաց d զօրապետօք klm դրօշիւք adghw դրօշօք bcelr գնդօք a մկնդաւզեստ k մկնդակազգեստ

7 b և զրահեալք bcdr սաղաւարդեալք blmr իբրու թէ adghw վրէժխնդիր

8 adghkmw չիք իցեն a ջաւանշէրի w ջեւանշէրի b ջուանշերի k ջիւանշիրի dh ջեանշերի km սփռեալք km և առ ag ստորոտովն

9 b կօկասու dgklm կովկասու k կապաղանայ bcelr կապաղական a կապաղակա bl գաւառի km չիք և

10 k իւրովի ag յօքնական b գնդիւ h գնտիւն h չիք ի km ընդ փխ ի abcdlr յովիտս փխ ի հովիտս

11 a ահայ m անդ kmw սաստիկս bcelmr ամփոփեալ k ամփոփեալ a ամփոփեր

12 km չիք այնորիկ a գէրէին c ամենայն

13 bcelr անդէն adgkmw բնակէին h բնակեն d սահմանքն d սահմանօք h չիք առ սահմանօքն

14 bcelr չիք վարազ տրդատ

15 d ապատ a առել km սփռեալ dghw առեալ փխ տուեալ abcr յանխնա kmw չիք յանխնայ h անխնայ a գէրէին h գնտին bcelr չիք քանդէին

16 gw զամենայնն a նէղեցաւ bcelr նեղացաւ a տարակուսէցաւ g ապայ b պատգամ պատգամ

17 a էպիսկոպոսապետն w եպիսկոպոսն bcelr ղազար

18 d չիք նորա km զիւր միամիտ abcdeghrw զիւր cmr հաւատարմութիւնն h չիք առ նա

19 k իբրու bcr սիրելոյ km և թէ bcelr եթէ gk չեղաք l մեք չէաք d սպանման w ջեւանշէրի dh ջեանշէրի k ջիւանշիրի a ջեւանշերի bcer ջուանշէրի

այլ ի ձեռն վատանշան առն միոյ նուազազունի եղեն ոճիրք անհնարինք չարեաց։ Զայս ամենայն խօսեցաւ կաթողիկոսն Աղուանից առաջի հիւղականին Հոնաց. որոյ յաւելեալ և այլ բանս աստուածայինս զանգիտականս՝ մերձեցուցանէր զնա յերկիւղ և ի սէրն Աստուծոյ և նուաճէր զմիտս նորա ի հաշտութիւն և ի սէր անքակտելի։ Այս հաւանական մտօք իշխանն Հոնաց օգնական և թիկունք նորա իշխանութեանն լինէր. և ինքն չուեալ անտի՝ անցանէր գնայր յաշխարհն իւր։

ԳԼՈՒԽ ԼԵ

**Վասն յառաջադիմութեանն Վարազ Տրդատայ**
**և ընդունել զահ և պատիւ ի կողմանց կողմանց,**
**և վախճան Դաւթի՝ Մեծ Կուենից եպիսկոպոսի.**
**և Իսրայելի փոխանորդել զաթոռ նորին,**
**որ եղեւ առաջնորդ բարի**

Այնուհետև աստուածարեալ իշխանն Վարազ Տրդատ օր ըստ օրէ յառաջատէր ի պետաւորութեանն իւրում։ Եւ յետ այսորիկ ընդունէր զգեբազոյն զահն ի հզօր և յարքայակերպ իշխանէն Տաճկաց սահմանակալ լինել կողմանն արևելից, և իշխել ամենայն թագաւորութեանն Աղուանից և Ուտիացւոց գաւառին, նուաճեալ ընդ ինքեամբ զամենեսեան՝ յարազուարճ ցնծութեամբ յաղթող և հզօր գոլով ի վերայ սահմանաց իւրոց.

1 a աւճիրք bdlr օճիրք km ոճիրքն bceklmr անհնարինն

2 w չարեացն bcelr զայս իբրև լսէր զամենայն զոր խօսեցաւ a զայ ամենայն kr կաթուղիկոսն hm չիք Աղուանից

3 cr որոց km զայլ

4 ch երկիւղ

5—6 km և այս g այսպ d հաւանակ adgkmw զիշխանն dw իշխանութեան bdghkmw առնէր փխ լինէր

7 er գնայր անցանէր h աշխարհն

8 abcehlrw չիք գլուխ b ԼԶ

9 bcelr յաղագս adghw առաջնորդութեան klm յառաջադիմութեան bcr տրդատա

10 l ընդունիլ bcr ի կողմանց ի կողմանց k չիք կողմանց

11 ac վաղճան kmw վախճանի cr դաւթա b դաւթայ adghkmw մեծ կողմանց a եպիսկոպոսի

12 a իսրաէղի l իսրաիղի bcdegmw իսրայէլի h վասն որդութեան adgw փոխանորդութեան adghw չիք զաթոռ r նորա

13 b առաջնորդաբար փխ առաջնորդ բարի km բարի յիւրում կոչմանն

14 d իշխան b օրստօրէ cr յօրստօրէ a օրստօրէ

15 gkm յառաջանայր adh յառաջանէր cr յառաջւորէր d պետաւորութեան km չիք յետ այսորիկ bcelr այնորիկ bcelr չիք ընդունէր

16 cr արքաակերպ b յարքաակերպ d սահմանեալ

17 l լինէր g լինիլ bcelr կողմանցն ahw արևելեայ km չիք և d թագաւորութեան

18 bcr ուտիացոց d ուտէացոց aghkmw ուտէացւոց bklm և նուաճել cr և նուաճեալ adghw նուաճեալ lr ինքեան b յինքեան dmw զամենեսին k զամենեսինն

19 dl յաղթօղ h սահմանացն

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ ապա և երջանիկ հայրապետն Մեծ Կուենից՝ Դաւիթ յաւելաւ առ հարս իւր, որոյ զբարիոքն պատերազմեալ՝ յաստեացս բարի անուանեցաւ և ի հանդերձեալսն հրանիւթիցն զտաւ հանդիսակից։ Բայց ապա անհովիւ հօտն զոլով՝ եկեղեցին մնացեալ տխուր։ Յայն ամ խորհուրդ ի միտ առեալ բարեպաշտ իշխանին Աղուանից ընդ հարազատ զօրավարին և ընդ կաթողիկոսին ամենայն եպիսկոպոսօք և նախարարօքն հանդերձ՝ փութով հասանել ի կատարումն աստուածային խորհրդոյն։ «Եկա՛յք, ասէ, զընտրեալս զայս յԱստուծոյ զԻսրայէլ՝ զառաքինազգեստ այրս, յաթոռ աստուածազան վերադիտողութեան զաւառին Մեծ Կողմանց կարգեսցուք տեսուչ, զի լուսաւորեսցէ զնոսա օրէնսուսոյց խոհականութեամբ ի բանս արարչին»։ Իսկ նա թէպէտ և առ մի նուազ ոչ առնոյր յանձն, բայց քանզի իշխանաւսաստ հրամանաւ ստիպէին զնա, ոչ յամառեալ պնդէր զառաքելականն յիշելով բան, եթէ «որ եպիսկոպոսութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ»։ Կամ զվաղնջուցն յիշատակել ի միտս՝ զհամբականն տիոց զտեսիլ ցուցակութեան նմա ի սուրբ եկեղեցւոջն ի Վաղարշապատ քաղաքի։

Վասն որոյ ձայն արկեալ ասէր. «Կամք Աստուծոյ կատարեսցին»։ Ապա յայնժամ շեշտակի ճեպով յղեալ զնմանէ իշխանն արս աւագս ի գլխաւոր նախարարացն, զի փութով առ նա հասուսցեն։ Արդ՝ եկեալ հասեալ նոքա ի Միջնարցախն գաւառ՝ գտանէին զնա ի Գլխոյ վանս՝ յիւրում մենաստանին, որով եղև ժողով վիճակելոցն քահանայից։ Եւ յուղարկեալ

---

*1—3* bcer ընդ այն ժամանակսն ընդ այնոսիկ l ժամանակսն g ապայ bcclr չիք ապա bcelr չիք և bcelr քահանայապետն agh կուանից cw յաւելու d զբարեկամօքն aw զբարեաւքն gklm զբարւոքն h զպարեօքն bcelr և հրանիւթիցն ի հանդերձեալսն զտաւ d չիք և d հրանիւթից

*4* g ապայ a եկեղէցին b եկեղեցի k մնացեալ էր

*5* d առեալ ի միտ b իշխանն

*6* d զօրաւորին cdkr կաթուղիկոսին d եպիսկոպոսունք bcelrw եպիսկոպոսօքն a էպիսկոպոսօք

*7* km նախարարօք gl հասանիլ

*8—9* b զընզրեալս h ընտրեալս a զիէզ ah առաքինազեստ dgkmw առաքինազգեստ adghkmw այր cr վերադիտողութեանն

*10* bcdr մեծկողմանցն b մեծի կողմանց

*11* gh խոհականութեան adghkmw հրամանս փխ բանս

*12* gk չիք քանզի bcelr հրամանօքն

*13*.k յամառել adhmw պնդեալ b պնտէր l պնեիւր gk պնդել ablıw զառաքելականին b յիշէլով kmw զբան a եթե b թէ l որպիսութեան փխ որ եպիսկոպոսութեան a էպիսկոպոսութեան

*14—15* bcr ցանկա a ցանգա blr բարոյ adg բարւոք g գործոց a ցանգա b ցանկա mw յիշատակեալ bcelr չիք ի km ի միտ նորա bcelr ըստ համբականն gw չիք զհամբականն տիոց d զհամբակն km զտեսիլն

*16* a եկեղէցւոջն bcer եկեղեցոջ bcel ի վանս վաղարշապատ

*17* a արկել adgh կատարեսցի

*18* g ապայ a ճէպով km իշխանս adghkmw արս աւագս իշխանն cer իշխանն սարկաւագս

*19* adghkmw չիք գլխաւոր km նախարարաց d չիք նա

*20* w միջնարձախն d մէջնարձախն gkm մէջարցախն b գաւառն km գաւառի l և գտանէին b վանաց d վնաս b իւրում

*21* w ուր km ուրանօր փխ որով եղև km վիճակելոց

*զնոսա անտի պիտառականն հրովարտակօք հասանէին առ կաթողիկոսն և իշխանն Աղուանից. յանդիման ունէին առաջի նոցա զսրբասնեալն Իսրայէլ կրօնաւորազգեստ կարգաւ։ Որոց առեալ ամենեցուն զգիր գովութեան՝ մուրհակ կնքէին նմա չիւրաքանչիւր կողմանց զօրավարն նախարարօքն հանդերձ։ Ապա առեալ զնա կաթողիկոսին՝ ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն գաւառին Մեծ Կողմանց և մեծաւ ժողովով և ընծայական թղթովք յուղարկէր զնա յիւր գաւառն։ Եւ նոքա եկեալ ի նախնականն հասանէին եպիսկոպոսանոցն, որում Տաղձանսն անուանէին։ Եւ մեծաշուք մեծարանօք յաթոռակցաց և ի գլխաւորաց և ի ժողովրդականաց առաւել քան զամենեսեան լաւ ցուցանէր զիւր վարդապետութիւնն։ Առեալ զնշանն խաչին պարծանաց յանձն իւր բազկատարած պաղատանս առ Աստուած մատուցանելով վասն իւրոյ աշխարհին։ Զգաստացեալ կրօնաւոր վարուք յառաջագէմ լինէր, շրջէր ընդ ամենայն գաւառս վիճակելոց իւրոց. և հաստատէր զնոսա վարդապետական շնորհօք՝ կալ նոցա յուղղափառ հաւատս պատուիրանին պահպանութեան։ Այսպէս և այսու օրինակաւ ցուցանէր զիւր վարդապետութիւնն և պայծառանայր սիրովն Քրիստոսի։*

## ԳԼՈՒԽ ԼԸ

### Յուղարկումն Իսրայելի եպիսկոպոսի յԱյրարատեան գաւառ ի մեծ իշխանէն Վարազ Տրդատայ առ մեծ հայրապետն Հայոց Սահակ և առ բարեպաշտ իշխանն վասն սիրոյ

*Ընդ այն իսկ ժամանակս լինէր խորհուրդ բարեպաշտ իշխանին Վարազ*

---

1 *անդի* w *պետառականն* bcelr *պիտառական* | *և հասանէին* cdkr *կաթուղիկոսն*

2—4 b *յիշխանն* km *և յանդիման առնէին նոցա* w *զսրբասնեալ* a *իէղ* a *կրօնաւորազգեստ* adghw *կարգով* blr *տուեալ* փխ *առեալ* km չիք *ամենեցուն* bcelr *գովութեանց* km *գովութեանն* | *և մուրհակ* a *կնքեին* bcelr *կողմանցն* adghw *զօրավարին* k *նախատարօք*

5 adghkmw չիք *ապա* km *և պատուեալ* փխ *ապա առեալ* adgw *պատուեալ* h *պատուել զնա* dkr *կաթուղիկոսին* a *յեպիսկոպոսութիւն* cr *եպիսկոպոսութեան* hr *եպիսկոպոսութիւն*

6—8 cr *ժողով* km չիք *և* a *ընձայական* dkm *թղթով* adghkmw *յուղարկեալ* abcdeghlrw չիք *զնա* h *գաւառսն* km *նորա* փխ *նոքա* ag չիք *ի* k *հասանէ* m *հասանէք* clr *եպիսկոպոսանոց* km *յեպիսկոպոսանօց* dw *պաղձանս* bcelr *տաղձանս* bcelr *մեծաշուք մեծարանօք պատուեալ*

10 km *զամենեսին* w *լցուցանէր* d *լուցուցանէր* dw *վարդապետութիւն*

11 adghkmw չիք *պարծանաց*

12 km *մատուցանէր* bchr *սգաստացեալ* km *և զգաստացեալ* | *և սգաստացեալ* | *կրօնաւորաց* ab *վարիւք*

13 d չիք *լինէր* l *շրջիւր* bceklmr *վիճակելոցն*

14 d չիք *շնորհօք* dkmw չիք *կալ նոցա* agh *տալ նոցա* adghm *ուղղափառ*

15 abcdeghlr *հաւատ* adghkmw *ճշմարտութեան* փխ *պահպանութեան* bcelr չիք *այսպէս* adhw *օրինակով*

16 bcelr *զիւր վարդապետութիւնն ցուցեալ* d *վարդապետութիւն* bcehlr չիք *և*

17 abcelrw չիք *գլուխ* b *ԼԷ*

18 al *իղի* w *իսրայէլի* bh *յարարատեան* adghkmw *գաւառն*

19 abchr *տրդատա*

20 adghkmw չիք *առ*

21 bceklmr չիք *իսկ* bcer *բարեյաղթ* | *բարեյախթ*

Տրդատայ ի գործ ինչ խորհրդական և ի սէր արձակել զեպիսկոպոսն Իսրայէլ առ մեծ կաթողիկոսն Հայոց և առ բարեպաշտ իշխանն Այրարատեան գաւառին։ Որոց մեծաւ սիրով պատուեալ ընդ առաջ ելանէին նմա։ Եւ տուեալ նմա հանգիստ՝ շնորհէին նմա յամել ժամանակս ինչ ի տիեզերական աշխարհին։ Եւ ի ժամանակսն յայնոսիկ բերեալ էր իշխանին մեծ զօրավարին Հայոց ի Թորդանայ՝ ի Դարանաղեաց գաւառէն, զպատուական նշխարս խոստովանողին Քրիստոսի՝ սրբոյն Գրիգորի բոլորովին ամենայն ոսկերօքն հանդերձ յաշխարհն Հայոց՝ յԱյրարատեան գաւառ ի Վաղարշապատ քաղաք՝ հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցւոյն, զոր մեծին Ներսիսի շինեալ է յանուն սրբոյն Գրիգորի։ Ապա մեծաւ աղաչանօք անկեալ Եպիսկոպոսին Իսրայելի առաջի կաթողիկոսին և զօրավարին Հայոց, մաղթէր, եթէ հնար ինչ իցէ լինել զկարօտանս սրտին և զխնդրուածս նորա. «Տուք, ասէ, ի նշխարաց սրբոյն Գրիգորի»։ Եւ նոքա ոչ առնուին յանձն, եթէ ոչ երբէք ուրեք բաշխեալ են նշխարք սրբոյն Գրիգորի, եւ՛չ մեք ունիմք իշխանութիւն հանել մասն ի նման է և տալ քեզ։

Յայնժամ կալեալ օգնական զդշխոյն Հեղինէ՝ զտիկինն Հայոց Մեծաց, որ և նա իսկ յԱղուանից նահանգէն էր. սակս այնորիկ եղև ձեռնտու նմա։ Եւ պարառաբար յարուցեալ գայր առ կաթողիկոսն և աղաչէր կատարել զխնդիրն, որ վասն նշխարացն։ Նոյնպէս և զզօրավարն Հայոց՝ զիւր տէրն, համանեցուցանէր տալ զնշխարհսն, թէ՝ «Տուք զբաժին իմոյ աշխարհին և տան հօր իմոյ ի մեծէն Գրիգորէ և կատարեցէք զխնդրուածս եպիսկոպոսին, որ առաքեցաւ յիմոյ աշխարհէն, զի լցեալ նորա փափագն՝ զուարթա-

1—2 bcr տրդատա h չիք ի գործ celr արձակեալ b յարձակել a զէպիսկոպոսն b եպիսկոպոսն a իէղ dk կաթուղիկոսն abcdeghlr չիք առ a արայրատեան hw արարատեան cr յայրարատեան

2 bcelr որոյ a յառաջ a ելանեին m չիք նմա

4—5 adhw շնորհել bcelr յամել ինչ d յաւել bcdelr չիք ինչ d չիք ի տիեզերական... և ի k չիք և dw ժամանակս bcelr չիք էր aklm իշխանն

6 bceklmr և մեծ km զօրավարն abcr թորդանա bcelr յաղեաց փխ ի դարանաղեաց

7 b նշխարն aghkm չիք խոստովանողին քրիստաչի dw մեծի փխ սրբոյն bcelr մեծին cr զրիգորի լուսաւորչին

8 h յամենայն a ոսկէրաւքն հանդէրձ w յարարատեան bcelr յայրատ h յարայրատեան adghkmw գաւառն

9 bcelr վաղարշապատն d քաղաքի km և հանդուցեալ a եկեղէցւոյն bcr եկեղեցոյն d եկեղեցւոյ

10—11 a նէրսի dh ներսէսի b ներսեսի a շինէալ adghkmw էր g ապայ h պաղատանօք փխ աղաչանօք a էպիսկոպոսն dghkmw եպիսկոպոսն a իէղ l իսրաիղ dgkmw իսրայէլ bcer իսրայէլի h իսրայէլ cdkr կաթուղիկոսին

12 l և մաղթէր adghkmw զկարօտ

13 adghw չիք նորա k իսկ փխ և

14 a եթե m թէ gkmw ուրեք երբեք

15 k ոչ ումեք ունիմք agw նմանէն

16 km կալեալ նորա

17 km չիք և նա իսկ km և սակս d այսորիկ

18 km որ փխ և dkr կաթուղիկոսն adghw չիք և

19 k չիք որ km նշխարաց adghkm զօրավարն

20 h համանեցունէր km չիք տալ զնշխարսն c ասէ թէ bl եթէ r ասէ փխ թէ

21 b և ի տան c մեծեն d կատարեցիք ag հայրապետին փխ եպիսկոպոսին

22 a առաքէցաւ km զփափագն

միտ հրաժարեալ յուղարկեսցի ի մէնջ»։ Եւ մարդասիրին Աստուծոյ արկեալ ի սիրտ նոցա միակամութեամբ տալ մասն յօրէնսուսոյց ծնօտէն խոստովանողին Քրիստոսի՝ մեծին Գրիգորի։ Եւ պարգևեալ նմա զփափագելի գանձն և մեծարեալ մեծապատիւ շքեղութեամբ յարքունեաց, ընկալեալ ողջոյն, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ ճանապարհորդէր։ Գային անցանէին լուսաչու փառօք. անցեալ զսուղ ինչ ոթևանօք առողջութեամբ, բազմուրախ և հոգեզուարճ հասանէր յաշխարհն իւր. և զբերեալ սրբութիւնսն հանգուցանէր յիւրում մենաստանին ի Գլխոյ վանս։

## ԳԼՈՒԽ ԼԹ

### Վասն խորհրդակցութեան իշխանին Վարազ Տրդատայ ընդ իւր նախարարսն՝ արձակել զեպիսկոպոսն Իսրայէլ յերկիրն Հոնաց սակս հաշտութեան

Ապա ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեանն զոռոզին Մահմատայ խորհուրդ լինէր հաւանութեամբ Վարազ Տրդատայ՝ Աղուանից իշխանի ընդ ազգակից նախարարս իւր և ընդ կաթողիկոսին Եղիազարու և ասէ. «Ահա հարկք, որ եղան ի վերայ մեր ի դժնդակ ազգէն Տաճկաստանեայց, յոյժ վտանգեալ տարակուսեցէ զմեզ։ Եւ երկրորդ անգամ անհնարին աղէտք այն են մեզ՝ ամի ամի ասպատակեալ յաշխարհս մեր զօրացն Հոնաց։ Եւ յերկաքանչիւր կողմանց բռնութենէ թշնամեացն աւերեալ պակասեցաւ երկիրս։ Եկայք, մերձաւորք իմ և սիրելիք, զի ընտրեսցուք եպիսկոպոս մի ի մերմէ աշխարհէս վասն մերոյ խաղաղութեան.

---

1 d ի ձէնջ փխ ի մէնջ cr չիք աստուծոյ

2 b սիրտս adgw նորա b չիք նոցա bcelr ամենեցուն տալ bcr ի յօրէնսուսոյց hl յօրէնսուսոյց

3 c խոստովանողի adghmw չիք քրիստոսի ahk պարգևել b զգանձն փափագելի փափաքելի km որոյ փխ և

4—5 bcehlr յարքունեացն h կալեալ km և յանձն bcelr ճանապարհորդ լինէր

6—7 km գայր հասանէր լուսաչու փառօք յաշխարհն իւր abcdghrw գային հասանէին adghw ընդ սուղ bc չիք ինչ b բազմուրախութեամբ adgw չիք և bcr հոգէզուարճ adghw յաշխարհ

8 bcr զսրբութիւնսն a գլխո adghw վանսն

9 abcehlrw չիք գլուխ b ԼԸ

10 c խորհրդականութիւն adghkmw խորհրդականութեան bcr տրդատա

11 adghkmw նախարարս a զէպիսկոպոսն a իէզ

12 clr հաշտութեան իրի

13 g ապայ bcelr հարաւայնոյն իշխանութեանց d իշխանութեան

14 dw չիք զոռոզին achr մահմատա b մահմազա bcr տրդատա

15 blr իշխանին cklr կաթուղիկոսին h կաթողիկոսն

16 bcelr ղազարու adw եղիազարայ h եղիազար kl որք

17 abcdghkmw տաճկաստանեաց h վտանկեալ w տարակուսէն bcdelr չիք և

18 l այնք h այն է w ասպատակել bl ասպատակ տալ adgw յաշխարհն h աշխարհն

19 w յիւրաքանչիւր h երկաքանչիւր aghkl կողմանցն d բռնութեան kw թշնամեաց

20—21 a պակասէցաւ bcelr չիք մերձաւորք իմ և սիրելիք h սիրելիք իմ և մերձաւորք b ընդրեսցուք h ընտեսցուք a էպիսկոպոս bk զեպիսկոպոս a մէրմէ b elr յազագս a մէրոյ k խաղաղութեանն

*զի երթեալ հաճեսցէ շնորհիւն Աստուծոյ զմիտս երկուց աշխարհակալաց ի հաշտութիւն և յանքակտելի սէր, զի մի՛ լիցի յայսմհետէ խէթ իմն ունել մեզ ի մեր միտս թշնամութեան խորհուրդ»։*

*Եւ զայս ահա իբրև խորհեցան իշխանքն և նախարարքն, առժամայն ընտրեցին և արձակեցին մեծաւ աղաչանօք զիմաստուն և պարկեշտ եպիսկոպոս գաւառին Մեծ Կողմանց, որում Իսրայէլ կոչիւր։ Վասն զի ողջախոհ վարուք և իմաստութեամբ հոգւոյն բացափայլեալ առ ամենեսեան ճշգրտապէս հրաշանայր՝ շահելով իւր զհոգիսն և զբազմաց զհնազանդութիւն և զսիրոյն կատարէր պատուիրան, յանձն առնոյր վաղվաղակի ճանապարհորդել գնալ ի հեռաբնակ աշխարհն Հոնաց։ Յայնժամ հանդերձեալ պատրաստեցին ընծայս և պատարագս. նոյն օրինակ և ըստ հեռաւորութեան ճանապարհին թոշակս նմա և որք ընդ նմայն էին, և առաջէին անտի յամսեանն մեհեկանի, որ օր ԺԸ էր։ Եւ յուղարկեալք խաղաղութեամբ ի Պերոզ Կաւատ քաղաքէ՝ վտարեալք անցանէին ընդ գետն մեծ Կուր. հատեալ անցանէին ընդ սահմանս Աղուանից մինչև յերկոտասան օր։ Գային հասանէին ի քաղաքն Լփնացւոց, ուր ընդ առաջ ելեալ նմա ամենայն քաղաքացիքն՝ ընդունէին զնա խնդութեամբ ըստ կարգի եպիսկոպոսաց, մանաւանդ զի մերձեալ էր տէրունական տօն աստուածայայտնութեանն։ Մտեալ*

---

*1* bcelr *աստուածային շնորհիւ* d *երկոց* bcdelr *աշխարհաց*

*2* adgkmw *լիցի մեզ* h *մի լիցի մեզ* *այսուհետէ* h *անքակտելի* cr *խեթ* km չիք *իմն* dlw *ունիլ*

*3* hkmw չիք *մեզ* bcelr *ի միտս մեր* a *թշնամութէ* h *և թշնամութիւն ընդ նոսա* km *և թշնամութեան խորհուրդ* bcdelr *առ ի թշնամութիւն ընդ նոսա* bcdelrw չիք *խորհուրդ*

*4* bceklmr չիք *ահա* adghkmw *մտածէին* adghkmw *իշխանք և նախարարք*

*5—6* cdelrw *ընտրեալ* b *ընդրեալ* bcdelrw չիք *և* bcdelr *արձակեցին (*d *աղաչանօք կոչել) կոչել զմեծ կողմանց եպիսկոպոսն զիսրայէլ մեծաւ աղաչանօք և վասն* w *աղաչանօք կոչել* a *պարկէշտ էպիսկոպոս* h *եպիսկոպոսն* dgkm *զպարկեշտ* w չիք *զիմաստունգաւառին* a *իէզ* km *կոչէր*

*7—8* ahkm չիք *և իմաստութեամբ հոգւոյն* h *ամենեցուն* փխ *առ ամենեսեան* bcr *հոգոյն* b *բացափայլեալ* km *առաջի ամենեցուն* adgw չիք *առ* adgw *ամենեցուն* h *ճշգրտափայլ* բոլոր ձ. ձ. *գիւր* ուղղում ԽԾք *իւր* bl *ոգիսն* cr *յոգին* kmw *հոգին* c *զբազմանց* adhhkmw չիք *և բազմաց* abdeklmw *հնազանդութեան* h *հնազանդութեամբ*

*9—11* m չիք *և* ace *ճանապարհորդէր* l *ճանապարհորդիլ* km *և ճանապարհորդէր* h *ճանապարհորդէր* a *հէռաբնակ* adghkmw *պատրաստեցին հանդերձեցին (*a *պատրաստէցին)* km *զընծայս և զպատարագս* h *զընծայս* km *վասն* փխ *ըստ* adgkmw *հեռաւոր* h *հեռագոյն*

*12* g *թօշակս* w *առաքէին* cr *յառաջէին* b *անդի*

*13—14* adghkm *մեհեկի* d *տասն և ութն* adghkmw *էր ամսոյն* bcelr չիք *և* km *յուղարկեալ* h *ուղարկեալք* bcelr չիք *խաղաղութեամբ* a *պէրոզ քաւատ* bcelr *պերոժ քաւատ* km *պերոզապատ* d *պերոզ քաւատ* km *վտարեալ* clr չիք *վտարեալք* l *և հատեալ* h *հասեալ*

*15* km *և մինչև* b *ցերկոտասան* h *երկոտասան*

*16* b *լփնացոց* km *լփնաց* cdeglr *որ և* փխ *ուր* b *որոց և* h *որ էր* a *յառաջ* d *նմա ելեալ*

*17* a *էպիսկոպոսաց* l *եպիսկոպոսացն*

*18* bceklmr *տօնն* dhlm *աստուածայայտնութեան* km *և մտանելով* adghkmw *մտանելով*

*ի քաղաքն, երեկօթս արարեալ՝ անդէն կատարէին զտօնն։ Եւ անտի գնացեալ անցանէին յաշխարհն Ճղբաց առ ստորոտով լերինն մեծի։*

*Յայնժամ ձմեռային հողմոցն հիւսիսային բախմունքն ձիւնախառն անհնարին փոթորիկս յարուցին մերձ ի սարաւանդակ լերինն Կաւկասու։ Եւ յայնմ տեղւոջ եօրեայ արգելեալք՝ ոչ կարէին զաչս ամբառնալ կամ նշմարել զանցս ճանապարհին։ Վասն զի տարժանեալք յոյժ՝ լցան տարակուսանօք յաղագս սատանայական պատերազմին։ Արհաւիրք և բոմբիւնք զարթուցեալք, սակայն ոչ կարէին զայրն Աստուծոյ զարհուրեցուցանել, զի զնշան խաչին առեալ ի ձեռն հրամայէր դնել ծունր ամենեցուն. և նոքօք հանդերձ ելեալ ի լեառնն, որում Վարդէգրուակ անուն էր։ Զօրութեամբ աստուածայնոյ նշանի խաչին և աղօթիւք մեծ եպիսկոպոսին լինէր խաղաղութիւն հողմոցն, և լինէր հանդարտութիւն բռնութեանն։ Եւ այնպէս անցանէին աներկիւղ ընդ կատարն լեռինն՝ հսկայաձիր և դիւցազանցն։ Եւ յետ այնորիկ ոչ արև և ոչ աստեղք ի բազում աւուրս երևէին. և դառնաշունչ օդն ոչ սակաւ կայր ի վերայ։ Դէմ եդեալ ակամայ, տարադէմ գնացեալ, լքեալք և աշխատեալք, բազում աւուրս երթեալք ի վաղնջուցն թագաւորանիստ հասանէին կայեանս, յայն տեղի, ուր վկայեաց սուրբն Գրիգորիս՝ թոռն մեծին Գրիգորի, կաթողիկոս Աղուանից։ Որ և անտի յետ աւուրց ինչ հասանէին ի դուռն Չորայ, որ է մերձ ի Դարբանդ։*

*Եւ անդ նպաստամատոյց մեծարանս գտեալ ի քաղաքացեացն։ Այնպէս բազմապատիւ ճանապարհ ելեալ նոցա՝ գային հասանէին ի հոյակապ քաղաքն Վարաչան, ի մուտս քառասներորդացն։ Զորոյ զգալուստն լուեալ*

---

1 ahqm *քաղաքս* a *եեքաւթս* aghkm չիք *զտօնն* abg *անդի*

2 bl *ճղփաց* d *ճաղբաց* d *մեծ*

3 d *հողմոյն* a *հիւսւսային* cr *հիւսիւսական* bl *և հիւսիսական* bcelr *բախմանցն* km *բաղխմունքն* adghkmw *ձիւնառոյզ*

4 bcelr *փոթորիկ* bcelr *յարուցեալ* bcer *առ* փխ *ի* l չիք *ի* bdgklmr *կովկասու*

5 a *տէղւոջ* bcr *տեղոջ* *եօրեա* a *եաւթեա* km *արգելեալ*

6 c *նըշմարել* d *զանց* m *տարժանեալ* k *տաժանեալ* bcelr *լցաք*

7—9 d չիք *սատանայական* a *բոնբիւնք* bcr *բոմբիւք* bcr *զարթուցեալ* k չիք *սայն* a *զարհուրէցուցանել* d *նշան* d *առեալ* *էր* d *հրամայէր ի ձեռն* bcelr *ամենեցուն նծունր դնել* km *ծունր դնել*

10 w *հանդերձիւ* bcelr *հանդերձ* h *հանդերձել* abcdeglrw չիք *ելեալ* adghkmw *լեառն* edgkmw *վարդեգրուակ* h *վարդէգրուակ* *անուանէր* adgkmw *անուանէր*

11 a *աստուածայնւոյ* km *աստուածային* bcelr *աստուածեան* abcdehlrw չիք *նշանի* a *մէծ էպիսկոպոսին*

12 l *հողմոյն* km *հողմոց* adghkmw *և հանդարտէր բռնութիւնն* (w *բնութիւնն* d *բռնութիւն*)

13 bcelr *աներկիւղ* (bcr *աներկիղ*) *անցանէին ընդ կատար* a *սկայաձիր* w *սկայածիր* k *դիւցազանց* h *սկայաձիւր* km չիք *և*

14 adgh *երևէր*

15 r *ակամա*

16—18 mr *լքեալ և աշխատեալ* km *ի բազում* km *երթեալ* km *վաղնջուց* h *վաղընճուցն* km *թագաւորանիստն* r *հասանէին ի վաղնջուցն թագաւորանիստ կայեանսն* w *կայանս* km *կայեանսն* r *տեղ* ahr *գրիգորէս* km չիք *թոռն մեծի գրիգորի* r *գրիգորի լուսաւորչին* (չիք *կաթողիկոս աղուանից*) k *կաթուղիկոս* km չիք *որ և* r *յանտի*

19 kmw *չողայ* r *ճորա* r *որ է դարբանդ*

20—21 l *անտ* ce *քաղաքացւոցն* br *քաղաքացոցն* km *քաղաքացեաց* klm *և այնպէս* adghkmw *բազմապատիկ* km *արարեալ* abcdeglr *լեալ* փխ *ելեալ* km չիք *նոցա*

22 a *քառասնէրորդացն* gkmw *քառասնորդացն* dgh *գալուստն*

*մեծի իշխանին Հոնաց՝ ընդ առաջ ընթացեալ ողջունիւ. ընկալեալ զնա մեծաւ ուրախութեամբ և խոնարհեցուցեալ զինքն առաջի նորա, պատուէր և պատիւ հայրապետական սրբութեանն առնէր։ Եւ եղև իբրև պայծառապէս ծագեցան աւուրք քառասներորդացն սրբոց, մեծաւ սիրով ընկալեալ զնա քաղաքացեացն, զուարճացեալք և պատուեալք լինէին յամենցունց, մանաւանդ առաւել ի բարեխնամ իշխանէն և յազնուական մեծամեծացն։ Զայն պայծառութիւն ընդունելութեան և զհամբոյր սրբութեան սիրոյն իբրև տեսանէր եպիսկոպոսն՝ խնդամիտ յոյժ լինէր և մեծապէս գոհանայր զանպատում պարգևացն Քրիստոսի։ Եւ այսպէս բազմօրեայ հանգուցեալ ի վաստակաբեկ աշխատութեանցն, լսէր և տեսանէր անդ ամբաստանութիւն և կրօնս մարդահաճոյս ազգին թշուառացելոյ։ Ողբայր և տրտմէր վասն անհնարին չարեացն և երկմիտ հաւատոցն. որք զանձինս իւրեանց պերճացեալ աստուածապաշտ անուանէին, և նոքա էին, որք ի զօրութենէ անտի նորա ուրացեալք և օտարք գտանէին։*

ԳԼՈՒԽ Խ

### Հաստատելն ի հաւատս զՀոնաստանեսն եպիսկոպոսին Իսրայելի վարդապետական շնորհիւ, և նոցա քաղցրութեամբ ի ձեռն սքանչելեացն լսել

*Քանզի սատանայակուր ծառագոյթի մոլորութեամբն աղճատեալ ազգն այն, ըստ հիւսիսական ցրտամիտ մորոսութեանն առասպելայօդ և ստապաճոյճ կրօնիւք զհեթանոսական պղտոր պաշտամունսն մեծ գոլ կար-*

1 adghkmrw *մեծ* a *ողջոյնիւ* km *և ողջունիւ*

2 km չիք *և* km *խոնարհեցուցանէր*

3—4 bcelr *ի* փխ *և* bcelr *սրբութեան* bcelr չիք *առնէր* bcelr չիք *եղև իբրև պայծառապէս ծագեցան* bcelr *յաւուրս քառասնորդացն* gkm *քառասնորդացն* c *ընկալեալք և*

5 c *քաղաքացող* br *քաղաքացողն* adkm *ընկալեալ* փխ *պատուեալք* a *լինեին*

6 bcelr չիք *մանաւանդ* bcelr *բարեպաշտ* փխ *բարեխնամ* bcr *մեծամեծաց*

8 a *էպիսկոպոսն*

9 adghkm *այնպէս* a *բազմաւրեա* bcr *բազմօրեա*

10 l *անտ*

11 ad *թշուառացելոց*

12 c *հաւատոց* km *հաւատոց նոցա*

13 adghkmw չիք *պերճացեալ* km չիք *նոքա* cer *որ* b *ողի* adghkmw չիք *որք* h *անուանեն*

14 adghkmw չիք *նորա* abcdeghw *օտար* a *գտանեին* km չիք *գտանէին*

15 abcehlrw չիք *գլուխ* b *ԼԹ*

16 bcelr *հաւատսն*

17 a *էպիսկոպոսին* al *իղի* g *իսրայիլի* bcdehmw *իսրայէլի* ac *վարդապէտական* d *վարդապետին*

18 a *քաղցրութէամբ* d *քաղցրութեամբն* h *քաղցրութեան*

19 c *ստանակուր* belr *սատանակուր* agkm *ծառայգոթի* d *ծառոյ գոթի* m *մոլորութեամբ* b *մոլորու* cklr *մոլորութեամբ* agh *աղճատեալք* d *աճապարեալք*

20—21 acr *հիւսիւսական* h *հիւսիսային* ag *մորոսութեամբն* d *մոլորութեան* cr *մոլորութեանն* l *մոլոսութեանն* h *մոլորութեամբն* w *յառասպելայօդ* cw *ի ստապաճոյճ* adghkmw *կրօնս* a *պաշտմունսն*

ծէին։ Նա և զորոտընդոստ հրատեսակ շանթիցն ցայտմունս և զեթերակէզ այրեցմունս, թէ մարդոյ դիպեցի, թէ այլ ինչ նիւթեղինաց. ձօնեալ իմն, զնա ի պաշտօն առեալ՝ նուիրեալ Քուար Աստուծոյն համարէին։ Նոյնպէս սկայի ումեմն վայրագի անճոռնւոյ ձիախորով զոհիւք պաշտօն մատուցանէին՝ կարդալով նմա Թանգրի խան Աստուած, որում պարսիկք Ասպանդիատն կոչեն։ Բնաւին անթագաւոր միտս ունելոյ՝ գրթախաղաց լինէին զկնի ամենայն մոլորութեանցն։ Թմբուկք և շռինչք ի վերայ դիականցն և նրանակոտոր և դանակացիտ զայտիւքն և զանդամամբքն արիւնահոս գծմունք և մերկանդամ սրակոծութիւնք՝ դժոխոց տեսարան, որ առ գերեզմանօքն յածին այր առ այր և ջոկ առ ջոկ մարտատեսիկ հոլարանին։ Եւ յոգնայեղց կաճառացն ըմբշամարտք եղեալ առ միմեանս զեխութեանն կատարէին զընթացս ձիարձակ արշաւանօք այսր անդր ճախրելով։ Ոմանց սուգ և կոծ, և ոմանց խաղ ըստ այսամիտ սովորութեանն։ Զխաղս խաղային և զկաքաւսն յորդորէին զազիր գործովքն ընկղմեալք ի խոհերս խաւարայինս, կուրացեալք ի լուսոյ արարչին, քանզի կրակաց և ջրոց զոհէին և ճանապարհաց աստուածոց ոմանց, երկիր պագանէին լուսնի և ամենայն արարածոց, որ ինչ թուէր յաչս նոցա զարմանալի։

Նոյնօրինակ և ափրոդիտական ցանկութեամբն զեղխեալք՝ ըստ հեթանոսական վայրենամիտ բարուցն՝ զհօրակինն առնելով կանայս և զմի կին ունելով երկուց եղբարց, և պէսպէս կանայս առնելով բազում և ան-

---

*1—2* km չիք նա m շանթից ah ցայթմունս a զէթերակէզ b զեթերակեկ adg երէցմունս h երեցմունս bcelr եթէ c դեպեցի km և թէ այլ m չիք ինչ l ի նիւթեղինաց

*3* k չրք իմն b չիք ի adgkmw չիք ի պաշտօն առեալ km և նուիրեալ adghkmw աստուծոյ adgkmw համարէին առնէլ

*4* bcr սկաի gkm հսկայի m ուրումն bcelr վայրագ և անճոռնոյ d անճոռնոյ h անճոռնոյ

*5* km զնա փխ նմա km զոր փխ որում cr Թանկրի

*6—8* e այսպանտոյայտն bclr այսպանտեայտն h ասպանդէատն km ասպանդէատ h կոչին d չիք միտս bcelr ունելով gkm չիք գրթախաղաց լինէին bcelr լինելով d չիք զկնի km մոլորութեանց bl թմպուկք cr թմբուկք ahm սռինչք gk սռինճք d լռինչք ag դիւականացն km դիւականաց bcdehw դիականացն adghkmw չիք և b և ի դանակացիտ h դանակացիդ km զայտիւք km զանդամովք b զանդամանդամբքն h զանամամբն

*9* d գածմունք bcelr գծմունքն km չիք և cr մերկանդամք adghkmw սրագործութիւնք bcer դժոխոցն l դուոխոցն h տեսարարան l որք l չիք առ

*10* km գերեզմանօք h այրս առ d մարդատեսիկ h ջոկառջոկ

*11* abgr յոքնայեղց d յոգնայեղձ achr կատճառացն ag ջմըշամատք d ջմլամատք km ջըմըշամատ l ըմբշամարք d եղեալք c մեմեանս d զեխութեան

*12* d ընթացս

*13* c ոմանք ag սուք adw չիք և h խաղս w մոլորութեանն փխ սովորութեանն d սովորութեան d զխաղն

*14* k զկաքաւն a յաւրդարէին d գործովն k գործովք a ընդմեալք

*15* w և կուրացեալք b կուրացեալ

*16* w ի ճանապարհս bcelr չիք աստուածոց h չաստուածոց k երկրպագանէին adghmw երկրպագէին

*17* l թուիւր cr ի յաչս

*18* cr ափրադիական d ափրադիտական l ափրադիտական h ցանկութեանն bcel զեղեալք

*19* w առնլով bcdelr չիք կանայս

*20* h առնելով փխ ունելով aghkm առնէին km չիք և[1]

կրօն կարգս ունելով և անկանոն խորհուրդս, որոց ոչ կարացեալ նկատել, իմանալ զարեգակնն արդարութեան։

Որ իբրև լսէր և տեսանէր զայն ևս չարեաց պաշտամունսն և զկռակործան անուղղայ սովորութիւնն, զցայգ և զցերեկ խնդրէր յԱստուծոյ վասն աշխարհին փրկութեան, թերևս դարձի հնար գտանել մարթասցէ։ Ապա ի հրամանէ նորա ժամ լինէր աստուածարեալ իրին և ամենայն ազատակոյտ նախարարացն և ռամկացն Հոնաստանեայց գալ յերկրպագութիւն պաշտաման սրբոյ եկեղեցւոյ, և լսել զպատգամս աստուածայինս։ Որոց անդէն ժողովեալք այնուհետև տէրունական տունն, իշխանն և աշխարհաւ ումբ բանակն խնդրէին լսել բանս յեպիսկոպոսէն և ասէին ցմիմեանս. «Եկա՛յք լուարո՛ւք ի սմանէ բանս մխիթարութեան, զի սա է առաջնորդ սուրբ հաւատոց քրիստոնէից, որ աւանդէ աշխարհի զպատգամս հոգւոյն սրբոյ»։

Ապա իբրև տեսանէր զյօժարամտութիւն նոցա և զմտադիւր ունկնդրութիւնն, սկսաւ ճառել նոցա ի վարդապետութենէ Գրոց աստուածայնոց և ասէ. «Որդեակք, դարձարո՛ւք առ տէր և ծաներո՛ւք զտէր Աստուած, զի ողորմեսցի և կեցուսցէ զձեզ. զի նա ինքն է տէր և արարիչ ամենայնի։ Ի բա՛ց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունսդ, մի՛ մատուցանէք երկրպագութիւն արարածոց, զի սատանայական է ամենայնդ և կորուսիչ հոգւոց։ Զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, և ո՛չ ոք կարէ զբաժակն տեառն ըմպել և զբաժակն դիւաց, և չիք հնար ի սեղանոյ տեառն վայելել և ի սեղանոյ դիւաց։ Այլ զգիտութեան և զանգիտութեան մեղս ձեր մի՛ յիշեսցէ Աստուած, այլ արկցէ զձեզ ի բովս գիտութեան և ի խրատ ար-

---

1 bcelr խորհուրդ km չիք որոց cr ի նկատել

2 agkmw արեգակն d արեգական h զարեգակն

3—4 bcelr արդ փխ որ km զորս km զայնպիսի փխ զայն ևս a չարէաց aw պաշտամունսն adhmw զկռակործանող g զկռակործանօղ adghkmw չիք անուղղայ bcr անուղղա km սովորութիւնսն d սովորութեան b զցայք

5 d դարձցի bcelr հնարս adghkmw մարթասցի

6 g ապայ adghkmw ժամ ի հրամանէ լինէր (w չիք լինէր ըստ ճրատարակչի որոշեալ d չես փխ լինէր) h լսէր

7—8 klm և ռամկաց d հայաստանեաց bcelr հոնաստանեացն aghw հոնաստանեաց h երկրպագութիւն a եկեղէցւոյ bcr եկեղեցոյ w չիք պատգամս w չիք աստուածայինս... խնդրէին (տ. 10)

9—10 bcdelr անդէն և անդ (l անտ) chr տօնն փխ տունն clr աշխարհաժողով cer խնդրէր bl խնդրել km զբանս a յէպիսկոպոսէն h եպիսկոպոսէն l անեն փխ ասէին

11 km լուիցուք cr բան ab սայ

12—13 k հաւատոյ bcelr հաւատոցն bcelr քրիստոնէութեան r զպարգև փխ զպատգամս cr հոգոյն

14—15 g ապայ d ունկնդրութիւն adghkmw վարդապետական գիտութենէ gkm զվարդապետական a գիտութէնէ d գիտութեան k գիտութենէն

16 km ասէր adghkmw չիք առ տէր

17 d կեցուցցէ bcelr չիք և արարիչ

19 cr զամենայնդ km այդ blr սատակիչ փխ կորուսիչ

20—21 m հոգւոյ bl չիք հոգւոց b զի և ոչ ոք abcdegmw տէրանց adchkmw զբաժակ abcdr ըմբել adghkmw զբաժակ b դիւց h տեղանոյ փխ սեղանոյ ah վայելեալ d վայելեալք r չիք վայելել

22 h զսեղանոյ d գիտութեամբ

*դարութեան։ Որ լուսաւորեաց իսկ զամենայն տիեզերս աստուածընկալ աւազանաւն և մերժեալ զմէգ և զմառախուղ ի խաւարչական ազգացն հեթանոսաց՝ ծագելով ի նոսա զհաւատոյ ճշմարտութեան լոյս. նոյնպէս և զձեզ լուսաւորեացէ իւրով ճառագայթարձակ շնորհօքն, միայն թէ զանձինս ձեր մատուցիք առաջի աստուածութեանն՝ աներկեան մտօք, սիրով՝ արմատացեալք և հաստատեալք ի փառս աստուածորդւոյն՝ խոստովանութեամբ սրբոյ երրորդութեանն հաւատացէք։ Զի և անմարմին զինուորութիւնքն սրբասաց ձայնիւ, երրորդական բարբառով աղաղակեն՝ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք նորա»։ Տեսանե՛ս զերից անձնաւորութեանցն և զմի աստուածութեանն Զօրութիւն, որպէս և յառաջընծայ աւանդեցին մեզ աստուածազան առաքեալքն և խոստովանողն Քրիստոսի Գրիգորիոս, թէ հայր յանձնէ որդի ի հօրէ, հոգին սուրբ ի նոցունց էութենէ։ Եւ լի է ամենայն երկիր փառօք նորա, այսինքն է քարոզութիւն աւետարանին. ըստ փրկչական բանին ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, որ ելից, տարածեցաւ ընդ տիեզերս ըստ սաղմոսին ձայնի, թէ՝ «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նորա, և մինչև ի ծագս աշխարհի են խօսք նորա»։ Եւ միւս մարգարէն ասէ. «Լցաւ երկիր գիտութեամբ տեառն, որպէս զջուրս բազումս, որ ծածկեն զծովս»։*

*Ահաւադիկ տեսանեմք այսօր, զի և ի ձեզ թագաւորի աստուածային բանն և ծաւալեալ արդիւնանայ յանդաստանս սրտից ձերոց որպէս բազ-*

---

*1* km չիք *իսկ*

*2* b *աւազանին* blr *մերժեաց* w *մառախուղ*

*3* km *ծագեաց* bcelr *զհաւատս* d *զհաւատոց* km *ճշմարտութեանն* bcelr չիք *լոյս*

*4* gk *իւրովք*

*5* bd *աստուածութեան* a *անէրկեւան*

*6* bcr *աստուածորդւոյն*

*7* dw *սուրբ*

*8* bcelr *ձայնիւ* m *երգչական ձայնիւ* k *երրորդական ձայնիւ* bceklmr չիք *երրորդական բարբառով* c *աղաղակէն* bl չիք *ասելով*

*9* bghklmr *լի են*

*10—11* a *չէրից* dw *անձնաւորութեանց* g *անձնաւորութեանն* km *անձնաւորութեան* adhkw *զմիաստուածութեան զօրութիւնն* (dk *զօրութիւն*) h *զօրութեանն* a *յառաջընձայ* b *ընծա* (չիք *առաջ*) b *յաւանդեցին* l *աստուածա*

*12* gl *խոստովանօղն* adghkmw չիք *քրիստոսի* w *գրիգոր* h *անձնէ*

*13* bcelr *նոցուն* ah *յէութէնէ* dgkw *յէութենէ* h չիք *և* bcelr չիք *է*

*14* bcelr *փրկչին* cr չիք *ի*

*15* a *էլից տարածէցաւ*

*16* k *սաղմոսի* m *սաղմոսողի* h չիք *ընդ* km *ձայնին* d *եթէ* adghkmw *նոցա* փխ *նորա* acdegkmw չիք *և*

*17* bcelr չիք *են* d *փառք* փխ *խօսք* hkm *նոցա* փխ *նորա*

*18* bcelr *իբրև* gkm *որք* d *զծով*

*20—21* crw *ահաւասիկ* adghkmw չիք *և* adghkmw *ընծայեալ* (a *ընձայեալ*) h *տպաւորի բան* adgkmw *բանն* (w *բանին*) *ի վարդապետութիւն* (kw չիք *ի* kw *վարդապետութեան*) h *աստուածային ի վարդապետութիւն* ahhkw *յանդաստան* h *արդինանայ* d *մերոց* փխ *ձերոց* km *որ* փխ *որպէս* adg *ուր*

մաքեղուն խայրի ընծայելով ի ձեռն ճարտարապետ մշակացն հարիւրաւոր, վաթսունաւոր և երեսնաւոր։ Արդ՝ այդչափ քաջապտղութիւն ի ձեզ լինելով՝ զի՞ հարկաւորիք մահացան թոշնոյն մուտ առնել յողջախոհ և ի ծաղկազարդ ձերոց մտացդ անդաստան. ո՞չ գիտէք եթէ նախահայրն մեր Ադամ սակս սորա ելեալ ի դրախտէն զփշաբեր և զտատասկածին ժառանգէր երկիր։ Զորոյ և առաքեալն ամբաստանէ, թէ՝ «Անօրէն իշխանն յորժամ աստուածանալ կամեցաւ՝ ձեռն արկանէր և զամենայն մարդիկ մեզօք կապէր։ Որ և նախանձաբեկ եղեալ առ ի մախանս նախաստեղծին՝ ի ներհակային յորդորելով ախտս, ածեալ ի հրապուրանս խարդախութեան զԿայէնն անօրէն սպանանել զեղբայրն. վասն այնր սպանութեան ամենայն մարմնական ախտից, երերմանց և նզովից սերմանց լինէր հայր ինքն և ամենայն ազգ իւր թշուառական»։ Որպէս և ասէ իսկ ի Ծննդոց պատմութեանն, թէ՝ և էառ իւր Ղամէք երկուս կանայս, թէ՝ և Յոբաղ՝ որդին Ղամեքայ եհան զերգս և զքնարս, մանաւանդ թէ զփողս և զտաւիղս և զթմբուկս և զամենայն ձայն արուեստական, որ են յօրինիչք կռապաշտութեան և յորդորիչք իգամոլ ախտից. զոր և Նաբուգոդոնոսոր յայն հրաւիրելով ձայնս զմետասան խեղայեղ կաճառսն կոչէր ի կռապաշտութիւն, անարի, ոսկիաստեղծ անդրւոյն զոհարան ձօնէր, նմա նուիրական տօն լինել տեսարանին։ Տեսանե՞ս զանօպայ չարութիւնն դիւամոլ ազգին Կայենի։ Զի որպէս սպանումն ի սատանայէ էր, նոյնպէս և երկուս կանայս առնել և դաշնակաւոր նուագս յօրինել լինէր ի նորին բանսարկուին ուս-

---

*1* w խայրիս c երախայրի (ճետո ե-ն ջնջված) r երախայրի c ընծաելով ghkm մշակաց km զհարիւրաւոր

*2* km զվաթսնաւոր և զերեսնաւոր bcelr այդքան bcelr քաջապտղութեան

*3* adghkmw մահացու h թռչնոցն adgw մօտ adgw ողջախոհ adgw չիք ի

*4* cr ձերոցդ km մտաց ձերոց adghw մտաց m յանդաստանս h անդանտան a եթե

*5—6* bcelr երկիր ժառանգէր km զերկիր gkm զորմէ bcelr եթէ

*7—11* bcelr ձեռնարկէր cdhr մարդիկք g մարդիք bcelr կապել adghkmw ի պատիւ km ներհակայինս adghkmw յորդորել adghkmw ածել adghkmw հրապոյրս adghkmw խարդախութեան սպանութեան (a սպանութէ) b զկահեղն c զկաեն r զկահեն c մարմնականի և ամենայն (d զամենայն) մարմնական a էրէրմանց w երերման d բերմանց bcelr չիք և h չիք հայր

*12* h ինք bcelr ազգն g ազգք w ասի adgkm չիք ի

*13* aghkm պատմութիւնն d պատմութեան clr չիք և h թէ եառ իւր abcderw առ bl զամեք w և թէ bcelr և եթէ agkm յաւբաղ bcelr յովբաղ d որդի

*14* a զամէքայ al էհան a զէրգոց dghkmw զերգոց adghkmw քնարս (չիք և) cr թե b տաւիղս

*15* h թմբուկս b արուեստականաւոր են gklm որք k յօրինիչ

*16—17* bcelr յորդորիչ ahkm իգամոլ ab Նաբուքոդոնոսոր w Նաբոգոդոնոսոր d Նաբուգոտոնոսոր a հրաւիրէլով w ձայն adghw զմետազս ce զմետազն blr զմետազան km չիք զմետասան kmw խեյայեղեալ a խէղայեղեալ l խեղայեղ bcdegh խեղայեղեալ adghkmw չիք կաճառսն c կաճառն l կաճառեալսն clr չիք կոչէր clr կռապաշտութիւնս

*18* celr անդրիոցն b անդրիոց w անարւոյն d անդրոյն

*19* l լինիլ adghw լինել (g լինիլ) նմա km լինէր նմա a տէսանել ghkm տեսանել փխ տեսանես aghkw զանօպառ bcr զանօպա d չարութիւն

*20* b սպանայէ h կայենէ փխ սատանայէ bcelr չիք և km երկու

*21* w առնուլն adgkm առնուլ b և ի w յօրինելն adghkmw ի նորին (km ի նոյն) բանսարկուէն լինէր առ ոմանս

մանց, որ և անդէն իսկ ընկղմեալք ի շնութիւն և յալլանդակ միտս Սեթեան ազգին խառնակեցան ընդ դստերս Նզովից. և փոխանակ բարի խոստմանցն ած ի վերայ նոցա Աստուած զանձրևաստատ պատիժն և զհամաշխարհական կատարածն։ Եւ Նոյ քանզի յարդարացեալ տոհմէն արդար գտաւ յազգին յայնմիկ ի ձեռն հաւատարիմ սրբութեանն իւրոյ, հրամանաւ Աստուծոյ պահեալ լինէր իւրայնովքն հանդերձ ի ջրահեղձ պատուհասէն։ Այսպէս յարգոյ է և պատուական հաւատք և սրբութիւնք։

Ահա և Քանան անիծաւ յաղագս ծաղրական ժպրհութեանն Քամայ ըստ բանի պատմութեանն, «Եթէ անիծեալ լիցի Քանան մանուկ և եղիցի ծառայ եղբարց իւրոց»։ Տեսանեմք զի յազգէ նորա ելեալ Նեբրովթ սկայ, որ դիւցազնային կախարդութեամբ զբոլորս հրապուրէր ազինս աշտարակաշէն առնել քարակոյտս. և ինքն ամբարտաւանեալ ամբարհաւաճութեամբ յաղագս յաղթանդամ տեսակին և սկայազօր մեծութեանն՝ թագաւորէր ի վերայ ամենեցուն, որպէս և գրեալ է. «Եթէ եղև սկիզբն թագաւորութեան նորա ի Բաբելովն»։ Նա և յետ այնորիկ յետ կործանման աշտարակին աշխարհաշէն և խառնափնդոր լեզուացն, լուաք մեք ի ժամանակագիր պատմութենէ ոմանց, եթէ աստուածոց նմանեցուցեալ զինքն Նեբրովթայ՝ ամբարտաւանեալ հպարտանայր, մինչև զպատկերն իւր անդրիագործ ճարտարաց ոսկիապաճոյճ նկարօք քանդակել հրամայէր յարծաթս

---

*1* adghkmw որ (km որք) փխ որ և d անդրէն d ընկալեալք փխ ընկղմեալք km շնութիւնս c այլանդակ g յայլանդակս a սէթեան

*2—3* a խառնակէցան l և խառնակեցան h կառնակեցան adghkmw բարւոյ bcelr խոստմանց gkm ածէ l էած a վէրայ w չիք նոցա cr անձրևաստատ

*4* b արդարացեալ

*5—6* l յազգէն dw սրբութեան g մաքրութեան km մաքրութեանն l հրամանաւն adgh լինէր նա a իւրայաւքն g իւրայնօքն bcelr իւրայովքն h իւրայօք a ջրահէղձ bcelr ջրայեղց

*7* g յայպիսի bcder այնպէս h այսպիսի a յարգո k արգոյ dghmw յարգոյ փխ յարգոյ է agh ի պատուական է km պատուական են l հաւատ bcerw սրբութիւն

*8* bcelr ծաղրակատակ ժտութեանն abcr քամա

*9* d պատմութեան a եթե bcelmr թէ bcelr չիք լիցի

*10* k իւրոյ a տէսանեմք bcelr և տեսանեմք h յեղբարց bcelr զի ահա h յազգ էր a ելէալ a Նէբրովգ h Նեբրովգ dgkm հսկայ

*11—13* aghkm դիւցազնէին adghw բոլորական b աշտարակաշէնս bcelr կարիկարս km քարակոյտ adghkmw չիք ամբարտաւանեալ adghkmw ամբարհաւաճեալ b սկաազօր gkm հսկայազօր a մեծութէն d մեծութեամբ

*14—17* a վէրայ ամէնեցուն a եթե bclmr թէ adghkmw նորա թագաւորութեանն (dk թագաւորութեան) a բաբէլովն bgl բաբիլօն ckmr բաբելոն h բաբիլովն km չիք յետ այնորիկ a յէտ կործանման km կործանմանն bcelr աշխարհաշէն աշտարակին km չիք աշխարհաշէն bceklr խառնարնդոր h խառնափնտոր bceklr ժամանակակիր a պատմութէնէ w պատմութեանց cdr պատմութեան agw յոմանց a էթէ bcelr թէ h չաստուածոց a նմանէցուցեալ adghkw Նեբրովդայ

*18* h ամբարտաւանել l և ամբարտաւանեալ a անբարտաւանէալ

*19* bcelr յոսկիապաճոյճ d ոսկեպաճոյճ adghkmw նկարիւք abdh քանդակեալ d արծաթս

*կամ ի պղինձս՝ անուն կոչելով ինքեան նկարագրին։ Որոց բազում ազգս մոլորեալք նուիրական ձօնիւք զոհս մատուցանէին առաջի այնր պատկերին, որպէս և այժմ իսկ ահա տեսանեմք, զձեզ զի յողդողդամիտ և առասպելակոծ մրցանօք յածիք այսր անդր ընդ անկոխ ճանապարհն խաբէութեամբ կախարդասար վհկաց և գետնակոչ քաւդէից և Ասպանդիատայ ումեմն վայրագ սկայի ձիովք այրեցելովք զոհ մատուցանէք. և զայն ոչ մարթէք գիտել, թէ անմաքրոցն սիրող զի՞րդ լինիցի սուրբ։ Զի որպէս զոհարանքն անմաքուր ՚ա պիղծ են, այնպէս գարշելի և պիղծ են առաջի Աստուծոյ ամենեքեան, որ Ասպանդիատայն մատուցանեն պաշտօն՝ ըստ գրեցելումն, եթէ՝ «Պիղծ է առաջի տեառն ամենայն անօրէն և ընդ արդարս ոչ ունի հաղորդութիւն»։ Նոյնպէս և եթերացայտ կայծականց, որ ի ձայնից որոտմանց փայլատակէ,* Աստուած *կարդացեալ՝* փրկիչ *անուանէք։ Եւ զիա՞րդ ոչ իմանայք, ով անոպայ մտացիք, եթէ վեցամսեայ ժամանակաւ, յորժամ ձմեռնայինն յուզէին ցրտոցն բռնութիւնք, ո՞ւր ուրեք երթեալ դադարեցին ամպայոյզ փայլատակմունքն և ձայնք որոտմանցն։ Ո՞չ ապաքէն յակնարկել արարչին մերոյ Աստուծոյ զփայլատակելն փայլատակեն, և ի հրամանէ նորա դադարեն զդադարելն և ոչ իշխեն երևել ի ձմեռնային ժամանակի։ Որով յայտ իսկ է, եթէ ոչ են աստուածք, այլ արարածք արարչին Աստուծոյ։ Եւ դուք յոյժ մոլորեալ էք՝*

---

1—2 km *և* փխ *կամ* d *անհաւան* փխ *անուն* d *նկարագրեան* l *նկարագրի* w *յորոց* adghkmw *ազգս մոլորեալս* dv *(երկու օրինակ)* *ձայնիւք* adghkmw *զոհ* adghkmw *պատկերի*

3 bcelr չիք *և* bcelr *տեսանեմ*

4 adghkmw չիք *ընդ* adghkmw *յանկոխ* km *ճանապարհս*

5—6 d *խաբէութեան* d *խարդախաւոր* a *գէտնակոչ* bcelr *քաղդէից* d *քօդէից* h *քօտէից* a *ասպանդեատա* dgkm *ասպանդետայ* bcelr *ասպանդիատելի* h *ասպանդետա* a *վայրս* ghkm *վայր* dgkm *հսկային* ah *սկային* bgw *ձիօք* dh *ձեօք* a *ձեաւք* a *էրէցելուք* d *այրեցելով* g *այրեցելօք* h *էրէցելօք*

7 d չիք *ոչ* c *մաղթէք* adghkmw *իմանայք* փխ *ոչ մարթէք գիտել* bcelr *անմաքրիցն* d *սիրողք*

8 bcelr *պիղծք* bcelr *այսպէս* k *նոյնպէս* d *և գարշելիք պիղծք*

9 a *ամէնէքեան* gkm *որք* km *ասպանդիայ* agh *ասպանտիային* bcdelr *սպանդիատային* d *մատուցանէին*

10 adghkmw *նուէրս* փխ *պաշտօն* bcelmr *թէ*

11 d չիք *ընդ* adghkmw *արդարն* g *հաղորդութիւնն* agh *եթերաց գետ* km *եթերայ գետ* փխ *եթերացայտ* l *եթէրացայտ*

12 adghkmw *ձայնէ* l *ձայից* bcelr *փայլատակէ յորոտմանցն* (l *որոտմանցն*)

13 abchr *անոպա* bcelr *թէ* a *եթե*

14 acr *վեցամսեա* bcelr *ժամանակօք* d *ձմեռային* km *ձմեռնայինք* c *յուզեցին* lr *յուզիցին* km *ցրտոց* d *ցրտոյն*

15 a *ուրէք* a *դադարեացեն* bcdeghkmrw *դադարեացին* ab *ամբայուզ* cr *ամպայուզ* d *ամբայոզ* gk *ամբայոյզ* v *ամպագոչ* km *փայլատակմունքզ* adghw *փայլատակմունք*

16 adghkmw *որոտմանց* d *յակնարկեալ* c *յաստուծոյ*

17 c *փայլատակին* d *փայլատակէին* d *առ ի* փխ *և ի* aghkmw *դադարին* abcdeghkmw չիք *զդադարելն*

18 ad *չիշխեն* h *ոչ ոք իշխեն* bcelr չիք *երևել* gkmw *երևիլ* bcelr *ժամանակին* d *որով իսկ է յայտ* a *եթե* bcelm *թէ*

19 acdelrw *արարած* km *աստուծոյ մերոյ* h *մերոյ և աստուծոյ* a *մոլորէալ*

ոչ լսելով զբանն զայն, եթէ «աստուածքն, որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն յերկրէ»։ Արդ՝ դուք ծաներո՛ւք և տեսէ՛ք, եթէ տէր Աստուած, որ նա միայն է ինքնութեամբ, և յառաջ քան զնա չիք որ, ինքն է արարիչ ամենայնի, որ երևի, և որ ոչն երևի։ Եւ որդին միածին Աստուած, որ ի Հօրէ ծնեալ, և Հոգին սուրբ, որ ի նոցունց յէութենէ, որով և աշխարհ եղև։

Մերկացարո՛ւք այսուհետև զհին մոլորութիւնն և զապականեալ կռապաշտութիւնն և նորոգեցարո՛ւք ի նորոգումն սրտից ձերոց առ ի ընտրել ձեզ զլաւն. զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհս փրկել զմեղաւորս, եկա՛յք դարձարո՛ւք առ նա ի ձեռն ապաշխարութեան։ Մի՛ երկրպագէք արեգական և լուսնի, այլ Աստուծոյ, որ զարեգակն և զլուսին արարեալ է և զերկինս և զերկիր և զծով և զամենայն, որ ի նոսա։ Զի որք արեգական և լուսնի երկիր պագանեն, բաժին է նոցա հուրն անշէջ։ Իսկ որ ջրոց զոհեն, իջցեն որպէս վէմս ի ջուրս բազումս։ Իսկ որ ձօնեն զվարսաւոր ծառս՝ նուէրս նոցա մատուցանելով, այսպէս ասէ վասն նոցա աստուածային Գիր, եթէ՝ «Հուր վառեսցի ի վերայ ամենայն փայտի ագարակի և կերիցէ զամենայն ամբարիշտս և մի՛ շիջցի»։ Իսկ որք կապեալ ունեն յանձինս իւրեանց զպատկեր վիշապ օձին ոսկեղէն կամ արծաթեղէն, վասն նոցա ասէ Գիր. «Արծաթ նոցա և ոսկի մի՛ կարասցեն փրկել զնոսա յաւուր բարկութեան տեառն, որ կարողն է բառնալ զբեռինս ծանունս զտանջանաց և զգեհեննին յաւիտենից դիմադարձացն մեղաւորաց, որ իբրև զհեթանոսս իջեն

---

1 a լսէլով m թէ h զաստուած a զէրկինս a զէրկիր h ոչ արար

2 a կորիցէն յերկրէ adghkmw այլ փխ արդ cd չիք դուք a ծանէրուք a եթե h չիք եթէ տէր աստուած mk նա է, որ միայն

3 bcelr չիք է

4 gl որք h չիք ամենայնի bceklm երևին bcehlm ոչ bcelr բայց փխ և b չիք աստուած

5 bcelr հոգի (l հոգին) ի նորին փխ հոգին սուրբ որ ի նոցունց bcelr էութենէն a յէութէնէ bcelr չիք և blr եղև աշխարհ

7—8 d մոլորութիւն km մոլորութիւնսն adghkmw չիք և զապականեալ կռապաշտութիւնն bcelr նորոգութիւն մտաց clr առ ի յընտրել b ընդրել

9 c լաւն w յիսուս քրիստոս clr չիք յիսուս b չիք եկն յաշխարհս w յաշխարհ m ի փրկել

10 cr երկիր պագէք k երկրպագանէք

11 cm զլուսինն

12 bceir չիք և$^2$ g զծօվ d զծով և զցամաք և զամենայն ինչ adgw է զի

13 dk երկրպագանեն gkm որք d ջրոցն d զոհէին

14 dgkm զվէմս c զվարսաւորս km վարսաւոր km ծառոց bc նուէրս

15 adghkmw չիք նոցա dкmw գիրն a եթե bcelr թէ

16 bcelr չիք հուր bcelr վառեցաւ km չիք և

17 adghkmw շիջցէ bcdkmr որ gk յանձին km չիք իւրեանց

18 adgkmw զպատկերս cr ոսկեղեն կամ արծաթեղեն m գիրն

19 adghkmw կարասցէ r բարկութեանն

20 br կարող է g կարօղն է l կարօղ է km չիք և

21 w դիմադարձիցն bcelr դիմադարձայց gkm որք ah զհեթանոս b չիք իջեն

*ամբարիշտք»։ Զայս և առաւել քան զոյն խօսեցաւ մեծ քահանայապետն Աստուծոյ Իսրայէլ։*

## ԳԼՈՒԽ ԽԱ

### Հաւատալն Հոնաց ի Քրիստոս ի ձեռն եպիսկոպոսին Իսրայելի, և կործանումն զոհարանացն և կանգնել խաչին Քրիստոսի

*Քանզի յորդորեալ էին յոյժ յունկնդրութիւն բանից առնն Աստուծոյ բարեմիտ իշխանն մեծազահ Ալփիլութուէր մեծամեծօքն հանդերձ և աշխարհախումբ բանակօքն, որոց ախորժաբար լուեալ զծաղկազարդ նորա վարդապետութիւնն և զքաղցրուսոյց խրատն, փառաւոր առնէին զԱստուած և ասէին. «Արդ՝ հաւատամք ճշմարտութեամբ, եթէ առաքեաց տէր ի ձեռն սորա զմխիթարութիւն շնորհաց իւրոց առ մեզ, զի այրեցուցէ զմեզ ի խաւարային գործոց և յամենայն սատանայական գնացից»։*

*Ապա այնուհետև մխիթարութեամբ հնազանդեցուցեալ զանձինս միամտութեամբ լծոյ ծառայութեանն Քրիստոսի՝ սրբութեամբ և պարկեշտութեամբ զարդարէին զանձինս ի պաշտօն քառասներորդացն պահօք և աղօթիւք զցայգ և զցերեկ ըստ հոգևոր նախանձուն այր քան զընկեր փութային յերկրպագութիւն սրբոյ եկեղեցւոյն՝ մոռանալով զառաջին որկորրստութեանն մոլորութիւնն. զայն ևս շնորհօք լուսատու խրատու սրբոյ եպիսկոպոսին ի բաց քերեալ ի մտաց նոցա։ Երագ երագ՝ հնազանդելով հրամանի սրբոյ եպիսկոպոսին, վաղվաղակի յանձն առնոյր սատուածա-*

1 adgkmw *աւելի* bc *քահանայապէտն*

2 adghkmw չիք *աստուծոյ* a *իէղ*

3 abcehlrw չիք *գլուխ* b *խ*

4 a *էպիսկոպոսին* al *իղի* cdrw *իսրայէլի* g *իսրայիլի*

5 kl *զոհարանաց* a *կանգնեալ* d *կանգնեալն* l *կանգնիլ*

6 l *յորդորեալք* bcelr *բանին* bcelr չիք *առնն* h *յառնն*

7—8 w *աղբիչութուէլ* bcer *ալփիլութուէր* agkm *աղփիղութուեր* h *աղլիեղութուէր* adghkmw չիք *մեծամեծօքն հանդերձ և աշխարհախումբ* km *հանդերձ բանակօքն*

9 cr *նոր վայելչութիւն նորա վարդապետութիւնն* d *վարդապետութիւն* bcelr *զխրատն* b *և փառաւոր* a *առնեին*

10 a *ասեին* a *եթե* bcelr *թէ*

11—13 b *այրացուցէ* l *այրեցուցէ* g *ամենայն* bcelr *պաշտամանց* փխ *գնացից*

13 g *ապայ* bcelrw չիք *մխիթարութեամբ*

14 b *միաբանութեամբ* adghkmw չիք *միամտութեամբ* km *քաղցրութեանն* փխ *ծառայութեանն* d *աստուածպաշտութեամբ* փխ *պարկեշտութեամբ*

15 adghkmw *զպահս* փխ *զանձինս ի պահս* g *քառասներորդացն* km *քառասներորդականս*

16 adghkmw չիք *ըստ* adgkmw *նախանձու* km *այր քան զայր*

17—20 h *երկրպագութիւն* a *եկեղէցւոյն* bcr *եկեղեցոյն* bcekrw *որկորստութեան* d *որկորստեան* bcr *սովորութիւնն* el *սովորութիւն* փխ *մոլորութիւնն* adgkmw *մոլորութիւնն* (gkm *մոլորութիւն*) *զայն ևս* (k *և այն* m *զայն* փխ *զայն ևս*) *շնորհօք լուսատու խրատու* (km *խրատուց*) *սրբոյ եպիսկոպոսին ի բաց քերել* (a *քէրել* h *բերել* w *քերեալ*) *ի մտաց նոցա* (km չիք *ի բաց քերել ի մտաց նոցա*) kmw չիք *երագ երագ* clr *արագ արագ* w չիք *հնազանդելով հրամանի եպիսկոպոսին* km *որոյ հրամանին հնազանդելով* (չիք *սրբոյ եպիսկոպոսին վաղվաղակի*) a *հրամի* adgh *նորա* փխ *սրբոյ եպիսկոպոսին*

*սէր իշխանն իւրով մօտակաց մերձակայիւքն զեօթանեսին եօթներորդսն ամի ամի սրբութեամբ կատարել. զի ինքն էր բարեմիտ այր յոյժ։ Նոյնժամայն հրամանակատար լինէր աստուածային պատուիրանին՝ կարգելով զինքն բարեպաշտ, հալածականս առնէր զորդիսն խաւարի։*

*Այսպէս հաւատացեալ լուսափայլ վարդապետութեան նորա՝ օր ըստ օրէ պայծառանայր սիրովն Քրիստոսի՝ ասպնջական ցանկալի սուրբ հաւատոցն լինելով. յաշխարհածնունդ հայրենեացն որդի զտանիւր շնորհացն Աստուծոյ մերձաւոր կենարար կենացն լինելով։ Այլ և ինքն ուժով պնդութեամբ հարստութեանն քաջ և անուանի եղեալ ի մարտ պատերազմաց, (որպէս Ուղումպ ազգք Յունաց հզօր երևեալ առ ամենեսեան (պհոյակապ քաջութեանն անուն ժառանգէր՝ բազում գործս արութեան ցուցեալ և անդ ի Թուրքաստանին առ Խազր խաքանին։ Վասն որոյ հարկաւորեալ ի սէր նորա խաքանայ տայ զդուստր իւր նմա կնութեան, և ինքն զլիթուերութեանն բերելով պատիւ՝ փառաւորեալ լինէր ի մէջ երից աշխարհաց, քանզի իբրև զպսակ պարծանաց ընդունէր զխրատն ի լուսաւոր վարդապետութենէ եպիսկոպոսին։ Առ սակաւ սակաւ ջանայր խափանել ի վերայ մեռելոցն զմոլեկան լալիսն և զդիւական սրակոծութիւնսն՝ զարշելի և պիղծ համարելով զհայրենի պաշտամունս, ուխտէր առ ամենեսեան զԱսպանդիատայ զզոհարանսն և զայլոց չաստուածոցն խափանել*

---

*1* w *մօտակայ* r չիք *մօտակաց* km *սուրհանդակաւն* adghw *սուրհանդակովն* փխ *մերձակայիւքն* a *զէւթաննեսին* cr *զեւթաննեսին* d *զեօթանասնեսին* a *էաւթներորդսն* cr *եւթներորդսն* d *եօթներորդի*

*2—4* d *սրբութեան* bcelr չիք *զի... յոյժ* a *բարէմիտ* km *և նոյն ժամայն* bcelr *առ ժամայն* bcelr *պատուիրանաց* bceklmr չիք *կարգելով զինքն բարեպաշտ* d *զորդոն*

*5* bcelr չիք *այսպէս... նորա* km չիք *այսպէս* m *վարդապետութեանն* k չիք *նորա* acr *օրստօրէ*

*6—8* bcelr չիք *սուրբ* l *հաւատոցն և մերձաւոր կենաւոր կենացն* bcer չիք *լինելով... և ինքն (տ. 8)* km *զտանէր* k *շնորհօքն* km չիք *մերձաւոր ...և ինքն* a *կէնաց* d *կենաց* l չիք *և ինքն* h *կենացն աստուծոյ* adghw *և ինքն այլ* փխ *այլ և ինքն*

*9* b *հարստութեան* d *հաստատութեամբ* km *հարստութեամբ* k *եղեալ էր* k *մարտս* a *պատէրազմաց*

*10—11* bcelr չիք *որպէս... ամենեսեան* w *յուղումպ* d *ռումբ* m *զոլիմպ* k *զոլիւմպ* d *ազգ* km *ազգն* d *հոնաց* cr *զհոակապ* bcdeklr *քաջութեան* m *քաջութեամբ* km *զի բազում* bcelr *գործ*

*12* bceklmr չիք *և անդ* h *անտ* d չիք *ի* d *զԹուրքաստանսն* km *Թուրքաստանի* aghw *Թուրքաստանսն* h *խազիականին* w *խազրականին* km *խազրիականն* adg *խազրիականին* փխ *խազր խաքանին* bcelr *խականին* km *և* փխ *վասն որոյ*

*13* adghkmw *ի սէր իւր* (d չիք *իւր*) *զրաւել* (dkw *զրաւեալ*) *զնա խոստանայ* (km *տայ*) *հարկաւորեալ* (h *խոստանայր*) (km չիք *հարկաւորեալ*) bcr *խաքանա տա* h *տայր* m *զդուստրն* d չիք *իւր* l *ի կնութեան* m *ի կնութիւն* h *կնութիւն*

*14—15* l *զլիթուէրութեանն* adghkmw *ի ծերութեանն* l *զպատիւ* adghkw *աշխարհացն* bcelr *և քանզի* km չիք *քանզի* a *պարծան* m *զխրատ* k *խրատն* km չիք *ի*

*16* a *վարդապետութէնէ* km *վարդապետութեան* a *էպիսկոպոսին*

*17* bcelr չիք *ի վերայ* m *զի ի վերայ* m *մեռելոց* w *զդիւթական* d *զդիւտական* h *զդիական* d *սրակոծութեան* v *սրագործութիւն* aghkmw *սրակոծութիւնն*

*18* bcelr *զհայրենեացն* aghkmw *պաշտամունսն* adgkmw չիք *ուխտէր... զզոհարանսն (տ. 19)*

*19* bcr *զասպանդիատա* km *խափանէր* km *ի* փխ *և*

զնուէրս և պաշտել զԱստուած կենդանի՝ զարարիչն երկնի և երկրի, և զորդին միածին, և զՀոգին Համագոր։ Եւ զամենայն յաւելուածս չարեաց Հերքելով ի բաց ի մտաց իւրոց, իբրև զորդի ծնեալ մանուկ անխարդախ կաթինն փափագէր։ Շինէր ի տեղիս տեղիս եկեղեցիս և մեծացուցանէր զպատիւ քաՀանայիցն Աստուծոյ։ Քանզի ի վարսաւոր ծառոցն կաղնեաց բարձրագունից, զորս ձօնեալ էին Ասպանդիատայ զարշելոյ առ ի զոՀս մատուցանելոյ նմա ձիովք, զորոց զարիւնն Հեղուին զծառովքն և զգլուխն և զկաշին արկանէին զոստովք ծառոցն, Հրամայէր եպիսկոպոսն Հատանել զմի ի նոցանէ, որ գլուխ և մայրն էր ամենայն ծառոցն բարձրագունից, ձօնելոցն յանուն դիցն սնոտեաց, զոր պաշտէին յոգունքք աշխարՀն Հոնաց, իշխանն և ազատքն ամենայն, զի Համարէին զնա աստուածոց փրկիչ և կեցուցիչ և տուող ամենայն բարեաց։ Եւ իբրև լսէին զայն, թէ Հրամայէր Հատանել զսկայաձիր դիւցազանց ծառն, որով զայթակղեալ և կործանեալ էին ամենեքեան զճիչ բարձեալ, զօձիս Հարեալ ի ձայն բարձր աղաղակէին կախարդքն և քուրմքեայքն, վՀուկքն և քրմապետքն Հանդերձ ռամկօքն առ իշխանն Հոնաց և առ մեծամեծսն աշխարՀին և ասէին. եթէ՝ «Զիարդ մարթէք և իմանայք և գիտէք առնել զայդ, զոր Հակառակորդն մեր և թշնամի աստուածոցն մերոց ասէ ընդ ձեզ Հատանել զծառն զայն։ Եւ ընդէ՞ր իւր բնաւ անսայք նմա և լսէք քանդել և աւերել, կործանել զբագինս մեՀենաց մերոց, զոր Հարքն ձեր կանգնեցին՝ թագաւորք և իշխանք, և աշխարՀս մեր բոլորովին պաշտեցին մինչև ցայժմ և դտին զպարգևս

---

2—3 bcelr չիք և զամենայն ... փափագէր (տ. 4) km չիք և$^{2}$ (տ. 2) adghw չարեաց իւրոց km ի բաց Հերքելով km չիք իւրոց dgh իւրեանց a զարդի

4 h կաթին l և շինէր km զեկեղեցիս

5 ahmw քաՀանայից km և քանզի abceglmrw չիք ի klm ծառոց aghl կաղնեացն

6 a բարձրագոյնից w բարձրագուից ghw ձօնեալն էր d ձօնեալ էր a չիք էին a ասպանդիատա cer ասպանդիատայի bl սպանդիատայ abcdhr զարշելոյ

7 w մատուցանել a ձիեաւք dgw ձիօք h ձիեօք clr զարիւն km զծառովք a զծառաւքն bdhw զծառօքն

8 a էպիսկոպոսն

9 km զմին km չիք ի նոցանէ bl գլուխն km մայր km այլ ամենայն km ծառոց bcelr բարձրագունիցն km չիք բարձրագունից ... ազատքն (տ. 11)

10 d ձօնելոց bcelr զրօշելոցն abclr յոգումբք w յոգունք h յոգումք w յաշխարՀի h յաշխարՀն

11 km և փխ ամենայն զի a Համարեին ghm չաստուածոցն adkw աստուածոցն

12 gl տուօղ d պտուղ km չիք և a լսեին km չիք զայն bl եթէ

13 cr Հրամաէ bel Հրամայէ km զՀսկայաձիր bcer զսկաձիր h զսկաՀաձիր bc դիւցազանցն adghw զայթակղեալք

14 aghkm էին ի կործանել (km ի կործանումն) ամենեցուն km ճիչ klm և զօձիս

